

ՀԱՄԱՍ

ԲՈՐՅԱԿԻՏԱԿԻԹԻԿԻՆ

Պ. Ե. Յ.

ԱՐԵՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԵՎԱՆԻ

ՄԻԱԲԱՆ ԱՐԵՎԱՆ Էջմիածնէ,

Ի ՎԱՐԳԱԿԱՆ

Ի ՑՈՒՐԱՐԴԻ ԱՐԵՎԱՆ ԿՈԹՈՒԵՂԻԿ Էջմիածնէ

Ա. Յ. Պ. — 1885

ԱԿՐԿ

468

3

ԱԿՐՈՒ
468 ար.

ՀԱՄԱՐԾ

ԲԱՐՁՐԱԴԻՑՈՒԹԻՒՆ

Գ Բ Ե Յ

ԽԵՐՎԱՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԵՐԱՏԵԱՆ



Ի ՎԱՂԱՐԺԱՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԵԿԻ Էջմիածնի

0-31-7 — 1885

Յ Ե Ա Խ Ա Հ

Մ Ա Պ Ա Տ Ի Ք Ա Յ Ո Ւ Թ Ա

8 4 4 4

ՀՐԱՄԱՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ֆ. Ֆ. ՄԱԿԱՐՅԱՆ

ՍՐԲԱԶԴՅԱՆ ԳՈՅՆԻ ԿԱՐԱՎԱԿԻՆՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Վայսական պարունակություն գումար 468-2009

(4436)
8841 | P.18-0

Խ Ա Հ

Ի ՑԻՇԱՏԱԿ

ՀԱՅԱՏԻՍԱԿԱՐ ՕԵՄԱՆ

Տ. Տ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԵՂՋՈՐ ԵԽ ԸՐԺԵՆԵՐԵՑԻ ԿՐԹՈՒՎԱԿՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն-ԵԵ

ՀԵՂԻՆԱԿԵ

ՎԱՐԴԱՏԱՑ 4

ԺԱՄՅՈ ԳՈՎԱՐԵՐԵՄՆ

ՅՈՒԹՈՒ - 2 - 2

ՊԱՐԵՎՈՅ ԿԱՐԵՎՈՅ Ա Ա Ա Փ Ա Վ

ՅԱՅԻ ՎՈՅՎՈՅ

ՀՀՀՀ

ՀՐԱՄԱՆ

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Թէ որ մարդկութիւնը կատարեալ աստիճանին
հասցնելու համար հարկաւոր են ուսմոնքներ՝ գլո-
խաւորը համարվում է բարոյագիտութիւնը. վասն
զի բարոյագիտութիւնն է միայն, որ ուսուցանելով
մարդուն վարուց և բարուց ուղղութեան և սրբու-
թեան մէջ պահելու կանոնները՝ կատարելագործում
և աղնուացնում է նորա բնութիւնը, որով և առաջ-
նորդում է նրան հասանել այն նպատակն որի հա-
մար ստեղծուած է, և որին ինքնին բնածին ցան-
կութեամբ ձգտումն ունի:

Այս ուսման գլխաւոր օգուտը ամեն ազգեր ձա-
նաշելով՝ ամեն ջանք ի գործ են գնում՝ մարդկու-
թեան մատաղ սերունդը սորանով կրթել և դաս-
տիարակել՝ նոցա միաբը լուսաւորելով այն բարոյա-
կան սկզբունքներովը, որ կատարեալ մարդկութիւնը
պահանջում է:

Տարակոյս չը կայ, որ մեր ազգն ևս նոյն ցանկու-
թիւնը ունի և նշյն բաղձանքով վառուած է ման-
կանց կրթութեան գործում, քաջ գիտենալով, որ
մարդը նորանով է մարդ, և այն մարդն է առաւել
աղնի. կոչուելու արժանի, որ բարոյականութեամբ

զարգացած է և գիտէ աղնուութեամբ կենցաղա-
վարել:

Ազգային այս բաղձանքը ունենալով և մենք ձեռք
առինք դրել այս փոքրիկ աշխատութիւնը յատկա-
պէս մասնուկ տղայոց համար, որպէս զի մասամբ
իւրի նպաստած լինինք նոցա բարյական կրթութեան
և մարդկութեան կատարելու թեամբք զարդանստուն:

Այս աշխատութեանս մէջ չընայելով բարյագիւ-
տութեան ընդարձակ օրէնքներին և նոցա բայցա-
սըրութեանցը, մանք ընտրեցինք համառօտը գրել,
նիւթ առնելով միմայն բարյագիւտութեան այն
սկզբունքները, որ կարող են նպաստել մանկանց
երջանիկ և բարւոք կեցութեանը ընկերական կեն-
ցարլավարութեան մէջ:

Այն գործում, որքան որ կարացինք պարզ կերպով
ցոյց տուած ենք նախ՝ թէ ի՞նչ միջոցներով կարող
ենք մեր բարյական բնութիւնը կատարելագործել
մարդկութեան կատարեալ աստիճանին հասնելու հա-
մար որ կայանումէ բարի և առաքինք բնութիւն ու-
նենալում:

Երկրորդ՝ բացատրած ենք այն պարտաւորութիւն-
ները, որ իրեւ անժխտելի օրէնք դրած է Աստուած
բնութեան մէջ և պահանջումէ ամեն մարդուց պար-
տաւորապէս կատարել վարձուց և պատժոց խռո-
տու մներով։ Որը իմանում ենք այն հետեանքներով՝

որ զգում ենք, երբ որ կատարում ենք կամ պարտա-
զանց ենք գտնվում, այս է խղճի անդորրութեամբ
և անհանգստութեամբ։

Այլ քանզի մարդուս թէ հոգեւոր և թէ մարմնա-
ւոր երջանկութիւնը սահմանած է Աստուած վարուց
և բարուց սրբութեան ճշմարիտ Աստուածայաշտու-
թեան, և ընկերական կենաց մէջ բարիք և բարերա-
րութիւն անելում, այս գործում սոցա վերայ առա-
ւելապէս ուշադիր եղածենք. ուստի և բոլոր բարո-
յագիւտութեան սկզբունքները չորս բաժանմունքների
մէջ ամիսփեցինք. առաջին բաժանման մէջ՝ մարդ-
կային բարյականութեան և բարյական գործքերի
ինչութեան վերայ խօսելով, երկրորդին մէջ՝ առ
Աստուած ունեցած պարտուց և նոցա Աստուածա-
համց կերպի կատարելու վերայ խօսելով. երրորդի
մէջ՝ ընկերական պարտուց վերայ. իսկ չորրորդի մէջ՝
այն բարեպաշտութեանց վերայ, որ պիտի կատարենք
իրեւ բարիք և բարերարութիւնք. որք համարումեն
ճշմարիտ և խկական աղբիւր մարդկային երջան-
կութեան:

Եւ որպէս զի մեր գրածը ամենին գիւրըմբոնելի
լինի և չեշտութեամբ կարողանան միտք առնել մա-
նուկները գրուածոց իմաստը, ամեն գլխի վերջը
հարկաւոր համարեցինք հարցմունքներ գնել, որոնք
թէև տեղտեղ անհամաձայն են երևում գրուածքին,

բայց եթէ ներքեւը դրուած հարցմանը ուշադրութիւն
դարձնէ ընթերցողը՝ կարողէ հեշտութեամբ իմասնալ:

Այսպէս գնելուս պատճառն է որ մանուկը բա-
րյականութեան մէջ լսու վարժելու համար ինքն
իրեն հետամուտ լինի գտնել իւրաքանչիւր հարցմու-
քին յարմար պատասխաններ:

Եյս գործում յուսալով որ մեր ազգայինները,
սորա թերութեանց վերայ ներողամիտ աչքով ակ-
սարկութիւն կանեն, ես կը վերջացնեմ իմ իւրաք
ամենին երջանկութիւն բաղձարով:

Եթու ո՞և մատանաց մի ուս զայտարկան ան-
դիքը յար մարդունք և մասն տնօրականութեան մեջ
ու ո՞և մարդու կարծու աշխատ մասն անդունք
առջաւուն ուր և քառակայ նայմա ու նայուու
դրսոցը ։ Խունաց ուր և այլակատ ալիքով ունաց
ո՞և դրազր ուր ։ Եղանձ պատասխանաբերն ո՞և
զմականակ խօս որ պարի ընկան առաջարկուած ուր
մասն ուղարկած ։ Հայու հայու
մայդ միավորուն ո՞ւր անդունք անդունք և անդունք

մայդ ուղարկած քիմա վեու ո՞ւ յա անդունք ու
ո՞ւ յա անդունք մասն ուղարկած պատասխանակ և անդ
անդ ուղարկած մասն պատասխանակ յա անդունք ու
ուղարկած յա անդունք պատասխանակ յա անդունք ու
մայդ ուղարկած ո՞ւր անդունք անդունք և անդունք

պատասխանակ ու անդունք անդունք ու անդունք մ
ու անդունք մայդու յա անդունք անդունք ու անդունք
ու անդունք պատասխանակ և անդունք

մայդ անդունք անդունք յա մայդու մայդ անդունք
մայդ անդունք անդունք յա մայդու մայդ անդունք

մայդ անդունք անդունք յա մայդու մայդ անդունք
մայդ անդունք անդունք յա մայդու մայդ անդունք

մայդ անդունք անդունք յա մայդու մայդ անդունք
մայդ անդունք անդունք յա մայդու մայդ անդունք

181. 96. 25. 182

Տ Անդունք անդունք անդունք անդունք
անդունք անդունք անդունք անդունք անդունք

Յ Անդունք անդունք անդունք անդունք
անդունք անդունք անդունք անդունք անդունք

Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի
մարդկան. որպէս զի տեսցեն զգործս ձեր
բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր, որ
յերկինս է: Մատի. Ե. 16.

Զամենայն ինչ փորձեցէք. զբարին ընկա-
լարուք. Ա. Թէ. Ե. 15.

Զբարիս գործել մի ձանձրանայք: Բ. Թէ.
Գ. 13.

Յամենայնի կամիմք բարոք գնացա ցուցա-
նել. Ե՞ր. ԺԳ. 18:



Ապագար աշխաղաւովոց և հաւատում
: Հնդկանք է նոր

մի ըստ ու ու անձնանձնացն զնն լող
ոյն ցմն նախկին օրու ու շատուաւուր բողոք

1. Բարոյագիտութեան ուսումն աւան-
դում է վարուց և բարուց վերաբերեալ այն
բարոյական կանոնները, որով մարդիկ կա-
ռավարելով կարող են ձեռք ձգել իրենց փա-
փագած հոգեւոր և մարմնաւոր երջանկու-
թիւնը:

2. Որովհետեւ մարդու երջանկութիւնը
սահմաներ է Աստուած բարի և առաքինի
բնութեան մէջ, ուստի բարոյագիտութեան
զլիսաւոր նպատակն է ուսուցանել մարդուն.
Թէ ինչ գործելու, և ինչպէս կենցաղավա-
րելու է, որ լինի բարի և առաքինի:

3. Մարդս կարող է բարի և առաքինի լի-
նել միմիայն բնութեան և Աստուածային
օրէնքների համաձայն իր վարքն ու բարքը
կանոնաւորելով. իսկ երջանիկ՝ կատարելով
այն պարտականութիւնները որ աւանդուծ է

Աստուած, և հարկաւորապէս պարտաւորած է կատարել:

4. Այն պարտականութիւնները, որոց վերայ մեր երջանկութեան հիմքը դրած է, և որոց պարտաւորապէս ենթարկուած ենք, երկու գլխաւոր մասերի են բաժանւում, առ Աստուած և առ մարդն:

5. Առ Աստուած պարտականութիւնը հիմնուած է Աստուածապաշտութեան կամ Աստուածոիրութեան վերայ, իսկ առ մարդ՝ բարերարութեան և բարեգործութեան վերայ:

Վայէ Եւ առջևաց առզան մամրացի ։ Տ
վայէ առ Ա զբաց նաւուան չ զնանեաւ
մաս Եւ առ վրայ զարաւ ։ Զի՞ն մաս Եւ առ
մարդան յամարաւ չ մասարան զարաւ ։ Զ
այս արագների սկզբն ։ Ա շայմանը լի՞յ չ կ

Վայէ Եւ առջևաց առզան մամրացի ։ Տ
վայէ առ Ա զբաց չ զարաւ ։ Տ
մաս Եւ առ առանուան մաս Եւ յան յան չ կ
զարաւ ։ Ա մաս Եւ յան մաս Եւ յան յան ։ Յ
այս արագների սկզբն ։ Ա շայմանը լի՞յ չ կ

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԴԼՈՒԽ Ա.

ԲԱՐՁԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅՈՒ. Ա.

1. Թէ և Աստուած առաջին մարդուն ստեղծեց կատարեալ և հասուն վիճակի մէջ, բայց օրինադանցութեան պատճառով բնորա բնութիւնը կամ միտքը չարի և բարւոյ խառնուրդով տկարսանալով, այնուհետեւ նորա սերունդը կարօտ եղաւ բնութեան կատարելութիւնը ստանալ հետզհետէ լսելով և տեսանելով. և կատարելագործել փորձառութիւնով։ Միտքը, որ կատարելութեան շտեմարանն է, մարմնոյ արտաքին գգայարանաց միջնորդութեամբ իւր շուրջը եղած առարկաների և կատարուած գործողութեան վերայ նկատելով՝ համոզմամբ և կամաց հաճութեան գործակցութեամբ կազմում է բնութեան յատկութիւնները։ Բնութեան մէջ արտա-

քուստ լնդունած այս յատկութիւններին ա-
սում ենք բարոյականութիւն, իսկ գործողու-
թեանց՝ բարոյական գործք:

2.Այն գործքերը որ մարդիկ իրեւ մոտ-
որ և բանական էակներ գործում են, եթէ
համաձայն են լինում Աստուածային օրինաց
և ողջախոչ մտաց բանական դատողութեան՝
կոչում են բարի: Իսկ ընդ հակառակն եղած
գործովութիւնքը՝ չար:

3. Գործոց այսպիսի հանդամանքները մար-
դուս բարոյականութիւնը բաժանում են մի-
միանցից, որոնք առաքեն յատկութեամբ աս-
ւում են չար և բարի, կամ վատ և լաւ, իսկ
այն յատկութիւն ունեցողները բարոյապէս
կոչում են առաքինի և մավի:

4. Տնութեան մէջ բարոյականութեան այս
առաքերութիւնը յառաջ են գալիս մոտաց դէպ
և չարն կամ ի բարին հակամիտ լինելուցն:
Որոց միաքը լուսաւորուած է բարի խոր-
հուրգներով՝ և տրամադրուած է բարեպէս,
նոցա թէ կորհուրդները և թէ գործքերը
միաւմ են բարի և առաքինական, իսկ ընդ

հակառակն՝ վատ ապաւորութեանց ենթար-
կուած մոքերը յղանում են չար և մալեկան
խորհուրդներ: Կարուս և այլուն ուշընա

Մարդ բարի, ասումէ Քրիստոս փրկիչն
մեր, ի բարի սրակց իւրոց բղիւէ զբարի, և
մարդ չար, ի չար սրտից իւրոց բղիւէ զչար:
Ղուկ. Ե. 43:

5. Որովհետեւ, ասացինք, թէ լաւ և թէ
վատ բարոյականութիւնը կերպաւորումէ
բնութեան մէջ՝ մոտաց հայեցողութեան և այլ
հոգեկան կարողութեանց միջնորդութեամբ.
ուստի պիտի միոք առնենք, թէ ինչ զգու-
շութիւն հարկաւոր է մեզ ունենալ մեր հո-
գեկան կարողութեանց լիերայ. այսինքն, մը-
տածելու, դատելու, կամինալու, գործելու և
ճանաչելու վերայ, որպէս զի նոքա վինին բա-
րութեան և առաքինական ունակութեանց
աղբիւրներ, որով և մեր բարոյական գործ-
քերը Սասուածահաճոյ և սիրելի:

6. Մարդոց նկատմամբ ամենակարևոր և
մեծ ուշագրութեան արժանի մոտածմունքը
պիաի մնի, իր բարոյական որպիսութեան վե-

րայ հսկել, և որքան որ կարող է՝ իր վարքն ու բարքը ուղղութեան մէջ պահել, վասն զի մարդուո ներկայ և ապագայ կենաց թէ երշանկութեան և թէ թշուառութեան աղեխւը, և բարեկեցութեան յուսոյ հիմքը միմիայն բարոյականութիւնն է։ Ինչ կենաց վիճակ որ ունենում են մարդիկ երկրիս վերայ թէ յարգանաց և թէ անարգութեան, թէ սիրելութեան և թէ ատելութեան, թէ գովութեան և թէ պարսաւանաց բոլորն ի միասին առնուած բարոյականութեան արդիւնքն են։ Խմառու. ԺԶ. Գ,

7. Եթէ լուրջ կերպով նկատենք առ հասարակ մարդկային քաղաքական ընկերութեանց վերայ, պարզ կտեսնենք, որ մարդիկ սիրում են աւելի բարի բարոյական յատկութիւն ունեցողներին, քան թէ նորանց, որոնք բարոյապէս վատութեան հոչակ ստացած են. օրինակ։ Չենք կարող գտնել մի բարոյական մարդ, որ անբարոյականաց հետ յօժարի ընկերանալ. կամ մի արհեստաւոր վաճառական, և պատուաւոր քաղաքացի, որ յանձն

առնուն աշխատակից ունենալ այն անձնաւորութիւններից, որոնք ճանաչուած են գոզութեամբ, խարդախութեամբ և այլ այսպիսի մոլութեամբ կամ անառակ գործքերով։

8. Մարդիկ սիրում են բարի և առաքինի անձնակներին. իսկ չարագործներին ատում և հալածում. այս համոզամանքներից պիտի միաք առնենք, թէ ի՞նչ արժէք ունի բարայականութիւնը մեր կենցաղակարութեան նկատմամբ. և որքան թանկագին գանձ է անարատ բարոյականութիւնը, որի անհամեմատ առաւելաւթիւնը ցոյց է տալի Առզունն իւր այս խօսքավը, « լաւ է անուն բարի քան զենքութիւն բազում և քան զարծած և զոսկի շնորհք բարիք։ » Առակ. ԻԲ. 1.

Ապա ուրեմն ջանք անենք և հետամուտ լինիք. որ մեր ընտթիւնը գովելի յատկութիւններով զարդարենք, որպէս զի լինիք թէ մարդոց մօտ սիրելի, և թէ Աստուծոյ մօտ առաքինի և վարձատրելի։

9. Ինչպէս որ բնութեան օրինօք մեր օգտին համար պարտաւոր ենք մեր վարուց և բա-

բուց ուղղութեան վերայ հսկել, նոյնպէս և
Աստուածային օրէնքը պարտաւորումէ նոյնը
կամենալ և մեր ընկերի մասին։ Մադի. Ե. 12:

10. Ամենից մեծ բարիքը, որ բարոյապէս
պարտաւորած ենք անել ընկերին, այն է, որ
նորան բարոյապէս լաւութեան և առաքի-
նութեանց մէջ առաջնորդենք. որ լինի նա
բարի և առաքինի. Եւ ամենից մեծագոյն
զարիքը այն է, որ ջանք կանենք ընկերի բա-
րոյականութիւնը խանգարել. ուսուցանելով
և առաջնորդելով նորան. գէտ ի չարուգոր-
ծութիւնքը որով և մեռցնել նորա մէջ բա-
րոյականութեան զգացմէնքները։

ՀԱՐՑՄՈՒԽԻՆՔ.

1. Բարոյականութիւն ասելով ի՞նչ ես իմանում.
2. Մարդոց ո՞ր գործքերը ասւում են բարի. և
ո՞րք չար։
3. Թէ որ մեկն նեղութեանց մէջ օգնեմ. ի՞նչ
առած կլինիմ։
4. Այս տեսակ գործքերը ի՞նչո՞ւ բարի են աս-
ում։
5. Աստուած ի՞նչ է կամենում, որ մենք գործենք։

6. Բացատրէ քո գործքերդ իր հետեանքներովը.
որ ըզգում ես բարիք գործելու ժամանակ։

7. Ընչու Աստուած մեր ամեն գործքերի հետ մի
մի հետեանք կապած է։

8. Այդ հետեանքներին ի՞նչ պիտի ասենք։

9. Գործքի բնութեան օրէնքը ուրիշ ի՞նչ բանով
կարող ես բացատրել։

10. Թէ որ իմ ընկերիս բարեաց վերայ նախան-
ձեմ և մտածեմ. որ նորա բարիքը մի կերպով խա-
փանեմ. ես ի՞նչ կլինիմ։

11. Ի՞նչ զգացում կռնենամ իմ պատումը այս
տեսակ գործելու՝ մասին։

12. Կարո՞ղ ես յիշել քո գործքերիցը այնպիսին,
որի համար ունեցեմ ես սրտի հանգստութիւն կամ
անհանգստութիւն։

13. Այդ զգացումը քո մէջը զարթեցնողն ո՞վ է:
Ու նրանով ի՞նչ ես մակարերում։

14. Ի՞նչ գիդմամբ Աստուած այնպէս սահմանեց,
որ բարի գործքերին հետեի սրտի հանգստութիւն։
իսկ չար գործքերին՝ անհանգստութիւն։

15. Եթէ գործքի հետեանքների վերայ ուշ գարձ-
նենք. կարո՞ղ ենք ճանաչել այն պարտականութիւն-
ներ. որ բարոյապէս մեր վերայ գրած է Աստուած։

16. Ուզեմն ի՞նչ անելու ենք, որ բնութեանը
բարի մարդ լինինք։

17. Բարյականութիւնը մարդոց երջանկութեան
և թշուառութեան հիմքը կարո՞ղ ենք համարել:

18. Առ հասարակ մարդիկ որո՞նց են սիրում կամ
առում:

19. Օրինակ տուր:

20. Եթէ բարեգործները սիրելի են լինում և
չարագործները ատելի, մեր բարյականութեան վե-
րայ ինչ նկատմանք պիտի ունենանք:

21. Թէ որ մեր ընկերին չարութեան մէջ տեսա-
նենք, պարտաւո՞ր ենք ի բարին ուղղել:

22. Մեր գործերի ո՞րն է աւելի դատապարտելի
թէ Աստուծոյ մօտ և թէ մարդոց:

23. Չարութիւնը կամ բարութիւնը մարդոց ընու-
թեան մէջ ի՞նչպէս է տեսակաւորում:

ՅՈՒ. Բ.

Թէ ԻՆՉՊԻՍ Ե ԽԱՆԳԱՐՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ,

1. Թէ առաքինութիւնը և թէ մոլութիւնը
մարդոց մէջ արմատանում են հետզետէ՝
արտաքին զգայարանոց միջնորդութեամբ՝
լսելով և տեսանելով, որոց մերոյ միտքը իր
դատողութիւնը ուղղելով և կամքը իր հա-

ճութիւնը տալով տեսածը և լսածը մարմնաւ-
ցնումէ ընութեան մէջ և դարձնումէ իբրև
իր սովորական ընութիւն։ Այսպէս իր ըմբռ-
նած գաղափարների և մտաց տրամադրու-
թեան համեմատ լինում է նա առաքինի
կամ մոլի:

2. Ասածներիցս աւելի լաւ գաղափար կազ-
մելու համար իբրև զգալի օրինակ վեր առ-
նենք մանուկին, որի մէջ դեռ ոչինչ լաւու-
թեան կամ վատութեան գաղափար մտած չէ։

Տեսնում ենք, երբ նորա մէջ բանականու-
թիւնը սկսում է զարթնուլ, ամէն ուրախալի
առողջակաների վերայ նկատելով հաճութեան
զգացմունքը յայտնում է խնդալով, իսկ ընդ-
հակառակն տրոմալի առարկաների մասին իր
տհաճութիւնը ցոյց է տալի լալով։ Բայց այս
տեսակ տեսարանները երբ որ նորա յառաջ
յաճախ կրկնուին, նորա զգայարանքները
ընտելանալով և միտքը ընդունելով այն ա-
մենը, այնուհեաւ փոխանակ հաճութեան
կամ տհաճութեան ցոյցերի անտարբեր կեր-
պով նկատումէ առաջին անգամ, և փոքր

առ փոքր գործին ծանօթտնալսվ՝ ինքն ևս
նոյնը գործելու հետամուս է լինում։ Այս-
պէս մարմնանումէ ամէն յատկութիւն նո-
րա մտաց մէջ։ և լինումէ իր ընդունած գա-
ղափարի համեմատ բարոյական մարդ լաւ ու
վաստ յատկութեամբ։ Խճչպէս որ բարոյակա-
նութեան կերպաւորելը նոյնպէս և խան-
գարուելը այսպէս է սկզբնաւորում։

3. Մարդու բարոյականութիւնը վերա-
բերում է թէ հոգւոյն և թէ մարմնոյն-
Հոգւոյ բարոյականութիւնը կրօնական է,
որին բնութեամբ հակումն ունի մարդս, և
նարանով կապւումէ Աստուծոյ հետ իբրև իր
ամենաբարձր մտաց առարկայի՝ սրտի մաօք
կատարելով այն ամէն առաքինութիւնները՝
որ առաջնորդում են նրան առ յաւիտենա-
կան երջանկութիւն։ Այս կրօնական բարո-
յականութիւնն է հաւատ, յոյս և սէր առ
Աստուծած։ և ջերմեռանգութիւն Աստուծոյ
հաճոյական գործքերը կատարելու մասին, որ
մի խօսքով ասվումէ իշխանութիւննեն։ Այս
կապն է, որ մարդու բարոյականութիւնը

ուղղութեան և սրբութեան մէջ է պահում։
և նորա հոգեկան չար կրքերը զավում և
սահմահարում է։

Քանի որ մարդս կրօնական այս կտակով
ամրապինդ միացած է Աստուծոյ հետ։ Նորա
կեանքը առաքինական է, իսկ երբ որ թուլա-
նումէ, այնուհետեւ կրքերը նորա մէջ զօրա-
նալով, բանում են նորա առաջ անշուն աղ-
պարէզ աներկիւղ գործելու այն ամօթալի
գործքերը, որից առաջ զգուշանում էր և
բարոյապէս չար էին թուլում իրեն։

4. Կրօնական կապը զանազան միջոցներով
կթուլանայ, Ա, երբոր կրօնի մասին թոյլ
խօսուին, և նորա էական կետերի վերայ ան-
տարբեր ակնարկութիւններ լինին նոցա զան-
ցառութիւնը անվնաս մեկնելով, ինչպէս եթէ
ժուժկալութեան, պահեցողութեան, աղօ-
թասիրութեան, գթասիրութիւն, առ ամէն
ոք, սաէպ եկեղեցի երթալու մասին աւելորդ
բաններ են ասենք ելն։ որպէս լսողի հաւատոյ և
ջերմեռանգութիւն կապը թուլանալով, նորա
կրօնական սկզբունքը ևս կխանգարուի։

Բ. Երբ որ Սուրբ Գրոց խօսքերը ծուռը մեկնելով աշխատանք, որ նորա (Սուրբ Գրոց) միտքը աւելի մեր կամաց յամարութիւն։ Կամ՝ եկեղեցւոյ աւանդութիւնը մարդկային փարզապետութիւն համարել տալով նոցա գէմ գործելը մեղապարտութիւնից ազատ քարոզուին։ կամ նուիրակոն օրերը, (որ եկեղեցին Աստուածաշաշտութեան և Հոգեւոր գործոց համար յտուկացրած է.) որ հանգստեան և զբոսանաց համարելով, զանազան անկարգութեամբ անցնելու թելադրվին՝ օրինակ արքեցութեամբ, խեղկատակ խօսակցութեամբ և յն, որով լսողի միտքը կարող է պղտորուիլ, և նորան բարոյական ուղղութիւնից շեղել, այս մասին վկայումէ և Պողոս «Ապականէն (ասէ), զբարժ քաղցունաբնիք չարք» Ա. Կոչ. Թէ. 33։

Արովհեան կրօնի բարյականութիւնը մարդոց Աստուծոյ հետ միաւորող կապն է, որով մարդիկ թէ կեանք և թէ փրկարար շնորհքներ են ընդունում։ աւսոի պիտի զգուշանք մարդոց հետ կրօնական բարոյականու-

թեան դէմ խօսելուց, որ աններելի յանցանք է քարոզում մեր Փրկիչը, և վայ տալով ցոյց է տալի թէ ինչ հոգեւոր վտանգի են են թարկում իրենց այն մարդիկը, որ ընկերին մոլորեցնում են։ Մաշկ. Թ. 41. 42. Պահէ. Թէ. 2. Ա. Կոչ. Ը. 13.

Այսչափ Աստուծոյ վերաբերեալ կրօնի բարոյականութեան մասին խօսելով, խօսենք Հիմայ թէ որ բարոյականութիւնը առանձին մարդոց է վերաբերում, և ինչպէս կարող է խանգարուիլ։

Այն բարոյականութիւնը որ մարդոց կամ ընկերին է վերաբերում, կանխաւ հաստատած է Աստուծած Մովսիսի ձեռօք տաօնաբանեայ պատգամաց երկրորդ մասով։ զոր Քրիստոս տէրն մեր այն ամէնը միմեայն սիրոյ վերայ հաստատելով, աւանդած է մեզ իրենշան քրիստոնէութեան և Աւետարանի ճրշմարիտ աշակերտութեան։ Յովհ. ՓԳ. 34—35, ՓԵ, 12, 13։

Աւաքեալը իր գրուածոց մէջ նոյնը աւանդիկով ցոյց է տալի նաև նորա կարևորու-

թիւնը և գերազանցութիւնը Աստուածսի-
րութեան ճշմարիտ և զգալի պատկեր քա-
րոզելով եղբայրակառութիւնը:

Սորանից պարզ երեսւմէ, որ մարմնոյ վե-
րաբերեալ բոլոր բարոյականութիւնը ընկեր-
սիրութիւն է՝ հաստատուած այն ամէն քարո-
յական գործքերի վերայ. որ վերաբերում
են ընկերի թէ հոգեոր և թէ մարմնաւոր
օգտին:

Ընկերի բարոյականութիւնը կարող է խան-
գարուել, թէ մեր անձնական չարութեան
օրինակով. և թէ նոցա հոգեկան զօրու-
թիւնը գրգռելով դէպ ի չարը, թելադրելով
գործել այն ամէն չարիքը, որ բարոյապէս
նոցա վարքը ապակոնում են և Աստուծոյ և
մարդկանց առաջ ատելի են առնում: Խնչ-
պէս՝ ուսուցանել նրանց ծնողաց անհնազանդ
լինել, իր հակառակորդին դէմ վրէժին-
գրութեամբ զինուիլ չարեաց փոխարէն չար
հատուցանել են:

80. Մեծագոյն յապիքից պակաս չեն և այն
երբ որ ժուժկալ մարդոյ սիրոյ և բարեկա-

մութեան պատրուակով նոցա ախորժակը
կարենք դէպ ի ոգելից ըմպելիքը, որով փոքր
առ փաքր արքեցութեան վարժեցնելով, կի-
նին նոքա անառակ և արքեցող: Կամ նեն-
գութեամբ նոցա ձեռքը ընթերցանութեան
կուտանք այնպիսի գրքեր որ մոլար մտօք
գրուած են, և բարոյական սրբութեան հա-
կառակ մողեր են պարունակում:

Մեր Փրկիչը աններելի յանշանօք գատապար-
տում է նախ նոցա, որ իրենք մոլորուած և
ապականուած լինելով, այլոց ևս ապականե-
լու կամ մոլորեցնելու են աշխատում. և
հետամուտ են լինում պարզամիտներին որ-
սալու, որպէս զի իրենցից աւելի գեհենի որ-
դիքներ չինեն: Մատթ. կԳ. 15:

9. Վերջապէս պիտի իմանանք. որ մեր
Փրկչի աւանդած եղբայրակրութեան օրէնքի
դէմ է. եթէ որ և իցէ միջոցներով կամ որ
և իցէ պատճառներով ընկերի բարոյական և
մտաւոր որպիտութեանցը վնաս հասցնենք, և
փոխանակ նորա բարի յատկութեանցը օժան-
դակելու, ջանք տնենք. որ նա լինի վարքով

ՏԾ 468-2009

Հ 436



և բարքով չար: Այս մասին սպառնալիքներ կան Սուրբ Գրոց մէջ, որ պիտի հասու ցանէ Աստուած ամէն անօրէնութեանց գործողներին: որոնցից հարկաւոր է զգուշանալ: Եւ ինչպէս մեր բարոյական սրբութեան և ուղղութեան վերայ հսկում ենք, նոյնպէս և մեր ընկերների բարոյականութեան վերայ պարտաւոր ենք հսկել:

Այս պարտքը կատարելով, երկու օգուտ կունենանք, առաջինը, որ նորանով սիրոյ օրէնքը կատարած կլինինք, որ Աստուծոյ մեզ աւանդած բոլոր օրէնքների լրումն է: և երկրորդ, որ եթէ իբրև մարդ սխալական լնդդէմ: Աստուծոյ մեզանչած եմք, նորանով մեր մեղքերը կըսրբենք: և մեր հոգին յաւիտենական գատապարտութիւնից կփրկենք: Յանձնք. Ե. 19—20:

ՀԱՐՑՄՈՒԽԻՔ

1. Մարդս բարյապէս ի՞նչպէս է խանգարւում:
2. Օրինակ տուր:
3. Բարյականութիւնը մարդու ո՞ր մասին է վերաբերում:

4. Հոգւոյ բարյականութիւնը որո՞նք են, և ինչո՞ւ գործա հոգւոյ բարյականութիւն են կոչում:
5. Հոգւոյ բարյականութիւնը մարդուն ի՞նչ օգուտ ունի:
6. Քանի որ մարդս կրօնական կապով միացած է Աստուծոյ հետ՝ նորա կեանքը ի՞նչպէս կլինի:
7. Մարդուս կրօնական կապը երբ որ թուլանայ, ի՞նչ տեսակ կեանք կունենայ:
8. Օրինակ տուր:
9. Սողոմն իմաստունը երբ որ կրօնական կապով միացած էր Աստուծոյ հետ՝ ի՞նչ տեսակ կեանք ուներ, ու երբ թուլացաւ, ի՞նչ կեանք ունեցաւ:
10. Բնականէն օրինակ կարո՞ղ են տալ:
11. Աղեղի լարը երբ թոյլ լինի կարո՞ղ է նետը նպատակին հացնել:
12. Մարդուս կրօնական կապը ի՞նչ միջոցներով կթուլանայ:
13. Ի՞նչ զգուշութիւն պիտի ունենանք մեր Աստուծոյ հետ ունեցած կրօնական կապը, պահպանելու շամար:
14. Մարմնայ կամ ընկերնն վերաբերեալ բարյականութիւնը որն է:
15. Եթէ ժուժկալ մարդոց արքեցութիւն սորվեցնենք, կամ աղօթասերին աղօթելը չափաւ որելու աշխատենք անձին վնաս համարել տալով, կամ պա-

Հեցող մարդուն պահքը աւելորդ սովորութիւն է ասենք. Նորան ի՞նչ արած կլինինք.

16. Այսպիսի վարեցողութիւնը ինչո՞ւ մեծագոյն շարիք է կոչւում:

17. Մեր Փրկիչը այնպիսիներին ինչ սպառնալիք է տալիս.

18. Եթէ ընկերի գաղափարը խանգարենք, կամ մոլորութեան մէջ ձգենք, ո՞ր օրէնքի գէմ՝ գործած կլինիք:

19. Ուրեմն մեր բարոյականութեան պէս պարտաւոր ենք նաև ընկերի բարոյականութեան վերայ հսկել:

20. Նորանով ի՞նչ օգուտ կունենանք:

ՀՕԴ Գ.

Թէ ՎԱՐՔԸ Ի՞ՆՉՊԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՂ ՂՈՒԹԵԱՆ ՄԵԶ ԿՊԱՀՈՒԻ, ԿՅԱՄ Եթէ ԽԱՆԳԱՐՈՒՅՆ Է Ի՞ՆՉ ՀՆԱՐԺՈՎ, ԿԱՐԵԼԻ Ե ՈՒՂՂԵԼ:

1. Եթէ ցանկանում ենք որ մեզի բարոյական ուղղութեան մէջ պահենք՝ կամ մեր խանգարուած բարոյականութիւնը վերանորոգենք. կամ եթէ կամենում ենք, որ ամէն գործողութեանց մէջը խիզճերնիս մաքուր և

գործքերնիս արդար լինին, հարկաւոր է որ չետեեալի անոններով սկսենք գործել, որով թէ գործերնիս բարոյապէս արդար կլինին. և թէ խիզճերնիս ազատ և մաքուր:

Նախ քան գործի սկսելը մենք զմեզ հարցնելու ենք մեր արդար խղճի վկայութիւնը պահանջելով՝ թէ մտազրեալ գործերնիս որ պիտի անենք, բարոյապէս բարի են, կամ իրաւացի են թէ անիրաւ; Երբ որ այս հարցմաննքներին մեր խղճը նորա բարի կամ՝ արդար լինելու մասին վկայութիւն տուաւ, վկայահ կարող ենք գործել:

Բայց պէտք է գիտենաք որ Աստվածած այս մասին մեզ օգնելու մտօք նախահոգութիւն արած է. տալով մեզ նաև Սորբ Գիրքը, ուստի մեր գործոց քննութեան մէջ բաւական պիտի չհամարենք խղճի վկայութիւնը, որ շատ անգամ զգացմանքից զրբակուած լինելով՝ կարող է սխալացնել. այդ ովտաք է գիւմենք նաև Սուրբ Գրքին, որ խրչճիցը աւելի կհասկացնէ խորհուրդի և գործքերի չար կամ բարի լինելը: Եթէ բարոյական

գործքերի մէջ այս կանոնը իրեւ պարտաւորիչ օրէնք պահպանենք, երբէք չենք սխալուիլ:

2. Որովհետեւ կեանքի մէջ կարելի է այնպիսի գործքերի հանդիպել, որոյ կատարելու մասին երկմոռւթիւն ունենանք, ինչպէս չարագործին օգնել, կամ մասնաւոր նպաստ շնորհել նբան որ մեզ գիմած է, կամ հառարակաց օգտի համար մասնաւորաց վնասուն մասնակցիլ, այսպիսի գիտուածական գործքերու մէջ աւելի հանգամանքներին նկատելով պիտի գործենք. Խղճի վկայութեանը հնագանդելով. բայց միշտ ի նկատի ունենալով և Աստուածային օրէնքը:

Զարագործութիւնից միայն կարող է մարդու վնաս գալ թէ՛ բարոյապէս և թէ հոգեպէս. իսկ բարեգործութիւնից ոչ երբէք. ուստի եթէ ամեն գործքեր, Աստուծոյ երկիւզը սրոտի մէջ ունենալով գործենք, սխալ չենք գործել. վասն զի Աստուծոյ երկիւզն է՝ որ մարդուս զսպումէ որեւիցէ չարագործութիւնից. վասն որոյ հարկաւոր է մեզ աւելի

այս մասին ուշադիր լինել՝ ամէն մասածմանց և գործառնութեանց մէջ նորա ներկայութիւնը, արդարաժիրութիւնը և անաշառ հատուցումը յիշվելով:

3. Կան այնպիսի գործքեր, որ սովորական գործոց պէս անումենք՝ առանց ուշադրութեան աւնելու նոյաբարոյականի բարի կամ վաստինելու մասին, կամ ըստ Աստուծոյ արդար իրաւանց պատու հասելի լինելու մասին, օրինակ, խօսակցութեան մէջ պատահամէ, որ մեր ընկերին ասում ենք յիմար և լն. այսպիսի խօսքեր գործածելը թէ և ըստ ինքեան անվնաս ենք համարում. բայց որովհետեւ մեր ընկերը կշտանումէ. ուստի աւետարանական օրէնքը բարոյական չարեաց կարգը դնելով, հաւասար պղոց պատուիրանագութեանց կամ յանցանաց պատու հասելի է վճռում։ Մատթ. Ե. 23։

Վասնորոյ մեր բարոյականի կատարեալ ուղղութեան համար ունակութիւն արած գործքերը կամ առվորութիւներն անգամ ուղղելու պարտաւոր ենք. որպէս զի լինինք

մենք կատարեալ, ինչպէս մեր երկնաւոր
հայրը կատարեալ է, և զման առաջնորդաց ։
4. Ս.յսպիսի ունակութիւն եղած գործքերը
կարելի է ուղղել միմիայն անձնաքննութեամբ։
Անձնաքննութիւնը մարդուն բարոյապէս ուղ-
ղելու գլխաւոր միջոցն է։ Թէ գործքերի
չարն ու բարին որոշելու, և թէ բարոյական
գգացմանց խանգարմունքը վերանորոգելու
նկատմամբ։

Անձնաքննութիւնը իբրև պարտաւորիչ օ-
րէնք պէտք է գործադրուի լուրջ և անաշառ
կերպով և առանձին խորհրդածութեամբ, որ
պիտի կատարենք մեր անձը ուրիշի անձի տեղ
դնելով, և մեր գործերը, որի վերայ քննու-
թիւն ենք անում, ուրիշի գործածը համո-
րելով, մեզ միայն վերապահելով քննելու,
դատելու և վճիռ տալու պաշտօնը։

Անձնաքննութեան միջոցին զմեղ այսպէս
կարգագրելից յետոյ, պիտի սկսենք մեր
գործքերը կամ սովորութիւնները քննել։ և
աստ մենք ցմեղ հարցնել թէ ինչ վճիռ ար-
ժան է տալ։ Ա.յս քննութիւնը մեր անձի վե-

րայ արած միջոցին, երբ որ վճիռ պիտի
տանք, հարկաւոր է նախ՝ Աստուծոյ տուած
օրէնքը ևս ուղեցոյց ունենալ, և երկրորդ՝
Յիսուսի Քրիստոսի մարդոց հետ վարած կեն-
ցաղավարութիւնը, որ միմիայն մարդոց օրի-
նակ տալու համար էր գործում, մտօք աչքի
առաջ բերելով սառուցենք թէ մեր գործքերի
կամ սովորութիւնների հետ ինչ համեմա-
տութիւն ունին նոքա։

5. Ա.յսպիսի անաշառ քննութեամբ գործա-
քելը գատելու միջոցին՝ կարելի է որ մեր մէջ
երեւին այնպիսի գործեր էլ, որ բարի և չարի
հետ խառն եղած լինին, օրինակ բարեգոր-
ծութիւնը՝ գործեր ենք բարերար երեելու
գիտմամբ, խրատեր ենք այլոց՝ իմաստուն
հոչակաւելու մտօք, ողորմութիւն ենք արել,
գովութիւն ստանալու նպատակաւ ելն։

Եւ որովհետեւ մեր Փրկիչը պատուիրած է,
որ ամէն բարեգործութիւն միմիայն ի փառս
Աստուծոյ անենք, որպէս զի վարձատրուելու
ակնկալաւթիւն ունենանք մեր երկնաւոր Հօրի-
ցը, և ոչ թէ իցոյցամարդկան։ Մատթ. Զ. 1—4.

Աւսուի այնպէս պիտի համարենք, որ մեր գործքերը չարեն եղեր և ոչ իբրև բարի և հաճոյ Աստուծոյ, Վասն որոյ ուղղելու համար հարկաւոր է ուխտել, նախ՝ որ բարեց գործութեանց մէջ այսուհետեւ անձնամիտութեան նախատակ չիտունենք: Երկրորդ՝ մեր սխալմունքը քաւելու համար խղճի խայթը մեր մէջ զօրացնելու միջոցների դիմենք. և երրորդ՝ չարութիւն գործելու համութիւնը մորից հեռացնենք: Խոկ եթէ գործած չարութիւնը փոխարինելի է. օրինակ, գողութիւնն զրագարտութիւն, աստիսոսութիւն ելն: պարտագործապէս պիտի յանձն առնունք փոխագարձ հատուցմամբ տրդարանալ. թէ և զըժուարին համարենք, և ամօթոյ զգացմունքը մեղնեղէ: Բայց խղճիւ պիտի կատարենք իբրև իրաւուցածութեան, որպէս զի զգուշանանք միւս անգամ գործելուց, որոնց վերայ դնում է Քրիստոս մեր վրկութեան հիմքը: Յաջ. Ե. 14 Բ. 11: Այսու ցուցան յանձնանարհուց այս ամէնը հարկաւոր է առնել իսունարհութեամբ երկիւղին Աստուծոյ, անաշաւ

ոութեամբ և ճշմարտութեամբ իբրև առաջի Աստուծոյ գատութելով. զիտելով որ նա մեր խորհրդոց քննիչն է, և մեր գործքերի անտաշուո գատաւորը:

6: Բարցյական ուղղութեան մասին շատ օգտակար է փորձառու անձանց խորհրդին գիմեւեւ նոցա խրատներին ունկնդիր լինել. վասն զի նոքա որ իրենց փորձառութիւնովը բաւականին հմտացած են զործոց լաւ և վատ հետեւանքներին՝ կարող են ուղղել մեր մոտածմունքները և լուծում տալ այն գործերին, որ տարակուսելի են թւում. այս մտօք է, որ Սուրբ Գրքի մէջ պատուէր եղած է և ծէրը դանիցը պահառ լաւանել: Յա զուսակ մանելու նախանձը

ՀԱՐՑՄՈՒՆՔ ՅՈՒՅՏ ՅՈՒՅՏ

1. Զար սովորութիւնից բարի սովորութեան գառնալու ի՞նչ հնարք կայ.

2. Իմ սովորութիւնս Սուրբ Գրոց աւանդած օրէնքների հետ կամ սուրբ ճանաչուած մարդոց սովորութեանց հետ բաղդատելով ի՞նչ օգուտ կունենամ.

3. Ի՞նչ անելու ենք. որ մեր գործքերը ուղիղ լինինք
 4. Յառաջադցն գործքի չարն ու բարին իր հանր-
 գամանըներով եթէ մտածենք, կարող ենք ուղիղ
 գործել:
 5. Եթէ պատահի, որ գործքի արդար լինելու վե-
 րայ տարակուսութիւն ունենանք. ի՞նչ անելու ենք.
 6. Օրինակ տուր.
 7. Անձնաքննութիւնը ի՞նչպէս կատարելու ենք,
 որ օգտակար լինի:
 8. Անձնաքննութեան միջոցին առաւել ի՞նչ բանի
 վերայ պիտի մտածենք.
 9. Թէ որ մեր գործքերը ու վարքը. սրբոց հետ
 համեմատենք. ի՞նչ օգուտ կարող ենք քաշել:
 10. Դիցուք թէ բարիքներ ես գործել մասամբ
 պարտաւորութիւնից ստիպուած. և մասամբ փառա-
 սիրութեան համար, ու ձանաշեր ես. որ սխալ կամ
 անվարձ առաքինութիւն ես գործել. միւսանգամ
 չգործելուդ համար ի՞նչ պիտի անես:
 11. Դիցուք թէ մէկը սուտ խօսել սորված լինե-
 լով միշտ սուտ կխօսի. թէ որ ուղիղ խօսել ուզէ
 ի՞նչ անելու է:
 12. Վարուց ուղղութեան ճշմարիտ օրինակ ո՞չ
 պիտի ունենանք.
 13. Բարեգործ լինելու մասին ի՞նչ պատուէք
 եղած է մեր Փրկչից:

14. Մեր բարեգործութիւնները Աստուածահամայ
 անելու համար ի՞նչ զգուշութիւն պիտի ունենանք:
 15. Մեր խանգարուած բարոյականութիւնը ուղ-
 ղելու համար որո՞նց պիտի գիմենք:
 16. Փորձառու անձանց խորհուրդները միշտ օրի-
 նաւո՞ր համարելու է.

ԳԼՈՒԽ Բ.

ՔԱՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾՔԵՐԸ ԵԽ ՆՈՅԱ
 ՀՅՈՒՅՈՒՆ ՁԵՏԵՒՈՒԹԻՒՆԵՐԸ.

Է ՕՊ. Ա.

1. Մարդիկ իրեւ բանաւոր և մոտածող
 էակ, ինչ որ խորհում են մոքով, ճանաչում
 են գատելով և գործում են կամենալով,
 կատուին բարոյական գործքեր:

Այսպիսի գործքերին բարոյական ասուելու
 պատճառը այն է, որ նրանով արտաքսագէս
 ճանաչում են մարդիկ թէ ի՞նչ վիճակի մէջ
 են բարքով և վարքով, և նոցա բնութիւնը
 աւելի ու կողմը հակամէտ է:

շ. Առ հաստրակ ամէն մի բարոյակոտն գործքերի հետ կցուած ենք տեսնում և մի հետեւթիւն, որն որ զգում ենք ի ներքուստ այն ժամանակ՝ երբ որ գործում ենք: Օրինակ, եղբ որ մէկին մի չարկի ենք հատուցաւնում: զգում եմք սարջանք:

Բնութեան մէջ յայտնուած այս հետեւթիւնները կասուին գործքի բնութեան օրէնք: որ բնութեան արտօրիչը իր նախահոգ կարգադրութեամբ կապած է գործքերի հետ այն մտօք, որպէս զի նորանով իմանանք գործքի չար կամ բարի լինելը:

Այն գործքերը որին հետեւում է սրտի ուրախութիւն կամ անդորրութիւն, և յայտնուելու մասին ամօթանք կրելու կամկած չունինք, բարի են, իսկ որոնց հետեւում է սորջանք, սրտի անհանգատութիւն, և յայտնուելու մասին երկիւղ և ամօթ՝ չար են:

Յ. Այն հետեւառթիւնները որ բնութեան մէջ երեւում են գործելից յետոյ դիպուածական համարելու շենք, այլ Աստուծոյ կարգադրած օրէնք, որ իր բարի բնութեամբ,

երբ որ մարդուն ատեղծեց երջանիկ կեանք ունենալու համար, ու նորա երջանկութիւնը սահմանեց բարի և առաջինի բնութեան մէջ, գործքերին այս օրէնքը դրաւ. որպէս զի նրանով ճանապէենք: Հայոց մասունք նախանակ է մասաւածահանակ մէջ: Նախանակ է մասաւածահանակ մէջ:

Նախանակ է մասաւածահանակ մէջ: Նախանակ է մասաւածահանակ մէջ: Նախանակ է մասաւածահանակ մէջ: Նախանակ է մասաւածահանակ մէջ: Նախանակ է մասաւածահանակ մէջ: Նախանակ է մասաւածահանակ մէջ: Նախանակ է մասաւածահանակ մէջ:

Երկրորդ՝ որ ամէն մարդ նորանով իմանայ թէ մղան բարի է Աստուած առ մարդն: Ա միտք բերէ: թէ ի՞նչ է կամենում, որ մենք գործենք երջանիկ լինելու համար. իսկ հոգեկան թշուառութիւնից աղաս մնալու համար որ գործքերից հարկաւոր է զգուշանալ:

Գ. Եւ երրորդ՝ նորանով միշտ յիշենք մեր բարոյական պարտաւորութիւնները. և ջանք անենք մեր վարը ու բարքը այնպէս կանոնաւորել, ինչպէս որ ցանկանում է Աստուած, որից կախուած է մեր երջանիկութիւնը և թշուառութիւնը:

ՅՈՒ. Բ. Հարգում զի զըս
թէ ՄԱՐԴԿԱՑԻՆ ԳՈՐԾՔԵՐԻՑ, ՈՐՈՇՆՔ ԵՆ
ԲՈՐՈՅԱԿՈՆ ՀԱՄԱՐԻՈՒՄ ԵՒ ՈՐՈՇՔ ՈՉ.

1. Մարդկային գործքերը իրենց հետեւանքներին կատամամբ երեք կարգի են բաժանվում, աննպատակ, դիսլուածական, և մոտագրեալ Աննպատակ կամուխն այն գործքերը, որ կատարում են առանց գործը ճանաչելու և առանց որոշ նպատակի, ինչպէս են տղայոց, խելացնորների, և արբեցողի գործքերը, որից ծագած հետեւալթիւններից հաճութեան կամ տհաճաւթեան զգացմունքներ չենք տնենար:

Դիսլուածական կամուխն այն գործքերը, որ յառաջագոյն մոտպրած չեն լինում, և գործւում են, որից թէ հետեւալթիւններ էլ ծնանին, ինչպէս եթէ խաղի միջոցին մէկին հարուածեմ կամ վիրաւորեմ, թէ և հաճութեան կամ տհաճութեան զգացմունքներ կունենամք գործի այս աեսակ հետեւանքի մասին, բայց յանցաւոր չեմք համար-

ւում, դիսլուածական լինելու պատճառաւ: Այս և միւս առաջին տեսակ գործքերը թէ և մարդկային գործքեր են, բայց բարոյական չեն:

2. Խակապէս բարոյական գործ է համարւում այն, որ կանխաւ մոտպրուած և գործը իր պարագաներով ճանաչուած՝ մարդիկ գործում են իրեւ բանաւոր և խոհուն էակ: Այս տեսակ գործքերը միմիայն կասուին բարոյական, որոնք մարդիկ գործելով լինում են բարոյակէս բարի կամ չար. և որոշելով միմիանցից գործոց յատկութեամբը կոչում են առաքինի և մոլի. և հետեւապէս համայկամ անհաճոյ Աստուծոյ: Որպէս համար խռոնիք այժմ:



ՅՈՒ. Գ. Գ. Էպուաւութիւններ ԲՈՐՈՅԱԿՈՆ ԳՈՐԾ ԵՒ ԳԻՏՈՒՈՐՈՒԹԵՒՆ.

1. Գործքի բարոյականութեան հիմքը դիտաւորութիւն է, որի նկատմամբ մեր սրտից

բղխած կամ մոքումը ծնունդ առաջ տեսն
խորհուրդները, կամ կամաց հաճութեամբ
կատարուած գործքերը ստանում են իրենց
չար կամ բարի յատկութիւնը: Աւտոի ամէն
գործք գիտաւորութեան հանգամնքին նա-
յելով, լինում են դատապարտելի կամ վար-
ձատելի, գովելի կամ պարսաւելի:

Այս մասին զվարուոր տպացոյց կարելի է
համարել մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի շնու-
թեան համար ասած խօսքը, որ ցանկանալու
մտօք կնոջ նայելը սրատումը կատարուած
շնութեան գործ է համարում: Մատն. Ե. 28:
որին նայելով պիտի իմանանք՝ թէ տմէն
մարդկային գործքերի Առողջոյ և մարդոց
մօտ արգարացնող կամ մեղապարտ անողը՝
ովուսուբնեն է:

2. Մեր խօսքը լաւ պարզելու համար օրի-
նակով բացատրենք: Թէ որ բարեկամիս մէկին
նեղ անցքից անցանելու միջոցին ձեռքս տամ-
իրեն, որ անվնաս անցնի, և յանկարծ ոսքը
տահելով ընկնի և լինասուի: Թէեւ սրատլու
կցաւիմ վնասուելու մասին, բայց ինձ մե-

ղապարտ չեմ համարիլ, ոչ Աստուծոյ և ոչ
մարդոց մօտ, և ոչ որ ինձ կարող չէ մեղադրել
այն մասին, որովհետեւ իմ գիտաւորութիւնս
նրան օգնելու համար էր և ոչ թէ վնասելու:
Նոյնպէս թէ որ ընկերիս մէկին համովեմ: որ
շահու համար այս ինչ գործին ձեռնամնուխ
լինի, նէնդու-Ծետածք ծածկելով նրանից այն
հանգամներները, որով նա պիտի վնասուի.
բարերար չեմ ճանաչուիլ՝ կամ բարիք արած
չեմ լինիլ թէ որ նա վնասուելու փոխանակ
շահուի: որովհետեւ իմ գիտաւորութիւնս էր
նրան վնասել և ոչ թէ շահուն օգնել:

Այս օրինակներից պարզ երեսումէ, որ
ամէն բարոյական գործի գիտաւորութեանցը
նայելով պիտի գտանիմք՝ և ոչ թէ հետեւու-
թիւններին: Վասն զի ոչ թէ հետեւանիներն
են, որ գործը արգարացնում կամ դատա-
պարտելի են առնում, այլ գիտաւորութիւնը:

3. Կիտաւորութիւնը որ գործի բարոյա-
կան յատկութիւնն է: միենայն օրէնքով
ներգործումէ նաև մեր մուազրութեանց և
մտածմանց նպատակի վերայ: Ամենայն մուած-

մունք որ մտադրած էինք կատարել, բայց
ժամանակի հանգամանքների անյաջողութեան
պատճառաւ մնացեր էին մեր մէջ լոկ մտած-
մունք առանց իրականութիւն ստանալու,
իբրև կատարուած գործ հաճելի և անհա-
ճելի է լինում Աստուծոյ՝ մեր դիտարու-
թեան նկատմամբ:

Դաւիթ մարգարէն, որ հրէից թագա-
ւոր էր, մտադրած էր Աստուծոյ համար մի
փառաւոր տաճար շինել, որպէս զի նորա
մէջ հանգչի տապանակ ուխտին, և լինի մի-
անգամանք նույն Աստուծոյ երկրագութիւն
անելու յատկացեալ տեղ: Այս շինութիւնը
թէւ չկարտրացաւ ինքը կատարել, այլ շի-
նեց նորա Ասղոմօն որդին, սակայն Աստուծո-
նորա նպատակի համար գովեց և օրհնեց իբ-
րև հեղինակ գործին: Բ. Թագ. Ե. 1—14:

Նոյնպէս և ամենայն մտածմունք, որ կա-
տարիւմ են միմիայն մեր անձնական օգտի
համար առանց լնկերի օգուտը ի նկատի ու-
նենալու անհաճոյ են Աստուծոյ:

Աւետարանի մէջ պատմած դատաւորի

առակը մեզ ապացոյց է այս մասին, որ թէւ
այրի կնոջ գատը տեսաւ, բայց գովութեան
տրժանի չեղաւ, այն պատճառաւ, որ նա այն
գործը միմիայն այրի կնոջ տուած ամենօրեայ
նեղութիւնից ազագուելու դիտաւորութեամբ
արաւ: Դ. ու. թ. 2—6:

4. Այս օրինակներից պիտի իմանանք,
նախ՝ որ մեր ամէն մտածմունքները թէ բարի
և թէ չար, թէ և իրականութիւն էլ չստա-
նան, սակայն իբրև բարոյական գործք պիտի
դատուին և ընդունին իրենց հատուցումը
դիտաւորութեան պատճառաւ: Եւ երկրորդ
ամենայն գործ, որ միմիայն մեր օգսւոր
նկատելով գործւում են, առանց ընկերի օ-
գուաթը ևս ի նկատի առնելու, գովելի կամ
սատաւուծոյ հաճելի չեն:

Այն ցանկաւթիւնը, որ սւնենում ենք մեր
սրուումը մի բարի գործքի օգնելու, կամ մէ-
կին ինչքը յափշտակելու կամ՝ դաշտանալու,
կամ մէկին վնաս տալու, թէւ միջաց չու-
նենալու պատճառաւ տակաւին անիրագոր-
ծելի մնան, սակայն իբրև դիտաւորեալ

մոածմունք կամ՝ ցանկութիւն պիտի ընդունին
իրենց հատուցմանքը։ Առաջ պատճեն գոյաց առաջ պատճեն է
5. Թիտուառութիւնը առաւելութիւն է
տաղիս նաև այն գործերին, որ բարեպաշտա-
կան մոօք ցանկանում ենք առաւելեօք օգ-
նել եթէ միջոց ունենանք։

Այրի կողջ գանձանակի մէջ ձգած լուման
աւելի հաճելի գործ է ցոյց տալիս մեր Փրկիչը
քան այն մեծապանց նուէքները որ նուիրու-
մէին պատճառ բերելով այն հանգամանքը,
որ նա իր քարորութեանը չնայելով նուիրեց։
Սար. Ժ. 43:

Այսպէս մէկ աղքատ եթէ բարի բաղձանք
ունենայ բարի դիտաւորութեամբ. և կատա-
րելու մասին անձեռնչաս լինի աղքատու-
թեան համար. հարուստների արած բարե-
պաշտութեան հաւաքար ընդունելի է Սո-
տուծոյ։

Այսն զի ամենայն գործ և մոածմունք որ
բարի գիտաւորութեամբ է. ոռորը և վար-
ձաորելի առաջինութիւն է. ևսկ եթէ բարի
գիտաւորութիւնից զուրկ է. թէ ևս նրանով

Աստուծոյ հրամայածն էլ լինինք կատարած։
Աստուծոյ տուածին ընդունելի չէ։

Օրինակ Մի տղայ. եթէ սրտի յօժարու-
թեամբ և սիրով չկատարէ ծնողաց հրամա-
յեածը, անչնազանդ կհամորուի, վասն զի
սրտի յօժարութիւնը և սիրով կատարուածն
գործի վախճանական սրակն է։

6. Այս առելով կուզեմ իմացնել թէ ամե-
նայն բարոյական գործ կամ մոածմունք, որ
կամենում ենք կատարել, պէտք է նորիապէս
ուշադրութիւն գարձնել մեր ներքին զգաց-
մանց վերայ. վասն զի զգացմունքը մեծ ներ-
գործութիւն ունի զիտաւորութեան և խոր-
հրդոց մէջ։

Այն անձը, որի սիրով լցուած է նախան-
ձու, ատելութեան, և չարութեան կրքերով.
նա չար գործելու աւելի հակամէտ կլինի քան
թէ բարի։

Քրիստոսի Փրկչին մերոյ բարոյականու-
թեան ճշմարիտ խօսքը այս մասն վկայում
է. «բարի մարդը իր սրտիցը բարի խորհուրդ-
ներ. իսկ չար մարդը՝ չար խորհուրդներ է»

արտադրում, որովհետեւ արտիցն են դուրս գա.
լիս ամենայն չարխորհուրդներ»: Մատ. ԺԲ. 35:

Վասնորոյ մեր գործքերը բարոյական լի-
նելու համար հարկաւոր է նախ՝ որ դիտաւո-
րութեամբ գործուին, և աստուածահանոյ և
վարձատրելի առաքինութիւնը լինելու համար
հարկաւոր է որ ուշագրտութիւնն զարձնենք
դիտաւորութեան բարեյ և չարի մասին. իսկ
բարի դիտաւորութիւն և առւրբ մտածմունք
ունենալու համար հարկաւոր է որ մեր ներ-
քին զգացմունքները կանոնաւորենք որբան որ
կարող ենք սուրբ մտածմունքներով:

ՀԱՐՑՄՈՒՆՔ.

1. Բարյական գործքերը որո՞նք ենք առւում, և
ինչո՞ւ բարյական են կազուում:

2. Գործքերից առաջ եկած հետեանքները ի՞նչ
կասուին:

3. Ի՞նչ բան է բնութեան գործքը կամ գործի
օրէնքը:

4. Արարիչը գործքերի հետ ինչո՞ւ պիտ հետեւո-
թիւնները կապած է:

5. Գործքերին ո՞րը բարի և ո՞րը չարի մասուին:

6. Անասունները ևս, որ բնութեան օրէնքով ի՞ն
գործում: Նոյն գործքերին կարո՞ղ ենք բարյա-
կան ասել:

7. Ընչու. — Ինչ է այն տարրերութիւնը որ մար-
դիկ և անասունք ունին:

8. Մարդս ի՞նչ իշխանութիւն որ ունի անանոց
վերայ նոյն իշխանութիւնը կարո՞ղ է ունենալ և
մարդոց վերայ:

9. Ընչու — օրինակ տուր:

10. Աւրեմն ո՞րն է մարդոց վերայ իշխանութիւն
բանեցնելու լաւագոյն կերպ:

11. Գործքերից առաջ եկած հետեանքները կա-
րո՞ղ ենք դիտուածական համարել սցցից մինչև

12. Բարւոյ և չարի զգացմունքից ի՞նչ պիտի
հասկանանք:

13. Աւրեմն գործքի բարյական լինելու յասո-
կութիւնը ո՞րն է:

14. Դիտաւորութիւնը ընչու գործքի բարյական
յատկութիւն է լինում:

15. Օրինակ տուր:

16. Թէ որ դիտաւորութեամբ մէկին վնասեմ մի
գործքով չար գործած կլինիմ:

17. Թէ որ նոյն գործքով մէկի հետ վարուիմ
առանց վնասելու դիտաւորութիւն ունենալու ու
չար հետեանքներ յառաջ գան յանցաւո՞ր կլինիմ:

18. Ընչու. — օրինակ տուր. անմեղական պահանջություն ունեցությունը կազմակերպությունը անմեղական է առաջարկավորությունը:
19. Անխօրհրդաբար եղած գործքերը ընչու անմեղականի են համարւում:
20. Օրինակ տուր անխօրհրդաբար եղած մի գործքի որ չար չէ:
21. Թէ որ մեկին բարիք անեմ միմրայն նորատուած ձանձրութիւնից աղոտուելու համար բարիք արած կլինիմ:
22. Ընչու. — օրինակ տուր.
23. Աւելապանի մեջ պատմած դատաւորք պարի կող գործը տեսնելով բարի՞ արած:
24. Թէ որ մի աստուածահաճոյ գործ կատարած միջոցին ընկերիս վնասիմ. իմ գործքս ի՞նչ կլինի չար թէ բարիք:
25. Թէ որ գիտաւորութիւն ունենամ մեկին վեհասել. ու վնասիմ. յանցաւո՞ր կհամարուիմ բարյապէս:
26. Ընչու.
27. Օրինակ տուր այնպիսի չար գիտաւորութեան որ չես կատարել:
28. Ցցց տուր. մարդիկ ինչպէս իրենց բնութիւնը կշարացնեն չար խորհութեանը ունելով:
29. Աւրեմն ինչ անելու ենք որ բարի գիտաւորութիւն ունենակը:

այսուհետ ամեն գործ գործադրություն պահի պահանջությունը կամ անպահանջությունը ունենալու անհնարինութիւնն է:

ՅՈՒ. Ա.

1. Մարդուս ամեն բարոյական գործքերը կախուած են խղձից. թէ որ խիղճը անզգայութեան ենթարկուած չէ՝ նորա թէ խորհութեան բնութեամբ կամ գործքերը կլինին բարի և հաճոյ Աստուծոյ. իսկ եթէ զգայումից զբրկուած է, կլինին չար և անհաճոյ կամ մեղանշական: Վասն զի խիղճը մեր բնութեան մէջ սահմաներ է Աստուծուած. իբրև ուղիւնաւան և դատաւոր գործոց, որ իր ազգուներգործութեամբ զգուշացնում է մեզի. ինչ որ խորհում և մոտագրուում ենք գործել:

Բայց թէ ի՞նչ բան է խիղճը, և նորա ներգործութիւնը ի՞նչպէս է երեսում բնութեան մէջ հարկաւոր է խօսել:

2. Յայսնի է, որ ինչպէս մեր մոտաւոր գործողութիւնը կատարելու համար հարկաւոր է միտք ունենալ. վասնզի առանց մոտաց

խորհել չենք կարող ու մտքին հետ յիշովութիւն՝ որ կարողանանք մեր խորհածը միտք բերել այնպէս էլ յիշողութեանը հարկաւոր է դատելու կարողութիւն։ որ կարող լինինք նորանով չարն ու բարին կամ վնասակարը և օգասակարը որոշել։

Այդ դատան կարողութիւնից յառաջ եկած զըր-Նետանը, որ մեր սկրար այլ և այլ զգացմանց է ենթարկում, ասում ենք ինչ:

3. Խղճի զգացումը տարածվում է մի օրինակ թէ առ Աստուած և թէ առ ընկերն կամ առ մարդն ունեցած պարտաւորութեանց վերայ։ Օրինակ, Երբոր սուտ եմ խօսում։ կամ Աստուծոյ նուիրած օրը պղծում եմ։ Խիստ իմ օրինազանցութիւնս զգացնում է ինձ։ և իմ մէջս զարթեցնում է երկիւղ, նոյնպէս երբ որ ընկերիս մի վնաս եմ տալիս, խիստ իմ յանցաւորութիւնս ի ներքուստ վկայում է, թէ և արտաքուստ ինձ պատժող կամ յանդիմանալ էլ չունենամ։ Սրանից պարզ պիտի իմանանք թէ ի՞նչ է խղճի ներգործութիւնը։

Խղճի ներգործութիւնը ամեն մարդ կարող է իմանալ երբ որ մի որեւիցէ բարոյական գործ կատարելից յետոյուշադրութիւն դարձնի իր ներգին գալոցմանց վերայ։ Տեսնում ենք, երբ որ մէկին բարիք ենք անում մի ներքին ուրախութիւն ենք ունենում։ իսկ եթէ չարիք տրտմութիւն, որ աւելի ևս ծանրանում է այն ժամանակը՝ երբ որ փմանում ենք, թէ մեր չարագործութեանց ենթարկուածը մի խեղձ ընտանեաց աէր է, որոյ մասին աւելի վշտակրում ենք մենք զմեզ մեզապարտ համարելով։ 5. Խղճի ներգործութիւնը երեւումէ նա և մեր մոտածմանց մէջ, երբ որ իրու բանական մարդիկ անդրադառնալով, կշռագասում ենք մեր մոտածմանց հետեւութիւնները. կամ օգուտը և վնասը։ Օրինակ— Նատ անգամ պատահած է, երբ որ մէկի վերայ բարկանում ենք և մոտագրիլում ենք վնասել։ սկսում ենք մեր մոտաց մէջ խորհել այս բանի վերայ առնչւթէ նէր։ Եթէ այս խորհուրդը մեր բանականութիւնը ուղղեցոյց պանելու կատարում ենք

նորա հետեւթիւնները ամեն պարագաներով
կշռագատելով տեսնում ենք որ աւելի օգտ
տակար և աւելի խոչեմութիւն ենք համա-
րում ճառարիթաւ գործեցից յետ կենալ։ Մտա-
գրութեամց և խորհրդոց այսպէս այլափո-
խելու ստիպողը լինումէ մեր խիզճը, որին
եթէ հնազանդում ենք, լինում ենք բնու-
թեամբ բարի խակ եթէ ոչ՝ լինում ենք բնու-
թեամբ չար։

6. Այլ թէ ի՞նչ նպատակով խիզճը իր ներ-
գործութիւնով այսպէս զօրաւոր արածէ
Աստուած, ամեն մարդու սպարտքն է իմանալ։
Արովչեան բնութեամբ բարի է Աստուած,
և կամենում է, որ միշտ լինինք երջանին,
վասնորոյ խզճի պատրինքը մեր մէջ հասաւ-
տեց. որպէս զի նորա ներգործութեամբը
զգաստանալով, մեր կեանքը կանոնաւորենք,
և բնութեան անզուսպ ձգտումները չափա-
ւարենք։ Երանելի կլինինք եթէ խզճի ձայնին
աւելի հնազանդենք, քան թէ մեր կրիցը հե-
տենք, որպէս չեան, նրանով ամեն տեսակ
թշուաւութիւնից ագատալքելով, մեր երկ-

րաւոր կեանքում կլինինք միշտ երջանին
ոչինչ երկիւղ ջունենալով ոչ Աստութոյ արգա-
րակատ պատուհատից, և ոչ ամօժ կամ սրտի
տագնապ մարդկային վրէժինդրութիւնից։
Այսպէս է ասում և առաքեալը «եթէ մեր
խիզճը մեղ չէ յանդիմանում, ուրեմն Աս-
տութոյ մօտ համարձակութիւն ունենք»։ Ա.
Յոհ. Գ. 21:

ուստի յ նույն մայն առաջանակ ու զանա մ մ
խոյնուն և յանդարձուն այս պահանջանակ ու
առաջ չ առ այս գործուն այս յանդը
ու թէ խեցք, ՄԱՐԴՈՑ ՄԵԶ ԻՆՉՊԵՍ ԿՀՕՐԱՆԱՑ ու
ես ի՞նչպէս ԿՏԿԱՐԱՆԱՑ։

1. Ինչպէս մեր մարմնոյ արտաքին զգացու-
րանքները գործածելով զօրանում են ։ Խակ
անգործ թողնելով տկարսնում ։ այսպէս էլ
խիզճը սաէսպ սուէպ գործածելով կզօրանայ,
և չգործածելով կտկարսնայ. և գրեթէ կոչն-
չանայ։ Ընդունած ճշմարտութիւն է։ թէ
մոտաց յիշողութիւնը մարդոց մէջ այն ժամա-
նակին է զօրաւոր լինում, երբ որ մի անգամ
լսածը կամ կարդացածը մտաց մէջ կը կնում

Ե քանիցս անգամ, և մոռացկոտ, երբ որ
անհոգութեան մէջ է թողնում։ :

Ուրեմն որքան խիզճը ստէպ ստէպ գործա-
ծենք մեր ամէն գործ առնաւթեանց չարն ու
բարին կամ վնասակարը ու օգասակարը որո՞
շելու մասին. այնքան հեշտութեամբ կարող
ենք որոշել թէ մեր գործոց որն է արդար և
որը անիրաւ։

Այն անձը, որ սովորութիւն արած է միշտ
իր գործոց վերայ անգրադառնալ և մտածելով
քննել թէ արդեօք բարի էին թէ չար, տես-
նում ենք որ նա հետզհետէ իր թերութիւն-
ները ուղղելով աւելի յառաջադէմ է վնաս
բարիք գործելու մէջ։ Խսկ այն անձը, որ ու-
նակութիւն արած է նախ քան գործելը խղճի
վկայութեամբ նորա լաւ ու վաստ կողմերը
քննելով և նորա հետեւանաց վերայ խորհր-
դածելով գործել. այնպիսին իր գործքերը
աւելի ուղիղ է կատարում։ կամ քիչ անգամ
սինալւում։ Այս բարյան քննիչներուն բառն
Այս օրինակներից պարզ կարող ենք իմա-
նալ թէ որքան օգտակար է մեր հոգեկան կա-

բողութիւնները խղճի ձեռքով զօրաւոր առ-
նելու մասին հոգատարութիւն ունենալ։

2. Խիղճը երկու միջցողվ կզօրանայ։ առա-
ջնը բարի գործքերի վերայ մուածելով։ Որւ-
քան այս տեսակ մուածմունքներով յառաջ
երթանք այնքան կարող կլինինք հեշտու-
թեամբ հեռացնել մեր մտքերը այն գործքերից
որ չար են, և սովորական գարձնել բարիք
մտածելն ու գործելը։ Խսկ երկրորդը բարի և
առաքինի անձանց յիշատակը և գործքերը
միտքերնիս բերելով։ Այս պարագայիս մէջ
պէտք է մեր խորհուրդները նոցա խոր-
հրգոց հետ և մեր գործքերը նոցա գործքերի
հետ համեմատենք և կշռելով խմանանք թէ
ինչ կամ որքան զանտգանութիւն կան մեր
և նոցա մէջ։ Վասն զի բարի և առաքինի լի-
նելու մասին տուաջին և գլխաւոր ջանքը ձա-
նացուած է այն, որ Աստուածահանոյ անձանց
կենցագավարութեան օրինակը մեր յիշողու-
թեան մէջ ունենալով նոցա նմանելու հետե-
ւենք. ինչպէս որ Պողոս առաքեալը նոյնը պա-
հանջումէ ամեն հաւատացեալներից՝ որ Յառ-

յելա շպառնեան, Եղբայրուիրունեան, Աստուածա-
պաշտութեան առաջինի և սուրբ կետնի ունցելու
մասին իշեն ամանեան, Գործուով և խորհրդա-
Ար Կողն. ԺԱ. 1. Խբ. 2. 12. Տար Վայ զայ
Բայց սրովհետեւ մարդիկ դեռ և առ ամքան
կատարելութեան տառիճանի հատած չեն, որ
կարող լինին միմեանց Աստուածահանոյ կեն-
ցաղավարութեան և տռափինութեան կենդա-
նադրիալ գառնալ, ուստի կատարեալ բարի և
առաքինի լինելու մասին աւելի լաւ է, որ
միմեայն Քը բազոսի աւատան Թշոյ օրինակին հե-
տեւնք նորա երկրաւոր Հորդը և մարդոց
հետ ի գործ դրած կենցաղավարութեանը մեզ
օրինակ առնելով:

Յ. Քրիստոս Փրկիչն մեր, որոյ բուն դիտա-
ւորութիւնը էր միայն որ մենք մարդկութեան
կատարելութեան մեջ գայլնիւ առանց կեղ-
ծաւորութեան, իր բարոյական վորդապե-
տութեան մէջ պահանջում է քրիստոնեա-
ներից որ բաց ի Երիտառ հօրեց ոչ ոք բա-
րոյական կատարելութեան օրինակ չունե-
նանք:

Եղերուք դուք կատարեալ որպէս և հայրն
ձեր երկնաւոր կատարեալ է, զի արեգակն իւր
ծագէ ի վերայ չարաց և բարեաց և ածէ
անձրեւ ի վերայ տրդարոց և մեղաւորաց»:
Մաս. Յ. 45—48:

Ազաւուրեմն աւելի ուշ պիտի դարձնենք.
թէ նա խնչպէս գմբած է նոցու վերայ, որոնք
ուկարութեամբ կմեղանցեն. և ի՞նչպէս իր
խնամքը կտարածէ առհասարակ չարու բարի,
մոլի և առաքինի մարդոց վերայ անխոտիր. և
մի օրինակ, նոյնպէս նրան հետեւելով՝ մենք
ևս նոյն օրինակ կատորելութիւն պիտի ցոյց
տանք առ միմեան:

Աշխարհի երեսից ի՞նչ լարեներ կպակ-
սէին, և մարդիկ ի՞նչ Երջանին կեանք կու-
նենային. եթէ այս վսեմ օրինակին նմանելու
ջսնք անէին. կենդանի խղձիւ կշռելով իրենց
մտած մունքները իրբեւ մտաւոր և բանական
Աստուածատիակ էակներ:

Խղձի զօրանալու կամ կենդանի պահելու
մասին այս չափ խօսելից յետոյ, հիմոյ եւ
խօսենք թէ ի՞նչպէս կտէրանայ. և ո՞ր պա-

բազաներով իր ներգործութիւնը մեր մէջ ազ-
գելում անոք կդառնայ ։ ասավ առաջին ուժ
4. Խիզճը կակարանայ նոյնպէս երկու հան-
գամանքներով, նախ՝ երրոր մեր գործոց բա-
րոյական յատկութեանց վերայ ուշադրու-
թիւն չենք գարձնել ։ կամ մի գործ կատարած
ժամանակին նորա բարի կամ չար լինելու
մասին չենք մտածել ։ Եւ երկրորդ՝ երբ որ
յար բաներ տեսած ժամանակ՝ նոցատպաւո-
րութիւնը մեր մտած մէջ կընդունենք ։ և
նոցա օրինակին հետեւելով մեր հօգեկան կա-
րողութիւնը չար մոտածմունքների կենթար-
կենք :

5. Փորձուած ճշմարտութիւն է, որ նորա-
հաս տղամ, որի բանաւորութիւնը ու ձանաշո-
զական զօրութիւնը նոր բացուած է ։ երբ մի
անհաճոյ առարկայ է տեսնում, առաջին ան-
գամին տհաճութեան զգացմունք է ցայց տա-
լիս ։ բայց եթէ նոյն առարկան մի բանի ան-
գամ տեսնում է, այնուհետեւ տհաճութեան
գաղափարը իրանից հեռացնելով ինքն և ա-
հաճութեամբ հետեւումէ նոյն առարկային :

Այս օրինակից պիտի իմանանք, որ եթէ
ցանկանում ենք խիզճերնիս արթուն և վար-
քերնիս անարտա ուղղութեան մէջ պահել,
հարկաւոր է զգուշանալ ։ նախ՝ չար գործքեր
տեսներուց, և երկրորդ հեռանալ չարագործ
անձանց ընկերակցութիւնից ։ այս պատճենից ։

6. Գուցէ պատահի մէկն, որ չարիք գոր-
ծելու մէջ սրտի առհանգուառնիւն չէ ունե-
նում ։ կամ իսպանի խայլ չէ զգում, թող
չկարծէ այնպիսին որ իր այն գործը արդար
է ։ ընդհակառակն այն վիճակը եթէ դժբաղ-
տաբար մէկը ունենայ, լաւ պիտի մտածէ ։ որ
Անուն-Ձոյ Երևակն կամ ինաւածից ընկելու նշան
է, Անս զի Աստուած որ երբէք մեղաքորի
կորուսոր չէ կամենում ։ առաջին անգամ
յոնցանք գործելիս նրան խղճի խայթով ցա-
րագործութեան թմբութիւնից զգացաւացնում
է, բայց երբ նորա անզգայութիւնը կաենի ։
կդադարի այնուհետեւ իր խնամոց շնորհը
ցողելուց, որ այն ինքն է խղճին ներփարծող
խայթը ։ ինչու ծառակար ։ Ան առան

7. Զարագործաց այս վիճակը, այսինքն

նոցա խղճի անդայութեալը կոռնէ մինչեւ մահամերձ հիւանդութիւնը, այնուշետեւ կոկոի զօրաւոր կերպով ներգործել, որպէս զի յաւի տենականութեան մէջ լինի մեղաւորի համար տանջանաց և թշուաւութեանց աղբիւր։ Այս է Քրիստոսի Փրկչին մերոյ ասած՝ « որ չի մեռնի, և կուց որ չի հանգի։ Մատի. թ. 43. 44. 47. »

8. Մինչեւ հիմայ, ինչ որ ասացինք, իմացանք, նախ, թէ որչափ, ատէալ պտէալ քարիք գործելու վերայ մտածենք, այնչափ հեշտութեամբ կարող ենք յառաջադէմ լինել բարեգործութեանց և առաքինութեանց մէջ. և երկրորդ թէ որչափ յանդանաց փորձութեանց հակառակեմք, այնչափ յաղթանակ կկանգնենք. և առաքինութիւն գործելու պատրաստ կլինինք։ Խոկ ընդհակառակն որչափ չարասէր լինիմք նոյնչափ դժուարութիւն կղզամք առաքինութիւն և բարիք գործելու միջոցին։

Վասն զի չարիք գործելու սովորութիւնը մեր մտաց մէջ տողաւորուած լինելավ՝ մեր սրտի յօժարութիւնը աւելի հակառէտէ անում գե-

ոլի չարագործութիւնը։ Այս մասին Աստուածինին վկայում է Սուրբ Գրոց մէջ « մարգոց միտքը մանկութիւնից չարի կողմը հաստատուած է. ամէն սք հօգտատարութեամք գէպ ի շարին է առաջնորդում »։ Ծն. Զ. 5.:

9. Ապա ուրեմն այս վիճակից, որ մեզի գէպ ի թշուաւութիւնն է առաջնորդում, ազատ առնելու համար, հարկաւոր և անհրաժեշտ է, որ մեր խիղճը կենդանի պահեմք. իսկ նորա ներգործութիւնը մեր մէջ զօրացնելու համար. թող տալով կամաւ որ մեր խիղճը տանջէ զմեզ՝ երբ որ զիալուածով չարիք ենք գործում։

ՀԱՐՅՄՈՒԻՆՔ.

1. Ի՞նչպէս գիտես, որ խիղճ ունիս։
2. Խղճի ներգործութիւնը ի՞նչպէս է երկում։
3. Աստուած ինչո՞ւ խիղճը այսպէս զօրաւոր արած է մարդու մէջ։

4. Երբ որ ծնողացդ անչնաղանդ ես լինամ. խիղճդ քեզ ի՞նչպէս է ազդում։
5. Երբ որ Աստուծոյ օրինաց գէմ ես գործում ի՞նչ զգացում ես ունենում։

6. Այդ զգացումները, ո՞ր բանից յառաջ են դպիս:
7. Մեր բարօյական գործքերի հետ խիղճը յարաբերութիւն ունի՝ թէ ոչ:
8. Խիղճը մեր մէջ կարո՞ղ է գօրաւոր կամ տկար լինել:
9. Օրինակ առւր:
10. Ի՞նչ միջոցով է զօրանում. և ինչ միջոցով տկարանում:
11. Զար գործքեր կամ տեսարաններ ստեղ ստեղ տեսնելով խղճիւր վերայ ի՞նչ ներգործութիւն եւ զգում. իսկ բարի գործքեր կամ տեսարաններ՝ ի՞նչ:
12. Անրան կենդանիների համար կարո՞ղ ենք ասել. որ այս տեսակ զգացումն ունին:
13. Երբ մի չար բան կուզէիր անել. ընաւ քո մէջդ արգելող զօրութիւն զգացի՞ր. որ մի՛ անէք կասէր. և ի՞նչ էր այն. որ արգելեց:
14. Ստափօս, խարերայ և անգութ մարդոց ատում ես. ի՞նչ բան է այն, որ քեզ այնպիսիներին ատել է ստիպում:
15. Մի աղայ, որ շարութեան գործում կդանուի, այնպէս ուրախ գէմք կարո՞ղ է ունենալ. ինչպէս թէ բարի գործում դժուուէր:
16. Ընչո՞ւ համար չար մարդը շուտով յայտնուում է:

17. Զարութիւն գործողները ընչո՞ւ համար երկուդի և ամօթոյ զգացում կունենան:
18. Պատահումէ, որ չարիք գործելու միջոցին խիղճը ազդեցութիւն չէ անում. ի՞նչ պիտի իմանանք նրանով:
19. Խղճի անզգայութիւնը ե՞րբ կարող է սմափուիլ:
20. Բարի մարդիկ ինչո՞ւ հանգիստ սրաով են մեռնում. խկ չարագործները՝ տանջուելով:
21. Ի՞նչ միջոցների պիտի դիմենք որ խիղճը իսկ կենդանացնենք:
22. Եթէ մտածենք ու մեր չար ու բարի գործքերի վերայ խորհենք. ի՞նչ օգուտ կունենանք:
23. Առաջինի անձանց հետ ընկերանալով ինչ օգուտ կունենանք:
24. Զար մարդոց հետ ընկերութիւն անելու հետեւութիւնը ի՞նչ է. և բարի մարդոցը՝ ի՞նչ:
25. Ո՞ր մարդը բարօյական բաներու վերայ լաւ գատողութիւն կանէ. բարի՞ն թէ չարը:
26. Եթէ երջանիկ լինել ուղենք ի՞նչպէս գործելու ենք:
27. Խղճով գործելով կարո՞ղ ենք անիրաւութիւն ել գործած լինել:
28. Ի՞նչ նշան է. երբ չարիք գործելու միջոցին խղճի խայթ չենք ունենար.

ԳԼՈՒԽ Դ.

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆԸ ԹԷ Ի՞ՆՉ է.

1. Արդէն գիտենք, որ մարդիկ ստեղծուած են Երջանին լինելու համար թէ հանդերձեալ կեանքում, և թէ ներկայ երկրաւոր կեանքում:

Գիտենք նաև՝ որ մարդուս հանդերձեալ կենաց երջանկութիւնը կայանում է Առաջուածային գորուաց պեսո-նեան Ալբայ, որով մարդիկ հոգեզմայլութեամբ տեսնելով Աստուծոյ փառքը գէմ յանդիման տեսութիւնը պիտի լցուին անպատմելի երջանկութեամբ: Ուստի հարկաւոր է այժմ գիտենալ: Թէ Բնչ է երկրաւոր կենաց երջանկութիւնը, և Բնչ բաների վերայ է կայանում:

2. Երկրիս վերայ զանազան առարկաներ ենք տեսնում, որոնք մեր շուրջը դրած է բնութեան արարիչը, որովէս զի նրանց նայելով զգալի կերպով երջանկութիւն վայելնք, Այս առարկաները միմեամցից տար-

բերւում են տեսակօք, համով, հոտով, տեսքով, կամ գեղեցկութեամբ և այլ հանգամանքներով. որոց ամենի վայելումը մեր սրտի փափագածին համեմատ՝ կոչւումէ երկրաւոր երջանկութիւն:

3. Բայց սրանք իրենց պարգևած հաճոյականութեան և սրտին պատճառած զուարձութեան նկատմամբ մեզանում զանազան անուններով են իմացւում: Օրինակ՝ Այն առարկաները, որ մոքի վերայ են ազդում, և մոքին մտաւոր հաճութիւն են պատճառում, առումեն ճառասրական հաճո-նի-ն, ինչպէս են երաժշտութեան ձայնը, ծաղկանց գոյնը, հոսք, ևս և զանազան տեսակ թէ լեռնային և թէ դաշտային և արհեստական տեսարանները:

Այն առարկաները, որ սրտի վերայ են ազդում, կոչւում են ընկերական հաճո-նի-ն կամ երջանկութիւն. ինչպէս սիրելեաց և քարեկամաց ազգականաց և ընկերաց գլուխաւոնութիւն:

Իսկ այնոքիկ, որոնք հոգւոյ զգացմունք-

Ներիւլերայ ազգելով, սիրտը ուրախացնում
են՝ կոչում են բարոյական հաճութեան, որոց
վերայ կայսութեան մարդուս երկրաւոր կենաց
ճշմարիտ երջանկութիւնը:

4. Երկրիս վերայ տարածուած այս առար-
կաները մեր երկրաւոր երջանկութեան ազ-
րիւրներն են, որ եթէ Աստուծոյ նախասահ-
մանածին համեմատ վայելենք, մեր երջան-
կութիւնը կունենանք:

Ատկայն պէտք է գիտենալ որ նոցա պարգե-
սողը ամենին էլ չափ կամ սահման որոշած է,
որից եթէ անցնենք, կլինին նոքա մեզ համար
աղջջանկանեան աղբիւր: Օրինակ—Ամէն ու-
տելիք, որ ճաշակելով զուարթանում ենք,
եթէ չափիցն աւելի ուսենք, տկարացնելով
մեր կազմուածքը ենթարկում ենք թշուտ-
ուութեան, վասն զի նրանից հետեւում է
զգուանք, հիւանդութիւնք և մահ, կամ
իմելագարութիւն և մտաթափութիւն: Ու-
րեմն երկրաւոր երջանկութիւնը սահմանա-
փակուած է ռժառա-ըս-նեան մէջ, որից անց-
նելը իւանգարումէ երջանկութիւնը:

Այսպէս պիտի իմանանք նաև բարոյուկան
երջոնկութեան մասին: որ յատուկ անուամբ
առաջնութեան է կոչում, և մերաբերումէ
յԱսուած: օրինուկ — ՁԵՐ ԹՇՈՒԱԿԻ-
ՉԱՆԵԱՆ: Խորակիչն էւանք: Տահայունն բնու-
նեան, և այլն: որ եթէ յափաղանցենք, կը հե-
տեի մարմնոյ տկարութիւն, և շատ անգամ
ջերմեռանդ բարեպաշտութեանը կփախարինէ
որպայէլութեան: և յուսուհաւութեան:

5. Երկրաւոր երջանկութիւնը օրինուոր
և օգտաւէտ կարգավ վայելելու համար Առա-
քեալը խրատումէ այսպէս: ածնայն ին ՁԵՐ
շառ կարդի և աղբիւշուտեամբ լինչցին: Ա: Կոյն,
Ժ.Պ. 40:

Այս խօսքերից պէտք է միտք առնենք, որ
մեր ամեն երկրաւոր հաճոյնելը վայելու ժա-
մանակ մեզ կանոն պիտի ունենանք կարդը և
պարէշլառնենը:

Եւ այս կլինի միմիայն Աստուծագիր բնու-
թեան բարոյական օրէնքին հնազանգելով, և
նորա սուրբ կամաց և խմաստուն կարգագրու-
թեանց հպատակելով: Խակ եթէ՝ բնութեան

օրէնքին անուշադիր լինելով, միմիայն մեր
անձը պարաբելու համար ապրենք, Աշուառ և
աղջղանչի ենք։ Համ. ՓԶ. 18. Փէլ. Գ. 19.

6. Ա. թէ որո՞նք են այդ օրինաւոր սահ-
մանը, հարկաւոր ենք համարում կարգով
դնել։

Ա. Բարչխառնութեան ուտելու և խմելու
մէջ, վասն զի մեզ ամեն քարիք պարգևող
Աստուածը սահմանած է որ չափաւոր ի գործ
դնենք. այսինքն այն ամէնը մեզ օգտակար
լինելու չափ ուտենք և խմենք. որոյ չափա-
գանցը անհարչխառնութեան լինելով, մեր ստա-
մոքսը կծանրացնէ, և թմրութեան մէջ ձգե-
լով կենթարկէ անհանգստութեան և անգոր-
ծութեան։

7. Մէլ կանուլ աշխատանք անան վարժե-
ցնել կրթելով մեր արտաքին զգայարանք-
ները, վասն զի առանց աշխատութեան կե-
նալով շուտով մեր մարմինը կտկարանայ. և
զանազան հիւանդութիւններ կհասնին մեր
վերայ, այնուհետեւ ոչինչ բանից հաճութիւն
չզգալով, ոչ գիտութիւնից և ոչ զրօնանքից։

կլինիմք ծոյլ և գանդաղ ինչպէս մարմնով,
նոյնպէս և մոօք։

Գ. Ընթերցաւեր լինել։ Ամէն մարդ պարտա-
կան է իր մաքի լուսաւորութեան հոգ տանել,
թէ արտաքին իմաստութեամբ և թէ Սուրբ
Գրոց և Աստուածային պատգամաց տեղեկու-
թեամբ զարդարելով, ինչպէս որ Քրիստոս
Տէրն մեր ևս նոյն պատվիրումէ, « Ամէնքդ
էլ Աստուծոյ գիտութիւնը սովորած լինե-
լու էք »։ Յովի. Զ. 45։

Բայց այս ասելով չեմ ուզում ասել, որ
մեր կենոց ամեն ժամերը ուսմամբ կամ ըն-
թերցանութեամբ պիտի անցնենք. որ կեան-
քին աւելի վասնգ կրերէ քան թէ օգուտ.
այլ կուզեմ ասել, որ ամեն մարդ պէտք է
օրական ժամերին մին կամ երկուսը իր
գործըի ներելու չափով ընթերցանութեան նուի-
րէ, միտքը լուսաւորելու համար, որով աւելի
ևս հաճութիւն կզգայ իր կեանքում։

Դ. Բարչեւեր լինել թէ բնութեամբ թէ սո-
վորութեամբ թէ սրտով և թէ գործքով.
այսինքն ամեն ժամանակ պատրաստ լինելու

ենք ինչպէս Աստուծոյ հնազանդութեամբ և
խոնարհութեամբ ժառայէլ. նոյնպէս և մեր
ընկերին կարեցունեած օժանդակէլ, որով
մեր երախտագիտութիւնը ցոյց տուած կը
լինինք Աստուծոյ, և նորա նմանութիւնը մեր
վերայ կկիրապարանեմք:

Առ ընկերս բարետէր լինելով, կլցնեմք մեր
սիրով յաւիտենականերջանկութեամ յուսով:
Եւ Կրօնակիցունիւն ունենալ. ինչ որ մեր
հոգեւոր պարոքն է առ Աստուծով և առ Եկեղէն
սրտի հաճութեամբ կտարելու ենք,
գիտենալով, որ կրօնոսիրութիւնն է միմիայն
մեր հոգեւոր երջանկութեամ ազքիւրը:

Զ. Ընէլքառէր լինէլ. որ պիտի կատարենք
ընկերոջ երջանկութեանը նպաստելով թէ
հոգեպէս նորա մտանոր կրթութեանը հոգ
տանելով, և թէ բարոյապէս Աստուծահա-
ճոյ կեանք վարելու կերպը ուսուցանելով,
մեր անձին և այլ բարեսիրու և ընկերասէր
անձանց կեանքը և Քրիստոսի մարդասիրու-
թեան օրինակը նոցու առաջ դնելով:

Դ. Բարոյական մարդու սրտի ուրախու-

թիւնը առաւել այն ժամանակն է երեսում,
երբ որ տեսնում է ընկերի խաղաղ և բարե-
կեցիկ վիճակը և կենաց անդորրութիւնը բա-
րեկարգուած բարոյականութեամբ և մարմնոյ
ուրիշ կատարելութեամբ:

Տ. Եթէ ամեն մարդ Աստուծային սուրբ
պարտականութիւն համարէր շատայլ և զե՞ն
կեանք վարելից զգուշանալը. և անօգուտ
տեղը Հայուած որբածը բարի նպատակի հա-
մար յետ ձգէր թէ իր որդւոց բարոյակոն
կրթութեան և թէ այլոց օժանդակելու
նպատակու, այնպիսին որբան երջանկու-
թիւն պիտի ունենար իր կեանքում աեսնելով
իր բաղձանքը կատարելագործուած. վասն զի
ճշմարիտ երջանկութիւնն է ընկեցն երջանին
պէսնել:

Այս ամեն բարոյական սլորդաւորութիւն-
ները լիտիին կարող ենք ուսանել Աստուծա-
շունչ Սուրբ Գրքից, որ միմիայն ճշմարիտ և
իսկական աղքիւրն է բարոյական կատարե-
լութեան:



ՀԱՐՑՄՈՒՆՔ

1. Թէ որ մարդս երջանկութեան համար ստեղծուած է նորա երջանկութիւնը ո՞ւր է կայանում։
2. Ո՞րն է երկնաւոր երջանկութիւնը, և ո՞րը երկրաւորը։
3. Սիրելեաց և բարեկամաց ներկայութիւնը ի՞նչպէս է երջանկութիւն համարւում։
4. Երկրաւոր երջանկութեան աղբիւրը, բաց ի սիրելիներից, որը կհամարուի։
5. Ընչէ՞ն գիտես որ երկրաւոր բարիքները որ մեզ հաճոյ են երևում, տուած է Աստուած մարդուն երջանկութեան համար։
6. Երկրաւոր երջանկութեան համար սահման դրա՞ծ է Աստուած։ և ո՞րն է։
7. Երկրաւոր երջանկութիւնը օգտակար կերպով չափաւորապէս վայելելու համար Պօղոս առաքեալը ի՞նչ կանոն է աւանդում։
8. Այդ կանոնից ի՞նչ պիտի իմանանք։
9. Ո՞ր և իցէ զուարձութեանց մէջ կարգ և պարկեշտութիւն ունենալ ասելիցդ ի՞նչ ես հասկանում։
10. Օրինակ տուր։
11. Թէ որ մեր անձնական հաճոյից հետեւիք, ի՞նչ կլինինք։

12. Երկրաւոր երջանկութիւնը չխանդարելու համար ի՞նչ սահման կամ կանոն է աւանդում Սուրբ Գրոց մէջ։
13. Այդ սահմանը կամ կանոնը Ճշտութեամբ պահպանելու մասին բնութեան մէջ օրէնք գրած է Աստուած։ և ընչո՞վ ենք իմանում։ որ օրինազանց գտնուած ենք։
14. Թէ որ չափազանց ուտելովդ անձդ կամ ստամբուդ վնասում է բնութեան օրէնքով, ուրեմն ի՞նչ է կամենում Աստուած։
15. Ուսման հետեւլը կամ միտքը ուսմամբ զարդացնելը մտաւորական երջանկութիւն կարելի՞ է համարել։
16. Օրինակ տուր։
17. Ի՞նչ զդացում ես իմանում քո մէջդ՝ երբ որ մի նոր բան ես հնարում կամ մի գժուարակուծելի խնդիր մտքով գտնում ես։
18. Աւրեմն բացատրէ ո՞րն է քեզ ցանկալին, զգայական բազմանքը թէ մտաւորական հաճութիւնը։
19. Թէ որ մէկը միայն ուտել խմելու կամ իր հաջորդ կատարելու հետ լինի ընչի՞ ինմանի։
20. Բարոյական մարդու սրտի ուրախութիւնը ո՞ւր է կայանում, զգայական բաղձանքը կատարելում թէ մտաւոր զարդացման մէջ։

21. Ճշմարիտ բարոյականութիւնը առջ տեղից
պիտի ուսանիմք և անձ մանաւ ու ու զնաւ:

22. Սուրբ Գիրքը ընչո՞ւ միմիայն ճշմարիտ բարոյականութեան աղքիւր և համարւում:

ԳԼՈՒԽ Ե.

ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

1. Սուրբ Գիրք ասում ենք Հին և Նոր
Կտակարանին, որ Աստվածաշարժուն Գիրք է
կոչում: Այս գրքի մէջ գրուած են Աստուծոյ
պատճառները. օրենուները, և մեր բարոյակա-
նութեան վերաբերեալ ամեն պարագաները-
նիւները, որ անինք առ Աստուծ և առ
մարդիկ:

Այս Գրքի նպատակն է յայտնել Յոդիւնաց
Աստվածոյ կանոնը, որի մէջ բացայացտ ցոյց է
տրուած թէ ի՞նչ է կամենում Աստուծ. որ
մենք գործենք. այլ և յայտնում է նոցա
իրենց Ձշաղարք լինելը, որոյ պատճառաւ
գրկուած են այն երանաւէտ երջանկութեան
փառքից, որոյ համար ստեղծուած էին:

Այս Գիրքը յայտնում է նաև մարդկանց
թշնամութեանը, որ Յիսուսի Քրիստոսի
Աստուծոյ որդուոյ միջնորդական զոհիւ ու
նեցանք, ևս և այն յաւիտենական կենաց
խոսքութեանը և Երջանկութեանը, որ պիտի ու
նենանք երկրաւոր կեանքից յետոյ, եթէ Աս-
տուծոյ կամոց և օրինաց համայայն կենցաղավա-
րութեան ունենաւուն:

ԱՅՍ

ՅՈՒ, Ա

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

1. Հին Կտակարանը պարունակում է իր
մէջ Ա. աշխարհքիս արարջագործութեան
պատմութիւնը, և մարդուս սաեղծումը: որով
և ուսուցանում է մեզ Աստուծոյ հարազա-
նիւնը, և բարութեանը:

Բ. Անջնազմանգութեան պատճառաւ ան-
կումը, և նորա Աստուծոյ տուած փրկութեան
յոյսը, որով և ուսուցանում է Աստուծոյ
արքայութեանը և Գլուխութեանը:

Գ. Զրհեղեղի անցքը, որով Աստուած աշխարհու և բոլոր երկրաւոր արարածները մարդոց մեղաց և անօրէնութեանց շատանալու պատճառաւ պատուհանեց, և նորանով ուսուցանում է մեզ Աստուածոյ բաշխութիւնը և սոլուանակիւնէցը մեղաց և անօրէնութեանց դէմ. այլ և գիտենալ թէ որքան Աստուած Էտից և ողբանձ է, այնքան և արդարութեամբ կը ժինուիր և իրաւամբ հափուցանով է մեղաց և անօրէնութեանց:

2. Հին կոտակարանը պատմում է և Աբրահամի հոլովը, որ լինի Հոյր Հաւատոյ ազգաց բազմաց, և նորա սերունդի ընտրութիւնը, որ լինին ծիրոջ ժողովուրդ. Հաստատելով նոյամէջ այն փրկութեան խոռոչն հաստարունը, որով կանխաւ յուսադրած էր մարդոյն, և պիտի կատարէր խոռոքացէալ վաւակի Յիսուսի Քէջուսի ձեռօք և նորա միջնորդական մարմնոյ պատարագիւնը, որով և ուսուցանում է Աստուածոյ անհաւն գիւտիւնը և ճարդանիւնը:

3. Աբրահամու սերնդոյ պատմութեան մէջ, որ ապա Եբրայեցի կամ Իսրայելացի կոչ-

ուեցածն, տեսնում էնք զանազան դիպուածներ, օրինակ — Ասիի պատճառաւ Եգիպտոսում՝ պանդխափը, նայա քաշած չարչարանքները, Եգիպտոսի Հարուածը Մովսիսի ձեռքով. և Իսրայելացւոց ազատութիւնը. 40 տարի անապատում մնալը, քանանացւոց երկրին տիրելը. և ապա նոցա Բաբիլոն գերի տարուիլ Նաբուգոդոնոսորի ձեռօք, և նոցա գերեգարձը:

4. Այս պատմական անցքը թէեւ ուղղակի Եբրայեցւոց է պատկանում, բայց մենք սորտանով պիտի իմանանք. Ա. թէ Աստուած տիեզերաց աէրը լինելով, տնօրինում է, ինչպէս որ ինքը կամենում է՝ նաև ամեն տեղի և ամեն ազգաց համար: Բ. թէ և մարդոց ամբարջաւթեանց Համար զանազան փորձութիւններ է սահմանում, բայց երբ որ զղջում են և անօրէն գործքերից դառնում են, գլխութեամբ ներում է նոցա և ողորմութեամբ փրկում:

5. Հին կոտակարանի մէջ բովանդակում են բարոյական, քաղաքական և արարողական

օրէնքները. որտնք Աստուած իր ժողովուրդը
կտուավորելու համար Հաստատեց. Յյդ օ-
րէնքները և արարողութիւնք պատկերա-
ցնում էին այն պատճենունիւնները. որ պիտի
Հաստատուեր Յիսուսի Քրիստոսի ձեռօք Աս-
տուծոյ նոր անտեսութեան մէջ:

6. Նորա մէջ բովանդակուում է նաև
Աստուծոյ ներշնչեալ մարգարէից գուշակու-
թիւնները, ազօթքները և բարեպաշտական
խրատները, որոնք ակնարկում են Մեսիայի
գալուն և նորա հոգեոր թագաւորութեան
փառքին. Նորա մէջ գրուած բոլոր խրատա-
կան խօսքերը և պատգամները ցոյց են տալիս
այն պարզպաները, որ վարուց ու զրութեան
և մարդու բարոյական վերանորոգութեան
գործին կիերաբերուին, և լրիւ պիտի կա-
տարուէին Յիսուս Քրիստոսի: Պահանջան-
ական առաջարկան պահանջանական առաջար-
կան առաջարկան պահանջանական առաջար-



մանական առաջարկան պահանջանական առաջար-

առ իւսումն ազում ՅՈՒ. Բ. Առան չ պայման
կայութեալ ազգական Ա առ առ առ առ առ առ առ առ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ բացատրութիւն է Հին
Ատակարանի մէջ բովանդակուած օրէնքների Ա
պատճենների: Եւս և մարդարէից գուշա-
կութեամբ յայտնած Քրիստոսի անօթիւն-
նեանը:

Այս գիրքի հիմքն է յուցանել թէ, Յիսուս
Քրիստոս Տարբարէից Չուշակած Տարբարէից
Փրկչն է. իսկ նպատակն է մարկանց ֆշարիտ
Ասպատածադաշտունեան կերպը և Առողութոյ համայ
Նպած Գործերը ուսուցանել ամ:

2. Նոր Ատակարանի մէջ Յիսուս Քրիստոս
հոգակուում է մարդկային ազգի Փրկչն. որ
մարդոց մէջ շրջելով և նոցա հետ կենակցե-
լով՝ ներկայացնում է նոցա՝ օրինակ Աս-
տուածահաճոյ կենցաղակարութեան. նա-
քարոզում է և ուսուցանում երկնային եր-
ջանկութեան համելոյ ճանապարհը. և աեղե-
կութիւն է տալիս այն պարտքերի մասին, որ
ունինք առ Աստուած և առ մարդն:

Բարիկէ և անում կարօտելոց նոցա տեսակ տեսակ տեսակ է հիւանդանները և ցուերը բժշկելով, նոցա քարոզում և խրատում է քաղցրութեամբ որ այնունեան և առաջարկութեան հետեինս, նա մարդոց մտաց մոլորութիւնը յանդիմանում է առանց զայրանալոյ, և ցոյց է տալի այն ուղիղ և սուրբ բարոյականութեանը, որոց մէջ արծոցեց Առաքուած ճարտոյն, այս ամէնը ուսուցանում է իր անձը և վենցողակարութիւնը օրինակ տալով:

3. Նոր կտակարանի մէջ Յիսուս Քրիստոս ներկայանում է ճշմարիչ պատկեր Առաքուած պալութեան, նա հնագանդում է Հօր կաքին, և յանձն է առնում մարդոց միրկութեան համար չարչարժեիլ և նոցա մեզաց քալութեան համար խաչի վերայ իր արիւնը թափել ։ Այս և նամբարաթիւնը իր Նոր Աստուծացին միրկարար գործքերը կատարելու ուղիրում աղօթքալ առ հայր Առաքուած է դիմում, որպիս ուսուցանում է ։ որ մեր ամեն գործոց նկիզբը տղօթքով Աստուծոյ օգնութիւնը խնդրենք ։ Նորա Աս-

տուածահրաշ գործքերի համար փառաւուրում են երախտագէտ մտօք, բայց նա ամեն բարեաց փախարէն պահանջում է որ Առաքութոյ կառաւ գուն և հաւատան որ ինքն Առաքութոյ որդի է մեղմաորաց միրկութեան համար ուղարկուած։

4. Նա իր անձի սքանչելի օրինակով ուսուցանում է երկրաւոր մեծութիւնը արհամարհել, ու միմիայն երկնաւորին ցանկալ ամեն բարեգործութեանց մէջ նպատակ ունենալ, որ Աստուծոյ անոնքը վաստառոցի, ամենից աւելի սիրել հնագանդ մնալ Աստուծաց մնարէնութեանց սրափ մտօք և յօժարութեամբ կատարել նորա պատուենէնը և սիրել մէկ մէկու։

5. Նա յանձն է առնում իր երկրաւոր կեանքը կնքել խաչի վերայ մեռանելով մարդոցոց կեանի գուն համար թաղուում և յարութիւն է առնում փառաւորեալ մարմնով և այս օրինակով ուսուցանում է մեզ, որ եթէ մեր կեանը մէք էղբար օգնելու և չարի անելու նպաստիս վրան գէնի և չարչարանք քաշենք

մերայշտակիր մարմինը վունենայ կահառոց
յաջունիւն զայ զօնի ու քրասլայ մէ Յար
6. Նոր Կատակարանի մէջ բովանդակուած
է քրիստոնէութեան տարածութիւ աղքաց մէջ
առնքելոց քարտգութեամբ և գործած հը-
րաշքներով այլ և պատմում է թէ ինչպէս
Հաստատուեցաւ քրիստոնէական նոր ուխտի
եկեղեցինէ Նորա մէջ բովանդակուած են
առաջելոց թվթերը որոնք գրում էին նորա
հաւատ քրիստոնէից ի քրիստոս Հաստատելու
համար նոցա մէջ տեսնութեմ են քրիստոնէ
ութեան հուատոյ մասին վարդապետութիւն
ներ գարուց և Աստուածահամոյ կենուած մա-
սին վսրաւոներ և առաջարինութեան և Աս-
տուածաշտութեան մէջ յառաջադիմելու
յորդորներ ։ Առաջ և մեջայ ամ ։ Յ
7. Առորիւածաշշունչի մէջ բովանդակուած
այս բոլոր գրքերը մեր վախագածիցն աւելի
ուեղելութիւն են տալին թէ այն պարտաւո-
րից պարտքերի մասին որ հարկադ ըռաւած ենք
ունենալ Առաջ այս մասին մի մաս մէջ թէ
մեր Հանդերձեալ կենաց վիճակի մասին

Աւտի պիտի հաւատանք թէ Աստուած ինչ որ
կուգէր յայտնել մարդոց իր կամաց վրայօք
Աստուածաշաւնչ Գրքի մէջ բովանդակապէտ
գրուած են :

8. Սուբբ Գիրքը երբ որ կարդանք Ա. պի-
տի հաւատանք որ նրանով Աստուած մեզ հետ
խօսում է և նոյս մէջ գրուածները իր
հրածածելն են որ պիտի անթերի կատարեմք :

9. Մեր Քրիս-Նեան և Երջանկո-Նեան Հանեց
լուն նպաստելու համար տուած է այն օրէնք-
ները որոնք վմեջ մոլութիւնից գեղի առա-
քինի կեանքն են առաջնորդում և Եւս մեր
իսանգարուած բարսյականութիւնը վիրանո-
րոգում :

Գ. Պիտի մտածենք որ այն օրէնքները այն
ժամանակը տուաւ երբ մարդոց խիղճը և
ընական օրէնքի լոյսը իրենց չարութեան բազ-
մանալու պատճառաւ անբաւական եղած էին
նոցա ուղղութեան և արգարութեան և սրբ-
քութեան մէջ պահելու ուրեմն ուրան մե-
զապարտ և գատապարտութեան արժանի
եղած կլինիք մանաւանդ թէ անպատաս-

խանի, երբ որ Աստուծոյ այս շնորհը մեր-
ժենք, և գիտութեան այս պարզելը Աս-
դիրով ար համարչէնք, նորա խթաներին ուն-
կընդիր շինելով և անհնազանդ մնալով:

ՀՕՐՅՈՒՆՔ.

1. Սուրբ Գրքի մէջ ի՞նչ պատմութիւններ Են բո-
վանդակուած:
2. Նպատակն ի՞նչ է:
3. Արարշագործութեան պատմութիւնից ի՞նչ բա-
րոյական օրէնքներ կարող ենք քաղել:
4. Աստուծած իր բարիքը մարդիկներին տալով
ի՞նչ բարցյական օրէնք կուտայ:
5. Հին կտակարանի մէջ պատմուած անցքերը և
պատգամները միմիայն հրէից են վերաբերում:
6. Այս անցքերից մենք ի՞նչ բարցյական պարոք
պիտի զգանք գէպ ի Աստուծած:
7. Մօվսիսի ձեռքով տուած օրէնքները ո՞ր գրքի
մէջ են և քանի կիրակ են:
8. Բարոյական քաղաքական և ծիսական օրէնք-
ները լնչո՞վ են տարբերուում:
9. Այլ օրէնքներից ո՞րը լնդհանուր մարդկու-
թեան է վերաբերուում:

10. Ամէն մարդ պարտական և բարոյական օրէն-
քին հնազանդիլ:
11. Նոր կտակարանի մէջ ի՞նչ է աւանդուում:
12. Յիսուսի կտարած գործքերի նպատակը
ի՞նչ էր:
13. Կողա գործքերիցը ի՞նչ բարոյական պարտա-
ւորութիւն պիտի սորվենք:
14. Նորա կրած չարչանքների նպատակը ի՞նչ էր:
15. Երկրաւոր կենաց արհամարհութիւնը մի՛ թէ
մեզ յափտենական փառաց գուոը կինի:
16. Մեր երկրաւոր կենաքում պատահած նեղու-
թիւններին եթէ համբերենք. ի՞նչ օգուտ կարող
ենք ունենալ:
17. Ընչո՞ւ կժողու Աստուծած, որ եղբեմն մենք
նեղութիւն ունենանք մեր կենաքում առնենալու:
18. Նոր կտակարանի մէջ գարձեալ ի՞նչ է ա-
ւանդուում:
19. Քիստոս աւանդած կրօնը ընչո՞ւ չարչան-
քով տարածելու կամք արաւ:
- 20 Սուրբ Գրքի վերայ ի՞նչ գաղափար պիտի ու-
նենանք:
21. Ի՞նչպէս պիտի կարդանք:
22. Քիստոնեաները եթէ անհնազանդ գտնուին
Սուրբ Գրքին. Ընչո՞ւ հեթանուներից չար են. հա-
մարուում:

թակորեւորմւթիւնը խողճիւ կիսուտովանինք որովհիեաև երբ որ մարդը Ասմուծոյ վերայ ծանօթութիւն ունենալով իւմանոց որ իր առանքն քարիքները կեանքը գոյութիւն տուողը նա է անցուցու պարտաւորւում է խողճիւ հոգւով և մոտք նորա հետ հազորդուկցութիւն ունենալ «իրով» և նորան մերձաւոր լինել պաշտելով ։ և այս կան մարդիկ որքանատարեք են լինում այս պարտուց կատարման մասին և պաշտամակ գլամուած սիրելով և պաշտելոյ իրենց անձը և կիրքերն են սիրում և պաշտում ։ և պահանակ նորա օրէնքներին համարակելու իւրագելու և Աստուածահանոյ գործքերով նորա կան մարդիկ որքանատարեք են լինում այս պարտուց կատարման մասին և պաշտամակ գլամուած սիրելով և պաշտելոյ իրենց անձը և կիրքերն են սիրում և պաշտում ։ և պահանակ նորա օրէնքներին համարակելու իւրագելու և Աստուածահանոյ գործքերով նորա անտեսնը փառաւորելու ընդգեմ օրինաց մեղանչելով նորան անորդում և վեշտում անուն անուն և որք իրենց բարեկալութիւնը

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏՈՒՑ ՎԵՐԱՅ

Մարդկային բարոյականութեան վերայ որքան որ հարկաւոր էր՝ խօսեցինք անէոք է հիմայ խօսենք նորա պարտաւորութեանց կամ պարտուց վերայ։

Մարդկային բոլոր պարտութերը Աստուած իր առուած օրէնքներովը երկու մասնի է բաժանում ։ առ Աստուած և առ մարդ։ առ Աստուած ունեցած պատքերը վերաբերում են Աստուածսիրութեան կամ Աստուածպաշտութեան իսկ առ մարդն ընկերսիրութեան կամ առաքինութեան։ Որոց մասին հարկաւոր է առանձին յօդուածներով խօսել։

— առ մասին բաժանուց ԶՕԴ Ա.

ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԱՍՏՈՒԱԾ-

ՊԱՇՏՈՒԹԻՒՆ.

1. ԶԱՄՈՒԵԱԾ ԱՓրելոյ կրամ պատեելոյ պարտաւորութեանց անտեղեակ չենք և նոր

կատարելու միջոցին ճշմարիտ Առտուածսի բութեան և Առտուածսի աշառութեան կերպին անտեղեակ լինելով, նոյն իսկ իրենց բարեա պաշտութեան մէջ Առտուածոյ կամքին գէմ են գործում ։ Այս առտուածութեան մէջ այս Այս տեսուկ մօրդոց առ հաստիակ բարոյապէս օժանդակելու մօրօք պարտաւորութիւն ենք համարում ճշմարիտ Առտուածսի բութեան և Առտուածսի աշառութեան իսկական բնութեան և նոյն իրագործելու կերպի վերայ գաղափար տալ :

Եւ որովհետեւ առ Առտուած ունեցած կրօնական պարտքերը համանման են այն բորոյական պարտքերին որ մարդ առ մարդն ունի, ուստի աւելի բացայատ կերպով հասկացնելու համար պատշաճ ենք համարում ծնողաց սիրոյ և յարգանաց օրինակով բացատրել :

Յ. Տեսնում ենք, որ ամեն մորդու յարգութիւն և սիրելի են իր ծնողները, հայրը և մայրը, և չկայ մէկը, որ այս զգացումը չկրէ իր մէջ, և եթէ պատահում է այնպիսի

մարդ՝ որ իր չարութեամբը նոցա անուան նախատինք է բերում, կամ անսուածկ կեանք վարելով նոցա սիրութ վշտացնում է անհնագունդ լինելով, այնպիսին հաստրակական կեանքի մէջ լիրաւի գաստապարուում և անորդուում է ամեն բարենիսիրու և խոհուն միշտք ունեցողներից։ Այս ու կրաստանը ըստ Հարկի է աւրեմն հարցնել, թէ ի՞նչ է շարժառիթը, որ ազայց մկում է գէպ ի ծնողակրութենը։ Ամեն զի գիտեն, որ նոքա իրենց Եղանակութերն և բարեւացնելուն են, իմացեր են այն խնամքը և Գումը, որ ծնողները ունեցեր են իրենց վերայ։ Օրինակ, մանուկ և տկար հասակի մէջ իրենց կը տեսէ և հագուեցնեց են. ամեն զիպուածաւան պատահածների մասին զգուշացեր են, որ իրենց կենաց վնաս չհանգիպի. ամեն նեղութիւն յանձն են առեր սիրով և անձնազոհութեամբ, որ իրենց ազատ պահեն ամեն վտանգաւոր վտրձութիւնից։ Նաև իրենց երկրաւոր կենաց համար երջանկութիւն պատրաստելու նպատակաւ երբէք չեն խնայած իրենց հոգացութենը և իրենց բարութե-

արակեց են, մոքերնին լուսաւորելու մարդ՝
կութիւնը կատարելագործելու մասին խնամք
են ունեցեր գիտութիւն կոմ արհեստ ու
սուցանելումը, այս ամէնը գիտենալով պար-
տաւորապէս սովորուած են նոյա սիրել յար-
գել և մինչեւ անգամ նոյա յիշառակը պատ-
ռել երախտագէտ սրտիւ:

Խոկ եթէ տեսնում են, որ ծնողները բա-
րեկիրթ, խոչեմ և իմաստուն են, և զգում
են, որ իրենք իրենց կենցաղավարութեան
գործոց մէջ նոյա խոչեմ կառավարութեան
և իմաստուն խրաններին պէտք ունին. աւելի
և մէծարանք են ընծայում հյու և հպատակ
կենալով միշտ նոյա կարգագրութեանց և
տուած օրէնքներին:

4. Առ ծնողս ունեցած այս տեսակ զգաց-
մունքը գարձնենք առ Սասուած. Նորա բա-
րելու, Երախտիքը, խնամքը և մեր երջանկու-
թեան մասին ի գործ դրած հոգագուշանիշնը
միտք բերելով. Միտք բերենք այն սապոզե-
լիքները, որ նա կրում է իր վերայ, և ամէնն
էլ ի գործ է դնում մեր հոգեւոր և մարմնա-

ւոր օգտին համար. Օրինակ, Նա կոչւում է
տօնիմասպ, հուսադարչէ, արդար և գլուխ
նա կոչւում է պաշտպան և խնամք Տէր. և
Հայր. այս ամեն ստորոգելիքները պարզ հաս-
կանում ենք որ նա գործ է դնում մեզ կեանք
և կենգանութիւն պարգևելու համար. որով-
հետեւ առանց նորա խնամոցը ոչինչ եմք.
Նրանով կամք. Նրանով ենք շարժում. և
Նրանով է պահում մեր գոյութիւնը: Գոյծ
ժէ. շը: Նա խմաստութեամբ պնդեսում է մեր
մարմնաւոր և հոգեւոր պիտոյքը. Նա հաս-
տարչէ մնում իր ճշմարտութեան մէջ.
նոեւ այն գէպքերում, երբ նրանից ապրա-
սումքում ենք. Նա արդար և սուրբ է գէպ իր
մեզ ունեցած վարչութեան մէջ, և գիտած
մեր ըստ գործոց հատուցման մէջ. Նա պաշտ-
պան է սրովհետու հսկում է մեր գոյու-
թեան վերայ. և խնամնով վասն զի մեր ըս-
րագործութեան մէջ զոնուած վիճակումն
անգամ մեզ խնամք է գրանում. Մաս. Ե. 45:
Նա աէր է, որ իրաւամբ է զատում. և
Հայր, որ չափաղանց սիլով գործում է մեր

վերայ, երբ որ կորստեան լիճակին ենք
համում:

Այս չէ միայն նորա քաղցրագութ հայ-
րութեան հանգամանքը, փոքր ինչ էլ յառաջ
երթամք, և կտեսնեմք նորա անհուն ու ան-
դաշտունելի երախորէր գերազանց առաւելու-
թեամք բարձր այն երախտիքներից, որ մեր
ծնողները ունեցեր են մեր վերայ:

5. Մենք որ երբէք մեր ապագայի մասին
տեղեկութիւն չունեինք, Աստուած այն ամէնք
հոգալով պատրաստած է, Ա. ամէն գժբազգ
պարագաների մէջ օգնութեան է համում և
փրկում է:

Այսոք բեր Դանիէլի պատմած երից ման-
կանց գժբազգ անցքը, որ Բաբելոնում՝ Նա-
բուգումսար բռնաւոր թագաւորի հրամա-
նաւ կտառուեցաւ, և ուրիշ սրբոց նահա-
տակութեան անցքը, որ կռապաշտ իշխան-
ները Աստուածապաշտ և երկիւղած անձմնց
վերայ ի գործ դրին. և հիացիր Աստուծոյ
ամենամեծ և աջանցելի զօրութեան վերայ,
որ իր սիրելին վտանգից փրկեց և փառա-

որեց: Բ. Մեր այս ժամանակաւոր կեանքը,
որ գիտենք թէ մահով պիտի վերջանոյ, նա-
այն մասին ես անհստ հղած չէ, այլ մի այլ
կեանք ես պատրաստեր է մեզ, այնպէս փա-
ռաւոր և գերագոյն ելքանկութեամք, որ
երբէք նորա վերայ գաղափար կազմելու ան-
գոմմ կարողութիւն չունինք: Ա. Կո՞ն. Բ. 3:

Տ. Մենք ստեղծուեցանք արդարեւ որ եր-
ջանիկ և ուրախ կեանք ունենանք, սակայն
մեր անհնազանգութեամքը և օրինազանցու-
թեամքը զրկուեցանք իրաւամբ ոչ միայն նոյն
երջանիկ և ուրախալից կեանքից, այլ և ար-
դարապէս ենթարկուեցանք հոգեւոր և մար-
մանաւոր թշուառութեանց, մինչեւ անգամ
կոչուեցանք աղոփածք, որին բարկունեան
նշանից Աստուծոյ: Համա. Ե. 10:

Բայց նա իբրև գթած հայր՝ մեր այս թըշ-
ուառ վիճակի մասին անտարբեր չկեցաւ, այլ
իր ժնունինը ի գործ դնելով, մարդասիրաբար
աղոփակեց մեզ, աւզարկեց իր սիրելի օրդի և
միածին բանն Աստուած Յիսուս Քրիստոս. որ
ծը հոգեւոր ցաւելը դարձանէ, մէր իսկափացած

բնութեալը վերանայութե սուրբ բարոյականա-նիւն
առաջանելով մեղ իր օրինակովը: Նա մեր
կրից յաղթելու, և Աստուածահանոյ կեանք
փարելոյ եղանակը իրմով սորվեցուց և ճշմա-
րիտ սիրոյ և Աստուածապաշտութեան կերպը
իր ճարհոյ պարզանուն և խաչի ճակատածը
մեղ աւանդեց որպէս զի մեր և Աստուած-
պաշտութեան մէջ նրան հետևող լինինք:
Այս ամէնը գժութեամբ մեղ համար կատա-
րեց, որ մենք առաջինից աւելի փառաւոր
ու երանաւէտ երջանկութեան ժոռանգորդ
լինինք: Յանի. Ժ. 10: Ուրիմն պէտք է մեր
մէջ խօրհրդածելով և մեր ծնողուկան սիրոյ և
յարգանաց հետ համեմատելով ի կշիռ գնենք
ծնողաց և Աստուածոյ Երախորչուց, և արժանա-
պէս չափենք, թէ ո՞ր աստիճան արժանի է
Աստուած երախուագիտութեամբ պաշտելոյ
և սիրելոյ:

6. Սրգ թէ որ սէրը և երախուագիտու-
թիւնը բարեբարի բնաւորութեանը և շնոր-
հած պարգևներին համեմատ պիտի լինին-
ուրիմն մեր երկնաւոր Հոգը ճշմարտապէս

առնեն մեր սիրած և յարգած բաներիցն աւելի
բարձր համարելու ենք. և գերագոյն սիրով
սիրելու պաշտելու: Վասն զի չկայ մի ու-
րիշ անձնաւորութիւնն որ Աստուածոյ չափ բա-
րիք արած լինի:

Փէ և մեր ծնողները երախուաւոր են մեզ
այն իննամոց և հոգատարութեանց պատճա-
ռաւ՝ որ ցոյց տուին մեր մանկութեան օրից
մկանած. բայց ինչ են նորա Աստուածոյ պարզե-
ւածների և արած բարերարութեան առաջ:
Այս մտօք է, որ հրամայած է օրէնքով, «սի-
րիր քո Տէր Աստուածդ քո անձիցդ աւելիի.
սրտով և մտօք և ամենայն զօրութեամբդ:»
Ստոր. ին. 37:

7. Մեր Աստուածապաշտութիւնը և Աս-
տուածսիրութիւնը կատարած կլինինք. Ա.
հաւատալով, որ նա ներկայ է և մեղ հետ է
միշտ և ամեն տեղ: Սրանով պարտաւորուած
կլինինք միտք բերել, նորա ներկայութիւնը
նաև մեր ամեն գործառնութեանց ժամա-
նակ և զգուշանալ նորա օրինաց և կամաց
զէմ գործելուց:

Բ. Յիշելով, որ նա իր ողորմութեան և գմբութեան շնորհիւ ամենից աւելի յարարերութիւն ունի մեզ հետ, սրանով ստիպուած կլինինք գերազանց յարգանօք և սիրով նրան մերձաւոր լինելու փափագ ունենալ:

Գ. Որովհեան այս նկատողութիւնները մեր վրայ և մեր վարուց վրայ շատ և ազդու ներգործութիւն պիտի ունենան. ուստի հաստատ կամցողութեամբ ջանալու ենք, որ արդ գարութեամբ, գմբութեամբ և սրբութեամբ անցնենք մեր կեամքը, և երախտագիտութեան զգացմունքներով լցնելով մեր սիրութիւնը՝ էնտ նրան այնպէս կատարեալ և անկեղծութեամբ, ինչպէս նա ևս զմեզ սիրումէ Հոյրական ոչընչ. վստան զի սիրոյ և յարգանաց բնութիւնը այն է, որ փոխագարձաբար ընդունի ուր և յարգանիք: Յով ծ.Զ. 27:

Դ. Մեր սէրը և Աստուածապաշտութիւնը կատարեալ և հաճոյական լինելու համար սկարմաւորապէս պահանջումէ մեզանից, որ կատարեալ հնարյանդութիւն ունենանք Աստուածային կամաց և օրինաց, ուստի մէծ

փափագ պիտի ունենանք, սորվել նորա սուրբ կամաց կարգադրութիւնները որպէս զի մեր ամէն գործերը և կենցաղավարութիւնը Ամեն Աստուածահամոյ:

Ե. Աստուածոյ գործերը քննելու ենք, որ ժամանակ առ ժամանակ ցոյց տուաւ մարգոց վրայ, որպէս զի նոցա վրայ խորհելով ուստանինք այն կարգն ու կանոնները, որով կառավարումէ աշխարհը:

Զ. Աէտք է գիտենանք, որ Սուրբ Գրոց բովանդակ խօսքերը Աստուածոյ խօսքերն են. որով հասկանալի եղանակաւ մարդկօրէն մեզ հետ կիսուէ իր պատգամները: Նորա մէջ պարզ և հառկանալի օրինակով գրուած են այն աեղեկութիւնները. որ թէ այս աշխարհին մէջ և թէ հանդերձեալ աշխարհի մէջ կարգադրած է Աստուած մարգոց համար:

Այս գիրքը գրուած է մեզ իբրև Հանան հասարաց և վարաց ուղղութեան առաջնորդու որ մենք կարգանք և միտք առնենք. թէ ինչ սահմանի մէջ գրած է մեզ Աստուած: Սուրբ Գրոց ընթերցանութիւնը շատ օգտակար կլի-

նի մեզ. երբ որ ուղիղ հաւատով հաւատանք, որ Աստուած նրանով մէջ հետ խօսում է. և սուրբ սրտիւ լճգունենք նրա մէջ աւանդած պատուէրները իբրև մեր երջանկութեան և փրկութեան նպաստող խրանիք:

9. Սուրբ Գիրքը պիտի կարդանք այն նպատակաւ որ ուսանինք թէ Աստուած ինչ է պահանջում մեղանից իբրև իր ստեղծած բանական էակներից. այս է ա. օքնակառարունեան, որ է մեր կամքը և սրտի յօժարութիւնները Աստուծոյ կամաց հետ համուկերպութեան մէջ պահել: Ճ. Մեր մատաց խորհուրդները և գործքերը բարեպաշտ երկիւղածութեամբ Աստուծոյ նուիրել: Գ. Մտադիր լինել, որ Աստուածալաշտութեան և սիրոյ զգացումները մեր սրտի մէջ վառ և կենդանի մնան, և դ. այնպիսի սուրբ կեանք ունենանք, որով կարողանանք վստահութեամբ ասել, թէ « Աստուած մեր մէջն է, և մենք Աստուծոյ մէջ. և թէ նորանով ենք շարժում և կեանք վայելում »:

10. Ինչպէս որ իր բարի ընութեան վրացեաք

Ֆանոթութիւն տաղու համար, Աստուած իր բարձրութիւնից խանարհեցաւ և մեզ սուրբ բարոյականութեան օրէնքներ աւանդեց, նոյնովէս և ճշմարիտ բարպականութեան օրինակ պարզեց մեզ Յիսուս Քրիստոսին: Վտ իր երկնաւոր Հօյ համել աւետարանով աւանդեց, և պատուիրեց, որ իբրև երկնաւոր Հօր սիրելի որդիներս աներկիւղ և վստահութեամբ տմէն պիտոյից համար նրան գիմնիք աղօնուալ:

Յակ. ԹԶ. 23 – 27: Այս արտօնութիւնը որ ըստացանք Քրիստոսի միջնորդութեամբ, պիտի իմանանք, որ Աստուծոյ հետ ունենալիք հաղորդակցութեանց խիստ ընտիրը և գերադաշնեն է, որ մեզ շնորհը արաւ Հայրապար, ուստի այս արտօնութիւնը ջերմեւանդ երկիւղածութեամբ պիտի յարգենք հոգւով և մտօք աղօթելով, գիտենալով, որ այս է գլխաւոր Աստուածալաշտութեան միջոցը:

11. Այս պարագայիս մէջ երկիւղ պիտի շաղկէ բնութեան տկարութեամբ մեզանչելը, թէպէտ և աւանդում է Սուրբ գիրքը, որ մեղքը իբրև միջնորմն կինի մեր և Աս-

տուծոյ մէջ. և նրա հաղորդակցութիւնից մեզ
կհեռացնէ. քայլ այս և ս գիտենալու ենք, որ
Աստուած իր բարի բնութեամբը Յիսուս Քրիս-
տոսի մեր Փրկի ձեռօք մի քաւութեան ճա-
նապարհ ցոյց տուաւ, որով կարող ենք վերա-
տին արդարանալ, այսինքն է, սրտի մտօք
ողջուն, խոնարհ խոսապատճեննիւն. և ճշմա-
րտ տղալիսընթեամբ : Աւսոի պարագան ենք
խոնարհութեամբ նորա այս գթութեան պար-
գևը յարգել յամենայն ժամ՝ որդիական հր-
նազանգութեամբ առ նա դիմելով՝ զզջմամբ,
և խոնարհ խաստովանութեամբ ընդունելով
այն պայմանը որ մեր վրկութեան համար
դրուած է : Եթէ այս շնորհը կատարելու մա-
սին զանց աւտենիք, գատապարտելի յանցաւոր
ենք, ոչ թէ միայն մեղանչելու համար, այլ և
Աստուծոյ շնորհը արհամարհելու համար :

12. Այս խօսքերիս հետեւանքն է գիտենալ,
թէ մեր Աստուծոյ հետ անենալիք Աստուած-
սիրութեան և պաշտելոյ յարաբերութիւն-
ները հետեւալ պարտաւորութեանց է են-
թարկում :

Ա. Մեր սիրած ամէն բաներիցն աւելի սէւն
և պաշտել Աստուծոյ :

Բ. Նորա կամքին և օրէնքներին կատարե-
լաղէս հնազանդելով թէ և նրանք մեր բազմա-
նաց հակառակ ևս լինին :

Գ. Մեր ոնցեալ և ներկայ մեզաց համար
ողջուն աւանանդ, մեր սիրու կամովին տրտ-
մեցնելով և մեր անբարտաւանութիւնը խո-
նարհեցնելով :

Դ. Նորա սահմանած պայմաններին յօժա-
րութեամբ խոնարհելով, բարեգործ և ողջա-
շեալ էանն վարենք :

Այս պայմանները մեր մրա արդեամբք փայ-
լեցնելով պիտի լինինք կատարելապէս Աս-
տուածանունը և Աստուածապալուն : Հեռի կենո-
լով նաև այն գործքերից, որ Աստուածապաշ-
տութեան հակառակ են, որք են, կտապաշ-
տութիւն, արծաթասիրութիւն, անձնութիւն,
որին հետեւում է անաստուածութեան մոլո-
րութիւնը :

ՀԱՐՑՄՈՒՆՔ.

1. Բարզյական պարտք ասելով ի՞նչ ես իմանում:
2. Զգում ես որ զԱստուած սիրելը և նորա օրէնքին հնազանդելը քո պարտքն է:
3. Զգում ես նոյնպէս, որ ճնողացդ հնազանդելու և սիրելու պարտք ունիս:
4. ԶԱստուած սիրելու և ճնողներդ սիրելու պարտուց մէջ զանազանութիւն պիտի լինի. և ո՞րն է:
5. Բացատրէ այն զանազանութիւնները, որ պիտի ունենաս զԱստուած և ճնողներդ սիրելու մէջ:
6. Բացատրէ այն պատճառները, որով կպարտաւրիս ճնողներիցդ աւելի զԱստուած սիրել,
7. Սեզի ո՞րը աւելի օգտակար է. զԱստուած սիրելը թէ հայր ու մայրը:
8. Դէպի ի մեզ ո՞րն է աւելի բարի, Աստուած թէ ճնողը:
9. Ի՞նչ գերագոյն պատճառ ունինք զԱստուած սիրելու և պաշտելու:
10. Թէ որ Աստուծոյ օրէնքներին անհնազանդ գտնուինք, սիրած կլինի՞նք զԱստուած:
11. Թէ որ մեր ճնողները և ընկերը անարդեմք, սիրած կլինի՞նք զԱստուած:
12. Թէ որ սուտ խօսինք, սուտ երդուինք. զուր տեղը Աստուծոյ անունը բերան առնենք. սիրած կը լինի՞նք զԱստուած:

13. Աստուծոյ անունը յիշելու միջոցին ի՞նչ զգացում պիտի ունենանք:
14. Ի՞նչպէս պիտի պաշտենք զԱստուած:
15. Հոգւով և Ճշմարտութեամբ ասելով ի՞նչ կիմանաս:
16. Թէ որ Աստուածպաշտութեան ժամանակին մորով ուրիշ բան մոտածեմ կամ ուշքս և աչքս ուրիշ առարկայի վերայ դարձրած լինիմ, հոգւով պաշտած կլինի՞մ զԱստուած:
17. Ճշմարիտ սրտիւ զԱստուած սիրողի վարքը ի՞նչպէս կլինի:
18. Թէ որ իրօք զԱստուած կսիրենք, մեր գործքերի մէջ աւելի ի՞նչ փախադ պիտի ունենանք:
19. Երբ որ գիտենք թէ մեղաւոր ենք, կամ նորա օրէնքին անհնազանդ եղած ենք, տակամին կարո՞ղ ենք զԱստուած սիրել ու աղօթել:
20. Կընդունի՞ Աստուած մեր սէրը և մեր երկրպագութիւնը ո՞ր նոյն մեղաց վիճակի մէջ կընուիրենք:
21. Օրինակ տուր:
22. Աստուած իր որդին մեզի համար մեռնելու տալով թէ որ իմացրուց իր անհուն սէրը. նրանով ի՞նչ պարտուց տակ ինկանք:
23. Կարգաւ ասա այն պարտքերը, որին Աստուծոյ անհուն սիրոյ համար ենթարկուած ենք:

24. Ի՞նչ բաներ կան որ Աստուածսիրութեան
հակառակ են:

25. Ի՞նչ է կռապաշտութիւնը:

26. Երբ որ ոչ կուռքի երկրպագութիւն անենք
և ոչ ուրիշ արարած Աստուծոյ պէս պաշտենք, տա-
կալին կարող ենք կռապաշտ լինել:

27. Ընչո՞ւ օրինակ տուր:

28. Մեր սրտի ցանկութիւնը կատարելու մասին
ունեցած դիտաւորութիւնը ի՞նչ տեսակ կռապաշ-
տութիւն համարելու է:

29. Ի՞նչ զգացում ունենալու ենք, երբ որ այն
տեսակ հոգեւոր կռապաշտութեան մէջ ընկնիք:

30. Մեր տէրը ինչ միջոց տուաւ Աստուծոյ հետ
հաշտուելու երբ որ մեղանչելու լինինք:

31. Մեղաց վիճակի մէջ կարող ենք կստահու-
թեամբ Աստուծոյ դիմել. և ի՞նչ հանգամանկներով:

ԹԱՇ

ՅՈՒԴ. Բ.

ԱՊՈՔ.

1. Աստուածպաշտութիւնը կատարում ենք
աղօթքը, աղօթքը Աստուծոյ հետ հալորդակ-
ցութիւն ունենալու այն միջոցն է, որով Աս-

տուծոյ ենք մօտենում: և մերձաւորապէս
նրա հետ խօսութ Ենտ այն վստահութեամբ, ինչ
վստահութեամբ որ Հարազատ և սիրելի որ-
դիքը գժած և բարեխնամ: Հօր հետ կխօսին:

2. Մեր Փրկիչը Յիսուս Քրիստոս որ սրա-
զաղէս ցոյց տուաւ թէ ինչպէս մեր երկնա-
ւոր Հայրի իր հայրախնամ կառավարութեամբը
մեզ հետ հաղորդակցունիւն «անի», կամենալով
որ մենք ևս նոյն հաղորդակցութիւնը ունե-
նանք նրա հետ, սահմանեց աղօթել: Դաէ.
ԺԼ. 1: Որպէս զի նրանով մօտենանք, ու մեր
սրտի բաղձանքը խոնարհ աղաչանքով յայտ-
նենք, և ամէն մեր հոգուերը և վշտալի ցաւե-
րը, որ մեր կեանքը շրջապատռում են, նրա
առաջը գնենք: Այլ և մեր տկար բնութեան
ամէն սիսալանքը անկեղծ խոստովանելով նրա
առաջ իրրե անյիշաչար և գժած Հօր, նրա
քաղցր սղորմութեան շնորհը վայելինք:

3. Սկզբանը ցոյց կուտանք մեր երախոտքի-
տունիւնը և շնորհակալունիւնը նրա անդաւ-
բարեաց մասին որ ընդունած ենք. իսկ եթէ
նրա սուրբ կամաց գէմ մեղանքելով նրա Հայ-

բական շնորհքից զրկուած ենք, աղօթքով վերստին նրա քաղցր սիրութ գմբւթեան և ներողութեան կշարժենք. վասն զինա ողորմած Հայր լինելով, խոստացեր է լաւ և կապարել:

Ա. Միայն թէ նա կը պահանջէ, նուխ որ մենք նրա բարի բնութեան և Հայրական սիրոյ վրայ վատահ լինինք աներկայ յուսով հաւատալիվ որ նա հաւատարիմ է:

Բ. Կպահանջէ, որ անփոփոխ դիտաւորութիւն ունենանք պատուիրանապահ լինելու և նրա կամաց հնազանգելու մէջ:

Գ. Ամէն մարգոց հետ ասլրելու խաղաղութեան հոգի ունենանք:

Դ. Մեր սրտի մէջ կերպաւորած լինինք Քրիստոսի Փրկչին մերոյ հեղու-նի-նը և խնորհու-նի-նը, նաեւ այն սուրբ Եղիշեղը, որ Աստաւած մեզանից պահանջումէ:

Ե. Մեր խնդիրքը լինին վայելուց Աստուծոյ և պիտանի աղօթողին թէ հոգեորագէս և թէ մարմնապէս: Եթէ մենք այս տրամադրութեան առկ աղօթենք, արգարե իր խոստման համեմատ կկատարէ:

Գ. Աղօթքի կարեւորութիւնը ամէն մարդ կարող է զգալ թէ որ իր կեանքի պէտքերի վրայ ուշագրութիւն գարձնէ, մենք արգէն փորձով գիտենք, նախ որ մեր կեանքը երկրիս վրայ վտանգներով շրջապատած է, որոնցից սկաշտանելու մասին ոչ միայն անուշը ենք, այլ և ապագային ևս ագէտ ենք, և չգիտենք թէ ինչ չարիք և ինչ թշուառ վիճակ պիտի յաջորդէ մեզ երկրորդ այն պէտքերը, որ մեր կեանքը պահպանելու համար հարկաւոր ենք համարում ողբան որ ջանք անենք անկարող ենք հացթայթել, թէ որ Աստուծոյ նախախնամութիւնը մեղ չէ օգնում: Իրորդ մեր առօրեայ գործքերը որտե՛ ուզած կերպով գլուխ բերելու համար կարօտում ենք յաջազութեան. և մեր չար կրքերը, երբոր մեր մէջ զարթնում են մեղաց փորձութեան մէջ ձգելու շափ, կարօտում ենք արիութեան և համբերութեան՝ նոցա զիմազրելու համար:

Աչա այս և սոցա նման ուրիշ վտանգներից փրկուելու մասին մեր փրկիչը ուսուցանումէ, որ աղօթքով դիմելու ենք Աստուծոյ: Ո. ուկ, իթ. 40:

5. Բայց թէ լնչու այնպէս կարգադրեց Առառուած, որ մեր ամէն պէտքերի համար աղօթքով և աղաջանկով իրեն Հայրական գթութեանը զիմենք, պատճառը յայտնի է. — որպէս զի մեր տկարութեան փոքը առնելով և միշտ կարօտ լինելուս զգալով իրեն մեծութիւնը ձանաչենք. իսկ ինքը միշտ օգնելով իր բարի բնութիւնը և առատ գթութիւնը մեր վերայ յայտնի անէ. Եւս և նրանով որոշուի, յայտնի լինի բարի և երախտագէտ քրիստոնեան չոր և տափերախոր քրիստոնէից. բարեպաշտ Աստուածաւէրը՝ ապստամբից:

6. Այս կարգը տեսնում ենք առհասարակ և ամէն ծնողաց վերայ իրենց որդւոց լինամոց վերաբերութեամբ, որոնց թէև ամենի պէտքերը հոգում են հաւասարապէս, բայց իրենց լինամքը շատ անգամ յորմարացնում են որդւոց բնուորութեանը, երախտագէտ, հնագանդ և ծնողասէր որդւոց՝ համութեամք լսելով և սիրելով. իսկ անհնաղանդներին և չարերին անարգելով :

7. Այժմ՝ խօսենք, թէ մեր կենոց որ

պորտպոններու կոմ դէպէերու մէջ աւելի հարկաւոր է Աստուծոյ դիմել աղօթքով:

Մեր փրկիքը ուստուէր է տալիս, որ ամէն Ժամանակ՝ ողօթքը անենք, որ փորձութեան մէջ լինինք: Այս պատուէրիցը պարզ երեւում է, որ ամէն Ժամանակ հարկաւոր է Աստուծոյ մնանալ աղօթքով՝ երբ որ զգում ենք, որ մեզաց պատճառով Աստուծոյ խնամքը վայելելու որդիական չի բռանաւուից դրկուած ենք, և Աստուծոյ բարկութեանը ենթարկուած: Մեր կենուց այս հանդամնիքի մէջ Հոգւոյն սրբոյ արքարար շնորհքը ինդրելու ենք:

Առլր գրոց մէջ շատ օրինակներ ունինք՝ աղօթքով իրենց փափագին հասած. օրինակ Սովոէո, որ Խորոյէլի փրկութեան համար աղօթեց. Եղիայ՝ երաշտութեան և անձրեւ համար. Նիկմի և Գանիէլ՝ Հրէից գերեզարձի համար. Խորոյ՝ Այծեմնիկին յարութիւն տալու համար և այլն. և որքա ամէնքն էլ առայսուցանում են, որ աղօթքը անսատով չի մնար, միայն թէ պատշաճառուց լինի:

8. Աղօթքի պատշաճաւորութիւնն է, նախ՝

որ ազօթողը պատրաստուած լինի, այսինքն
իր մեղքերից զղջացած, և ապաշխարութեան
ավատած.

Երկրորդ՝ իր սիրտը ճարրած ոխակալունեան,
առելունեան, վրէժինբրունեան և ամէն տեսակ
չարութեան խորհուրդներից:

Երրորդ՝ եթէ ընկերի գէմ հակառակած
կամ սիրտը վշտացրածէ, նորա հետ հաշ-
տուած լինի, առ ինքն գործած սիսալները
խապառ ներելով: Որոյ վերայ հինածէ թէ
մեր ազօթքի արժանաւորութիւնը, և թէ
մեր ընդդէմ Սատուծոյ գործած յանցանք-
ներին Ըսղանիւնը: Թէ որ գուք ձեր եղբօրը
չներէք, երկնաւոր Հայրն էլ ձեր յանցանք-
ներին չի ներիլ: Մատն, Զ. 14: Այս մոօք
առած է Քրիստոս այն խօսքը, որ աւետա-
րանի մէջ կարդում ենք: Աղօթք (պատարագ)
արած միջոցին՝ թէ ար միտքդ գայ, որ եղ-
բայրդ քեզ հետ անհաշտ է. թող պատա-
րագդ սեղանի վերայ, գնա՛ առաջ նորա հետ
հաշտուի, յետոյ պատարագդ արա:

ՀԱՐՑՄՈՒՆՔ.

1. Ի՞նչ է պատճառը, որ Աստուած մեզանից պա-
հանջում է աղօթքով ամէն ժամանակ իրեն զիմէլ:

2. Մեր Առնչութիւնը կամ յարաբերութիւնը
Աստուծոյ հետ անխզելի պահելը ի՞նչպէս կարող է
լինել:

3. Աղօթելու միջոցին ի՞նչ է պահանջում Աս-
տուած՝ որ մենք ունենանք:

4. Կատարեալ վստահութիւն. և անփոփոխ զի-
տաւորութիւն ասելով ի՞նչ ես իմանում:

5. Մեր աղօթքը կու՞ Աստուած. երբ որ մէկի
գէմ ոփ ունենանք:

6. Թէ որ սրտում չար խորհուրդներ կամ ըն-
կերիս գէմ ասելութիւն ունենամ: Աստուած իմ
աղօթքս կու՞:

7. Ընչո՞ւ — օրինակ տուր:

8. Այս մասին Աւետարանի մէջ ի՞նչ գրած է:

9. Թէ որ օրինաւոր և ուղիղ սրտիւ աղօթենք
կու՞ Աստուած մեր աղօթքը:

10. Ի՞նչ զգացումով կիմանաս որ Աստուած լոեց
քո աղօթքը ու քո խնդրուածքը պիտի կատարէ:

11. Ներքին հոգեոր ուրախութիւնը որ զգում
ենք և սրտի փոփոխութիւնը որ ունենում ենք միթէ
աղօթքը ընդունելու նշան է:

12. Աղօթքով մեղաց թողուժիւնը ընդունելու համար ի՞նչ պայման ունինք:
13. Ո՞ւր գրուած է թէ, եթէ մենք մարտոց յանցանքին թողուժիւն չտանք, Աստուած էլ մեզ թողուժիւն չիտալ:
14. Ասա այն առակը. որով մեր Փրկիչը սորվեցրեց միշտ աղօթել ու բնաւ չձանձրանալ:
15. Կան այնպիսի պատճառներ. որ կպարտաւորեն մեզ աղօթք չանել:
16. Խոստացե՞ր է Աստուած որ աղօթքով ի՞նչ որ խնդրենք տայ:
17. Ընչո՞ւ — բացատրէ ի՞նչ բաների համար պատուէր եղած է խնդրել:
18. Ի՞նչ բանի համար պատուէր եղած է, որ չխնդրենք:
19. Ի՞նչ բաներ են. որ եթէ խնդրենք չարաշար խնդրած լինելուս պատճառաւ կմերժէ Աստուած:
20. Առանց զգացումի եղած աղօթքը կարո՞ղ է օգուտ բերել:
21. Ո՞ւր պիտի աղօթենք:
22. Մեր կենաց ո՞ր դէպքերի մէջ աւելի պիտի աղօթենք:
23. Ցոյց տուր այն անձինքները, որոց համար ասում է Սուրբ Գիրքը, թէ նեղութեանց միջոցին աղօթեցին և Աստուծոյ օգնութիւնը ընդունեցին:

24. Արրահամու, Խսահակայ, Յակովբայ, Մովեսսի, Դանիէլի ևլն. աղօթքներիցը ի՞նչ քաջալերութիւն ենք ասնում. կամ ի՞նչ պիտի սորվինք:
25. Երբ որ չաղօթենք Աստուած մեր սրտի բաղձանքը կկատարէ՛ թէ ոչ:
26. Ընչո՞ւ — օրինակ տուր:
27. Մեր ծնողներից եթէ բան չուղենք, և նոցանից ընդունած պարզեների մասին չնորհակալ չըլինք. ուրեմն շատ բաների կարօտ պիտի լինինք:
28. Ուրեմն շատ բաների կարօտ պիտի մնանք, թէ որ աղօթքով չխնդրենք աստուծուց:



ՅՈՒ. Պ.

Կիւրսկի. ՕՐ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ.

1. Թէալէտ ամէն ժամանակ, ամէն օր պարտական ենք Աստուածալաշտութեան պարտքը կատարել և ի նշան երախտագիտութեան մեր սիրտը և հոգին Աստուծոյ օրչնութեան և ծառայութեան նուիրել. բայց աւելի ևս կիւրսկէ օրը (որ միաշաբաթու օր էլ է առում) պարտական ենք միտեղ հաւաքուե-

Եսվ Աստուծոյ օրհնութեամ և փառաբաննութեան պաշտօնը հանդիմաւոր կերպիւ կատարել ինչպէս որ օրինադրած է եկեղեցին։
Հ. Հին օրինաց մէջ Աստուծածապաշտութեան օրը որոշած էր շարաթ օրը. որ շաբաթի աւուրց եօթներորդն է. և այս օրինան համար Սուրբ Գիրքը այսպէս է գրում. «Աստուծ իր արարչապործութիւնը վեց օրը կատարեց ու եօթներորդ օր հանդուացաւ. ու այն օրը օրհնեց և սրբեց այսինքն սուրբ օր անուանեց»։

Այս օրվան օրհնութեամբ սրբելու նպատակն էր, նախ՝ որ ամենայն մարդիկ Աստուծոյ օրինակը միաք բերելով, վեց օր միայն աշխատեն. իսկ եօթներորդ օրը հանդուանան ամէն մարմնաւոր աշխատանքից. և երկրորդ՝ իբրև Աստուծոյ օրհնութեամբը սրաշուած նուիրական օր՝ պարապին Աստուծապաշտական գործքերով։

Յ. Հին օրինաց մէջ եղող Աստուծածապաշտ ժողովրդոց՝ շաբաթը պահելու մասին այս խօսքերովը պատուել եղած էր. «Միտք բեր

(յիշիր) շաբաթ օրը, որ սուրբ պահես, վեց օր պիտի աշխատես գործքերդ գործելու, իսկ եօթներորդ օրը քո տէր Աստուծոյ շաբաթն է. այն օրը պիտի չաշխատես ոչ դու, ոչ որպիդ, ոչ աղջիկդ, ոչ ծառապ, և ոչ ազախինդ, ոչ եղգ կամ էցդ, և ոչ քո ամէն անասունները. Ոչ հիւրդ և ոչ քո մօտ կեցող պանդուխորը. Վասն զի վեց օր սաեղծեց Աստուծերկնքն ու երկիրը, ծովը, և նրանց մէջ եղած բաները, ու եօթներորդ օրը հանգչեցաւ»։ Ելք. Ի. 8—14։

Այս խօսքերիցը պարզ խմացում է թէ ինչ նպատակ ունէր Աստուծուած, որ եօթներորդ օրը սրբեց և օրհնութեամբ որոշեալ օր անուանեց. Որպէս զի ոչ միայն այն օրը հանգելով աշխատանքից զօրանանք, կաղզուրինք մենք և մեզ հետ աշխատող ծառաները և անասունները, այլ և Աստուծոյ արած բարերարութիւնները միտք բերելով երախտագիտութեամբ՝ մէկ տեղ հաւաքւենք և հանգիսաւոր կերպով նորա սուրբ Անունը օրհնենք և բարերաննեք։ Այս է Աստուծոյ օրէնսդրու-

թեան զիտումը. ուրիմն որքան մեղապարտ
կլինիք, երբ որ այս օրինաց գէմ գործենք.
փոխանակ սրբութեամբ յարգելու և միտքեր-
նիս ու խորհուրդներնիս Աստուծոյ նուիրելու,
պղծենք անպատճէ գործքերով, խեղկառա-
կութեամբ, արքեցութեամբ, խաղալով, և
այլ չարիքներ գործելով:

4. Եարաթ օրվայ պահպանութիւնը հին
օրինաց մէջ հրէից յատկացրած էր, իսկ քը-
րիստոնէական նոր օրինաց մէջ Առաքելոց
ձեռքով սահմանուեցաւ միաշաբաթի, օրը
որ և կոչուեցաւ կիւրակէ, այսինքն Տէրունա-
կան օր, ի յիշատակ և ի պատիւ Քրիստոսի
հրաշափառ յարութեան: Կիւրակէ օրվայ
գրութեամբ՝ որքան որ օրվայ վտիտիութիւն
ենք նկատում, բայց նպատակը միենոյն է:
այսինքն հանգուանալ և աստուածաշատու-
թեամ պարտքերը կատարել: Այս օրը քրիս-
տոնէից՝ Աստուծոյ կրօնական երկրպագու-
թիւն մատուցանելու համար որոշուած օր է:
վասնորոյ և հարկաւոր է սուրբ և բարի
գործքերով յարգել: Մատու, Ժ. 12:


5. Կիւրակէն սրբութեամբ պահելու օրէնքը
արգելում է, Ա. ամէն աշխատանք, որ մէր
մարմնոյ օգտին են վերաբերում: Միայն թէ
Քրիստոսի պատուիրածի համեմատ այն օրը
քարեգործութեամբ պարապել. ու պարտա-
կան ենք այնպիսի գործքերով պարապել, որ
մեր ընկերին կամ այլոց հոգեորապէս և
մարմնապէս օգուտ է, որք են պնակաց այցե-
լունեան երնակ. հետանդաց միշտարունիւն առաւ.
հարօռելց օգնել. ազոնել և առ Առարտէ,
առարտ ճառագնունք առնենալու որով առաւել ևս
փառաւորւում է Աստուած: Բ. Արգելում է,
որ մեր սուրագրեալ ծառաներին չաշխատա-
ցնենք. այլ նոցա ևս հանգստութիւն տպով՝
թոյլատրենք, որ նոքա ևս մեզ հետ ընկերա-
նան Աստուածպաշտութեան և կրօնական
քարեպաշտութեան մէջ: Գ. Արտիչետեւ պատ-
ուէրը հանգստանալու համար է, ուստի ար-
գելում է, որ անաստնները ևս հանգստ
թողունք չաշխատացնենք, ճամբորգութիւն
անելով, ձիով կամ կառքով զբոսանքի եր-
թալով:

Ֆ. Օրինագրուած է, որ մեր այն օրվայ
պարտապմունքը աղօթքից յետոյ, լինին Սուրբ
Գլուխը մտառութեամբ կարդալ, տգէտներին
ուսուցանել թէ Աստուածաշատութեան և
թէ քրիստոնէական կենցաղավայրութեան
կերպը և կարգերը, սուրբ մտածութեամբ
անձնաքննութիւն անելով միտք բերել այն
ամէնը, ինչ որ Աստուծոյ օրինաց և կամաց
դէմ գործեր ենք, կամ օրէնքը և մեր քրիս-
տոնէական պարտերը կատարելու մասին
զանցառութիւն ենք ունեցեր, որոց վերայ
սրութ զղջալով՝ պիտի հաստատ միտքերնիս
գնենք, որ այնուհետեւ մեզ ուղղենք և կա-
տարելագործենք:

ՀԱՐՑՄՈՒՆՔ.

1. Մեր Աստուածաշատութեան պարտը աւելի ո՞ր օրը հանդիսաւոր կատարելու ենք:
2. Հին օրինաց մէջ ո՞ր օրը որոշուած էր:
3. Տարաթ օրը սրբելու և նուիրական օր սահմա-
նելու նպատակն ի՞նչ էր:
4. Տարաթ օրվայ պահպանութեան համար ի՞նչ
խսքերով պատուէր եղած է Սուրբ Գրոց մէջ:

5. Նոր (Քրիստոնէական) օրինաց մէջ ո՞ր օրը
նուիրական եղած է:
6. Կիւրակէն սրբութեամբ պահէլու մասին օրէն-
քով ո՞ր գործքերը արգելուած է անել. և ո՞րը ոչ:
7. Թէ որ մի կարեռ գործ պատահի, որ չա-
նելովը վեաս պիտի ունենանք, կարող ենք անել:
8. Ընչո՞ւ բացի բարեգործութիւնից ուրիշ գործք
չենք կարող անել:
9. Թէ որ կիւրակէ օրը զբոսակքի երթամ. օրի-
նակ որսի, ուսել խմելու, ևլն. մեղանչած կյսիմ:
10. Արեմն պատմիր կիւրակէն ի՞նչպէս անցնելու
ենք մինչև երեկոյ:



Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՊԱՐՏԻՔ ՄԱՐԴԻՑ ԱՅ ՄԵՐՄԻ

ԳԼՈՒԽ Ա.

ԸՆԿԵՐՍԻՐՈՒԹԻՒՆ:

Մարգս ինչպէս որ ունի պարտք առ Առ-
տուած, որ վերտբերում է Առաջածովաշու-
նեան, նոյնպէս ունի պարտք և առ մարգն,
որ վերաբերում է ընկերութեան:

Առ մարգն ունեցած պարտքը երկու գլխա-
ւոր սկզբանց վերայ է հաստատուած. առա-
ջին է ամեն մարդոց իրաւանց յարգութիւնը.
իսկ երկրորդ՝ ամեն մարդոց մասին բարեկարգ
լինելը: Այժմ այս երկու գլխաւոր սկզբանց
վերայ պիտի խօսինք առանձին:

ՅՈՒ. Ա.

Թէ Ի՞՞նչ է ԻՐԱՒԱՆՅ ՊԱՐՏՔ

1. Մարդոց վերայ եթէ նկատենք, կուն-
նենք, որ նոքա առանձին ձիրքերով մէկ մէկց

զանազանւում են, օրինակ՝ մէկը մեծ հան-
ձար ունի, միւսը անհանձար է. մէկը մոքի
դատողութեամբ բարձր տեղ է բանում, միւսը
իր շուրջը եղած առարկաների վերայ անգամ
մտածելու և գատելու անկարող է. մէկը ու-
ժեղ մարմնոյ կազմուածք ունի, միւսը թոյլ
և տկար է:

2. Եթէ մարդիկ բնութեան ձիրքերով մէկ
մէկից այսպէս զանազանուելով իրենց մէջ
անհաւատարութիւն են կազմում, բայց կայ
մի այլ Աստուածային պարգև որ ամենին էլ
հաւասարացնում է, այն է բնութեան կարա-
րելութեանը, որ հաւասարապէս ամենին պար-
գեւած է Աստուած մի օրինակ. վասն զի ամե-
նին կարողութիւն առւած է միակերպ խոր-
հելու, մոտածելու, գատելու, կամելու և
գործելու. ամենին մի օրինակ պարգեւած է
կեանք, անուն, և համբաւ ունենալու բաղ-
ձանք. նաև ստացուածք կոմը հարստութիւն
ունենալու ցանկութիւն. բնութեամն այս կա-
տարելութիւնը կասուի իրաւանեց: Ուրիմն
եթէ մարդիկ ներքին ձիրքերով անհաւատ

են, բայց Աստուծոյ պարգևած իրաւունքներով ամէնքն էլ միմեանց հաւասար են: Որ իրեւ սեպհական ընութեան ժառանգութիւն ամենին ազատ կերպով վայելելու իրաւունք տուած է առանց բանաբարւելու:

Յ. Նախախնամութեան այս կարգադրութեանց մասին ուրիշ կերպ չենք կարող մտածել. բայց եթէ նրանով կամեցեր է Աստուած մարգաց մէջ ընկերութեան կառը ամրապնդել. իբր զի, մարդիկ որ իրենց երկրաւոր կեանքում օժանդակութեան պէտք ունին, իւրաքանչիւրին առանձին ձիրքեր շնորհելով՝ հաստատած է նոցա մէջ այս օրէնքը, որ հզօրը տկարին օգնելով, մոտացին՝ անմօիին. հարուստը՝ աղքատին ևլի. պահպանին իրենց մէջ հաւասար եղբայրութեան պարտականութիւնը: Առաքեալը ընկերական այս օրէնքը հոգեորի վերայ ակնարկելով ամբողջ մարդկացին աղքը օրինակում է մի մորմույ, որ ունի իր վերայ շատ անդամներ. մէկը մէկից աւելի կարեւոր, մէկը մէկից աւելի պատուվ և պիտանի և մի մարմնոյ այսքան արգելը

անդամներով կազմուելը Աստուածային կամաց գործ համարելով՝ ցոյց է տալի պատճառը այս խօսքով, որ նոյն անդամները մէկ մէկի պէտքերը հոգան: Ա. Կողմ. Ժ. 12 — 26:

Իսկ այն մասով, որ հաւասար պարգևած է ամենին, պիտի իմանանք. որ նորանոյլ հաստատաց նիւթանց աղջուանուր հաստատեց նոցա մէջ այն մաօք, որպէս զի նրանցով իւրաքանչիւր մարդ՝ իր կարողութիւնը ի գործ գնելով, իրեն համար մի Եղանակութեան պատրաստէ:

4. Մարդոց այս իրաւունքը անբանահայելն է, այսինքն արնապէս աղքատ օրէնքով՝ հաստատած, մինչեւ անգամ նրան բռնաբարովը, կամ խափանելու աշխատողը անմեղադրելը չէ մնում Աստուծոյ մօա: Հաճ. Ժ. 4. Ա. Կողմ. Զ. 6. 7.

Բայց պէտք է զիտենալ, զի թէ և ամեն մարդ իր իրաւանց տէրն է որ պիտի ի գործ զնէ թէ հոգեւոր և թէ երկրուոր կեանքը բարւոքելու, պահպանելու և երջանկոցնելու մասին: Սակայն իրաւանց պարգևովը սահմանափակած է զայն փոխադարձ ընկերակի-

բութեան օրէնքովի պատուիրելով որ մեր ըն-
կերը մեր անձի պէս սկզեն+ և նոցա իրա-
ւունքը մեր իրաւանց պէս յարդէն+ Այսինքն,
ինչպէս որ կամենում ենք, որ մեր իրաւունք-
ները ի գործ դնենք առանց արգելափի՛ ու-
նենալու, նոյնպէս թողունք ուրիշներին ևս
իրենց իրաւունքը ի գործ դնել ազատ առանց
մեր կողմից արգելք ունենալու :

5. Մենք աւելի ևս բացատրելու համար
Աստուածային սահմանած այս ընկերութու-
թեան օրէնքը, քննենք թէ ի՞նչ կուզէ հաս-
կացնել « ընկերութ ու անջի պէս սկզէ » ասելով. —
պարզ է, որ սորանով, իրաւամբ պարտաւո-
րում է մեզ պաշտպան հանդիսանալ նաև
մեր ընկերոջ իրաւանցը, կեանքին, անուանը,
համրաւին, սուացուածքին, և ամեն բանի, որ
իբրև ժաւանգութիւն, բնութիւն պարգևած
է նոցա:

Ազա ուրեմն այս օրինաց գէմ կմեզան-
ցեմք, երբ որ մեր կրած վնասուց համար մի-
այն վշտակրեմք, իսկ այլոց վնասուց մասին
անտարբեր գտնուիմք: Երբ որ միայն մեր անձին

օդուտը, հանգստութիւնը և խազաղ երջան-
կութիւնը մտածենք, իսկ այլոց հանգստու-
թեան և երջանկութեան մասին չկամենանք
մոտածել, երբ որ միայն մեր անուան համ-
բաւոյն, կենաց ապահովութեան և ընից
պահպանութեան ուշ գարձնենք, իսկ այլոց՝
ոչ երբէք, կրմ ջանք անենք արագաւորել
չարամսութեամբ:

6. Հարկաւոր է այս տեղ բացատրել թէ
ընկեր ասելով ով պիտի իմանանք. —

Մեր Փրկիչը Ստմարացւոյ առակոլը դոյց է
տալի, թէ ամեն մարդ, որ մեզ բնութենա-
կից է, թէ ծանօթ և թէ անծանօթ, թէ
համազգի և թէ օտարազգի հաւասարապէտ
առնելով մեր ընկերն են, որոնց սիրելու և
նոցա իրաւունքը յարգելու կերպը ուսուցա-
նում է այն վաեմ խօսքով, որ աւանդում է
իբրև հրմն ճշմարիտ բարոյական կենցողա-
վարութեան, ասելով. « Ինչ որ կամենում էք,
որ ուրիշները ձեզ անեն, նոյնպէս դուք ևս
նրանց արէք », Աւրեմն ինչպէս ցանկանում
ենք որ ուրիշները մեղ օգնեն, մեր իրաւունք-

ները մեզ համար սուրբ համարեն, նոյն ցանք
կութիւնը մենք ևս այլոց վերայ պիտի ու-
նենանք:

7. Մենք իբրև քրիստոնեայ, այս օրէնքը
պիտի կատարենք մեր կենցաղակալառութեան
մէջ առանց այլոց կենցաղակարութեան հան-
գամանքը ի նկատի առնելու. օրինակ, եթէ
իմանանք թէ, ուրիշները իրաւանց գործա-
դար չունենան կանոնը խանդարելով, դէպի ի մեզ
չարիք են հնարում, մենք այն ժամանակ նո-
ցա հետ փոխադարձութեան սկզբունքով վար-
վելու չենք. այլ բարեւիրունեան ակնունուն
չարեաց փոխարէն բարութիւն փոխանակե-
լով։ Եթէ ամեն մարդ այս սկզբունքը գիտե-
նար յարգել. վրէժինդրութեան ոգին աշ-
խարհքից կանչետանար, և սէրը և խաղա-
ղութիւնը ամենի որտի մէջ կթագաւորէր.
վասն զի այսպիսի կենցաղակարութիւնն է որ
խապառ կնուածէ թէ չարիքը և թէ չարա-
գործը։ Հաօմ. ԺԲ. 20:

Մինչեւ հիմայ ինչ որ մարդկային պարտուց
և նորա փոխադարձութեան կանոնի վերայ

խօսեցինք, ընդհանրապէս ամենին համար է,
ինչ աստիճանի և ինչ կոչման տէր էլ լինին,
որոնց իրաւունքները մէկ է իբրև մարդ. եթէ
մէկը Աստուծոյ տուած պարգեռվը առատ է,
կամ իշխանութեան տէր է կամ հանճարա-
ւոր, իսկ միւսները տկար, անզօր և անմիտ,
պատճառ չունի երբէք նրա վերայ զրկանք
կամ բռնութիւն բանեցնել. կամ տկարի վե-
րայ զօրանալ կամ կարձամիտների վերայ
հպարտանալ և արհամարհիլ, որոց դատաս-
տանը մեծ է և պահանջմունքը իմաստ, այլ
ընդհակաւակն պարտաւոր է ամենի իրա-
ւունքը յարգել և որքան որ կարող է նոյս
երջանկութեանը օժանդակել։ Ղուկ. ԺԲ. 48:

ՀԱՐՑՄՈՒՆՔ.

- Աստուծոյ մարդոց վրայ պարտք դրած է և քա-
նի՞ են.
- Այդ պարտքերը քանի՞ սկզբանց վրայ հաս-
տատած է, և որո՞նք են.
- Թէ որ մարդիկ մէկ մէկից զանազանութիւն
ունին. ընչ՞զ են զանազան օրինակներով ցոյց տուր,

4. Թէ որ մէկը միւսից աւելի ձիբք ունի. իրաւունք ո՞ւնի չունեցողին վրայ պարծենալ:

5. Թէ որ մէկը միւսից զօրաւորէ, իրաւունք ո՞ւնի տկարին զրկել կամ հարստահարել:

6. Մարդիկ ո՞ր բանով հաւասար են միմեանց, և ո՞ր բանով անհաւասար:

7. Այդ հաւասարութիւնը և անհաւասարութիւնը, որ Աստուած իր ուղած կերպովը սահմաներ է մարդոց մէջ, առանձին նպատակ ունեցած է, և ի՞նչ է:

8. Ցոյց տուր, առաքեալը ի՞նչ օրինակով է բացատրում փոխադառութեան այդ օրէնքը:

9. Հաւասար պարգևներով մարդիկ մէկ մէկի հետ մրացնելովը ի՞նչ նպատակ ունէր:

10. Հաւասարութեան սկզբունք ասելով ի՞նչ ես իմանում:

11. Եւրաքանչիւրի հաւասարութեան սկզբունքը ազատութեամբ վայելելու մէջ չափ դրած է Աստուած, և ո՞րն է:

12. Եւրաքանչիւրի հաւասարութեան սկզբունքը յարգելու համար Քրիստոս Տէրն մեր ի՞նչ օրէնք դրած է:

13. Այդ օրէնքով իրաւունք ունի՝ ամէն մէկը ամէն բանի մէջ միմիայն իր օգուտը մտածել. — ընչո՞ւ:

14. Մէր հանդստութեան համար այլոցը խափանելու իրաւունք ունի՞նք:

15. Հնկեր ասելով ի՞նչ ես իմանում:

16. Բացատրէ Սամարացւց առակը. և նորա իմաստը թէ ինչ կուզէր հասկացնել մեր Տէրը:

17. Եթէ մէկը փոխադառութեան կանոնին հակառակ մեղ հետ վարուի. կամ մեղ չարիք հասուցանէ. մենք ի՞նչպէս վարուելու ենք նորա հետ:

18. Ասա, Պօղոս առաքեալի տուած բարոյական պատուերը:

19. Ասածներից ի՞նչ հետևութիւն կարող ևս հանել:



ՅՈՒ

Ք.

ՊԱՐՏՔ

ԵՒ

ԻՄԱԿՈՒԵՆՔ

ԾՆՈՂԱՑ ԸԴ ՈՐԴԻՍ

1. Մանուկը երբոր ծնումէ, նոր աշխարհը է գալիս, բոլորլին անզօք է լինում իր վերայ մտածելու, իր անձը հոգալու և իր կեանքը վտանգի դէմ պատսպարերու մասին. ըստ որում այս ամէնը իմանալու և հոգալու համար հարկաւոր է նրանի նարհոյ զգացնելու:

Հոգաց հանճար, գիտութիւն և բարոյական իշխութիւն, որոնցից զուրկ է այն հասակում:

2. Մանկութեան այն հասակից սկսած մինեւ զարգանալը, նորա այս կարեւոր պէտքերը հոգում են ծնողները՝ մատակարարելով նոյանունդ՝ պարագանալը՝ համար, զգեստ՝ ցրտից և օգոց վտանգաւոր ազդեցութիւնից՝ պարապաշտը՝ համար, դաստիարակութիւն՝ երկրաւոր աշխատութեանց մասին հմտութիւն և կարողութիւն ունենալու համար, և ամենից առելի գիտութիւն և ուսումն՝ մատուցածութեանը զօրացնելու համար, որոնք կատարելու մասին գեռ անզօր լինելով, այս ամէնը պարտաւորապէտ կատարում են նորա ծնողները. և ահա այս է պատճառը որ ամէն գէպքերում իրմւ բնազդումով՝ մանուկները զիմում՝ են ծնողաց ամենայն վստահութեամբ:

3. Բնութեան օրէնքով ծնողաց սպարտաւորութիւնը ծանրանում է առաւելապէս այն պարագայի մէջ, որ նա իր որդուոց ոչ միայն մնուցանելու և խնամելու մասին պիտի հռպայ, այլ և նորա մարմինը գիղիքապէս պիտի

կրթէ հետզհետէ դժուարին աշխատութեանց մարժեցնելով, որպէս զի կարող լինի չափահամ եղած միջոցին ամեն դժուարին պարագայից մէջ տոկունութիւն և արիական համբերութիւն ունենալ, մարմնաւոր կամ ծառայական աշխատութեանց մէջ կորդ ու կանոն պահպանել. և գիշաւորապէս տնտեսագիտութեան հմտութիւն, որ կարող լինի գիտենալ չափաւոր լինել թէ ուրեւ խմելու, թէ վենցաղավայրութեան, զնօտանիք, զուացնանալու, ուրախանալու, և որպէս մէջ:

4. Նորա միտք լուսաւորելու համար հարկաւոր է հոգաւորական իշխութիւն տալ, որ կարող լինի վարժութիւն ունենալ խորհելու, խօշութեան և գէպքերի վերայ դաստիարակութեան մէջ: Նրան հարկաւոր է նաև արհեստի և առեւարական գործերու մէջ հմտութիւն ունենալ. որ կարող լինի թէ իր կեանքը աղախնիւ և թէ իր կենաց վիճակի երջանիւնել:

5. Մտաւորական կրթութիւնը մանկութեան հասակից հարկ է սկսել, բայց միշտ նոցաց բնաւորութիւնը և մտաց ընդունակութեանը:

Անկար ի նկատի ունենալով՝ վասն դի մոտաւու բական կրթութեամնը, որ նորա բարոյական կենաց հիմքն է, առաւել ուշագրութիւն դարձնել հարկաւոր է, սոյն պարագայիս մէջ, որ ոչ մանկանց աշխատութիւնը և ոչ ծնողաց հոգաւարութիւնը ի գուրք անցած չլինի, այլ արդիւնաւոր է այս, ինչ որ մանկան ցանկալի է, և ինչ որ իրենք կամենում են:

6. Մտաւորական կրթութեան մէջ մանուկը ինչ տպաւորութեան ենթարկուի, թէ բարութեան և թէ չարութեան, թէ առարինութեան և թէ մոլութեան, նոյնը կունենայ և ի գործ կրնէ առաջարկար իր կեանքում, ուստի պիտի նկատեն ծնողները թէ որ իրենք անկարող են զաստիարակելու մասին՝ յանձնել նորան, որ բարուք և բարոյացալէս գաստիարակել գիտէ. բայց միշտ գուշանոլով գաստիարակին, որ լինի խոհեմ և բարոյականութեամբ զարգացեալ առանց որոյ անօգուտ է մանկան թէ մոտաւոր կրթութիւնը և թէ գաստիարակութիւնը:

7. Թէոք է ուսուցանել մանուկին և ժա-

մանակի յարգը, և զայն օգտակար կերպով ի գործ գնելու կարևորութիւնը. այլ և հասկացնել նորան և ուսման օդուգը, որպէս զի սիրով վառուի դէպ ի ուսումնա և դէպ ի աշխատամիրութիւնը:

8. Բարոյականութիւնը թէ և խրատով է աւանդում. բայց հարկաւոր է կցել խրատի հետ նաև անցնական օրինակները: Այն օրինակեներից որ մանուկին արվում է, գլխաւորը և օգտակարը՝ ծնողաց անձնական օրինակն է. քանզի առաւել ազգու կնիրգործեն մանուկի վերայ ծնողաց խրատները, եթե որ անցնական օրինակն աւանդուին:

Մինչև հիմայ խօսեցանք այն բարոյական պարագաց մերայ, որին ծնողները բարոյապէս և բնականապէս ենթարկուած էին որդւոց նկատմամբ: Այժմ խօսենք այն պարագաց մերայ, որ մերաբերում է Սաստածնաշտութեան, և եղբայրսիրութեան կոմ ընկերսիրութեան, որ ուսուցանելու են ծնողները նոյն կրթութեան միջոցին:

9. Աստաւահաղոշութեան և ընկերսիրու-

թեան ուսումն այնպէս տպաւորելու է մա-
նուկի մնաց մէջ, որ խմանան համազմամբ թէ
այս պարտուց մասին պատասխանատու են
Աստուծոյ այն չափով ինչ չափով պատասխա-
նատու են իրենց բարոյակոմ կեանքի և այլ
պարտուց մասին, և թէ այս պարտուց կա-
ռարելէն կախուած է նոցա յաւիտենական
կենաց վիճակը:

10. Այս ուսումն պէտք է աւանդել Սուրբ
Գրոց մէջ բովանդակուած կանոններով ու
խրամաներով:

Որպէսնեաւ ասուածածպաշտութիւնը կա-
տարվում է աղօնեով և բորբոքածուիան գործ-
էւրով, ուստի ուսուցանելու է թէ ինչպէս
պէտք է աղօթել, և թէ ինչ օգուտ ունի կա-
նոնաւոր աղօթելը: Այս ուսումն աւելի լաւ
կտպաւորի մանուկի սրուումը եթէ ծնողները
աւանդեն իրենց հետ աղօնել բայց, նաև
իրենց բարեպաշտուկան գործոց ժառնեկց
աներով:

11. Զանալու են, որ նոցա մոքում չարմա-
տանան մոլի սովորութիւններ, որք են հպար-

տութիւն, կտմուկորութիւն, չարամտութիւն,
նուխտնձ, վրէժինդրութիւն, անգիմութիւն,
բարկութիւն, ստախօսութիւն, խարդախու-
թիւն և սոցա մերձաւոր մոլութիւններ, բայց
եթէ այս մոլութիւններից մի քանիսը նկա-
տելու լինին նոցա վերայ, քանի որ գեռ նոր
են ջանալու են արմատախիլ անել: Որովհե-
տեւ ամեն մոլութեան, երբ որ նոր է՝ հեշ-
տութեամբ զիմազրելու կարող ենք, բայց երբ
որ քանիցս կրկնելով գործածուին, ու մեր
անհոգութեամբը ժամանակ տնցնի պրան,
բնութեան մէջ հապտատութիւն կգանի, և
ամէն ճգնաց կդիմազրէ:

12. Ասացինք որ բարոյականութիւնը օրի-
նակը ու խրատով պիտի աւանդուի, ուստի
հարկաւոր է խրատի հետ այնպիսի օրինակ-
ներ տալ որ մանուկների կրթութեան օգտա-
կար լինին:

13. Այս ծնողները որ իրենց վերայ ցայց
տուած անձնական օրինակին հակառակ խը-
րատներ են տալիս, կամ առած խրատը
իրենց վարոց և բարոց հակառակ է, պէտք

է գիտենան, որ մանուկները բնութեամբ
խրատը զանց անելով, միայն օրինակին կը-
հետեւին:

14. Մանուկ տղայոց բարոյականութեան
լաւ և վատ լինելը, ինչպէս որ ծնողաց բա-
րյականութիւնից կախումն ունի, նոյնպէս և
ընկերութիւնը, ուստի ծնողները այս մասին հսկո-
ղութիւն պիտի անեն իրենց որդուց վերայ,
որ բարոյականութիւնից զուրկ աղօց հետ
զնուկերանան, յարաբերութիւն չունենան. և
վնասակար ու բարոյականութիւնը իտանգարող
տեղեր չքածախեն, որպէսիուե շատ հեշտու-
թեամբ այսպիսի տեղերի տեսաբանները ման-
կան միաք իրենց կարապ են դրաւել:

15. Կիսաւսրապէս ամենայն ծնող հոգ
պիտի տանի որ որդուց հետ մի օրինակ յա-
րաբերութիւն ունենայ, թէ սիրոյ և թէ այլ
հանգամանքների նկատմամբ, ու նոցա հետ
արդարութեամբ և անառողջութեամբ վարուին.
որպէս զի որդուց մէջ մէկ մէկի դէմ հակա-
ռակութեան, ատելութեան և նախանձու
գրգիռ չորս ցանկն այլ սիրով և խաղաղու-

թեամբ կենցաղավայրին: Այս տեսակ ծնո-
ղուկան վարմանց օրինակ ունիմք Յակովը նա-
հապեալ, որ իր որդուոց հետ մի օրինակ
վարվելով, կամ Յովսէփը միւս եղբայրներից
գերադասելով տեղ և խանց մէջ անհաշ-
տելի ատելութիւն սերմանեց նոցա սրտում:

ՅՈՒ. Պ.

Եթե օր ու օր անունը այս պատճենը չ
առաջ գալիք կամ անդամը առաջ անունը չ
առաջակայի առաջ առաջ անունը կամ ան-
ունը առաջ առաջ անունը առաջ առաջ անունը

Սինէկ Հիմայ խօսեցինք թէ ծնողները ինչ
առարտքեր ունին գէպ իրենց որդիքը, պիտի
պիտի խօսինք ծնողաց իրաւանց վերայ, որ
բնութեան և Առուռածային օրէնքով ունին
որդուոց վերաբերութեամբ:

1. Ինչպէս որ ծնողաց պարտականութիւնը
մէծ են որդուոց մասին, նոյնպէս և նոցա
իրաւունքը բացարձակ կերպով անհատ և ան-
հակառակէլիք են որդուոց վերայ: Ծնողքը իրենց
մանուկներին բարոյապէս դաստիարակելից
յետոյ, նոցա իրաւունքն է որդուոց թէ գործ-
գերը և ծախքը կարգաւորել և նոցա քա-

դոքական կեանքում կառավարելու կերպերը
քննել, թէ ի՞նչ ընկերութեան կամ մարդոց
հետ յարաբերութիւն ունին:

Իրաւունք ունին որգւոց վերայ գործածել
և այս միջազները, որով կարելի կլինի նոցա
սրտում ծնողական կամաց հնադանդելու օ-
րէնքը հաստատել:

2. Բայց այս իրաւունքները գործ գրած մի-
ջոցին պիտի նկատեն, որ միմիայն որգւոց
բարեկեցութեան և բարոյական բարուց և
վարուց ուղղութեան համար լինին և ոչ թէ
կիրք յագեցնելու կամ իշխանութիւն բանե-
ցնելու համար, որ վատ և վնասակար հետե-
ւանաց ծնունդ կարող է տրամադրել որգւոց
սրտի մէջ: Այս մասին խստիւ պատուիրում
է Առաքեալը «Հայրեր, ձեր որդիքները մի
զայրացնէք, այլ իրատեցնէք Տիրոջ երկիւղով
և իմաստութիւնով»: Եփե՞ն Զ. 4:

3. Ինչպէս որ ծնողաց սրաբուռութիւն-
ները ժամանակաւոր են, այնամբն մինչե-
նոցա (ազայց) հասակ առնելը, նոյնպէս և
իրաւունքը:

4. Հայրական իրաւունքը պիտի տիրէ որ-
դւոց վերայ քանի որ տղայ են. բայց երբ նոքա
ի չափ կատարելութեան հասնին, և իմացա-
կան գորութիւնը նոցա մէջ կատարելապէս
ամի մինչեւ կարող լինին նոքա իրենց պաշտ-
պանել. կենցաղական որ և իցէ դէպքերում
կամ իրենց բարոյականութեանը ուղղութիւն
տալ. այնուհետև ծնողաց թէ պարտակա-
նութիւնը և թէ իրաւունքը հետզհետէ
կքիշանան:

5. Կան այնպիսի ծնողներ, որ անկարող
լինելով որգւոց գաստիարակել, պարտաւոր-
ուած յանձնում են այլոց (ուսուցչաց), ուս-
տի ուսուցիչները ևս նոյն պարտքը և նոյն
իրաւունքը ունին տղայոց վերայ ինչպէս
ծնողքը, վասնորոյ և պատասխանագու- էն նո-
ցա ուսման և կրթութեան կատարելութեան
մասին թէ Աստուծոյ առաջ և թէ հասարա-
կութեան:

ՀԱՅՐՑՄՈՒԽ. 1. Ի՞նչ է պատճառը որ մանուկները ծնողաց
խնամքին կարօտ են լինում:

2. Քացատրէ տղայոց պակասութեան այն պարագաները, որ ծնողը պարտաւորւում էն հոգալ:
3. Ընդհանրապէս ծնողաց պարտքը ի՞նչ է:
4. Թէ որ ծնողքը անհոգ լինին ու թող տան, որ տղայքը ծուլութեամբ և դատարկ կեանք անցուցանելով մեծանան, չափահատ լինին առանց ազրելու կամ վաստակ անելու կերպը ուսուցանելոյ, նոցաբարի՞ք արած կլինին:
5. Ծնողաց այսպիսի վարժանքը ինչ հետևութիւն կռւնենայ:
6. Օրինակ տուր:
7. Հեղի քահանայն իր տղոց վատ արարմունքը չյանդիմանելու համար. տղայքը ինչ վիճակ ու վախճան հնանցան, և ինքը հեղին ի՞նչ պատիժ ընդունեց Աստուծուց:
8. Եթէ տղան ուսումն կամ արհեստ սորվել չկամնայ, ու ծնողքը անհոգ լինին, տղայոց ապագայի նկատմամբ օգո՞ւտ արած կլինին թէ վնաս:
9. Ընչու — բացատրէ անկիրթ տղայոց վարքը և կեանքը:
10. Օրինակ տուր տեսածներիցդ, ի՞նչ կխորհես այն տղաքների վերայ, որ կամ ծնողներին անհնազանդ մնալով, ոչինչ ուսմունք սորված չեն. կամ ծնողած անհոգութեան պատճառաւ անառակութիւն գործելը ունակութիւն արած են:

11. Ծնողները պարտական են հետամուտ լինելի իմանալու համար. թէ իրենց որդիքը մնչ կանեն. Ժրութեամբ կաշխատեն ուսման և բարոյականութեան մէջ, թէ ծոյլ են:
12. Ո՞րը շատ յարգի պիտի լինի ծնողներին, որ գուց դաստիարակութիւնը, թէ մեծ հարստութիւն ժառանգութիւն ձգելը:
13. Ո՞րը աւելի օգտակար է տղայոց, ուսմունքը և աշխատութեան վարժ լինելը. թէ հայրենական հարստութիւնը:
14. Էնչո՞ւ. — օրինակ տուր՝ տեսածներդ կամ լսածներդ բացատրելով:
15. Եթէ աղան ուսումնարանի գասերում ծոյլ է, անհանգիստ է, կամ վատ պակասութիւնների նշաններ է արտայայտում նորա վերայ, պարտական է դաստիարակը ծնողաց յայտնել՝ թէ ոչ:
16. Ծնողները ի՞նչ միջոցներով պիտի կրթեն իրենց որդիքը. որպէս զի օգտակար լինիւ:
17. Եւելի ի՞նչ հարկից ստիպուած պիտի ոշխատեն՝ որ իրենց որդիքը կրթուած լինին բարոյական ուսման մէջ:
18. Միթէ անսառակ և անբարոյական տղայքը իրենց ծնողաց անարդանը են:
19. Օրինակով բացատրէ:
20. Թէ որ ծնողները իրենց որդիքը մեծացնեն ա-

ուանց առ Աստուած պարտականութիւնը ուսուցանե-
լու լաւ արած կլինին:

21. Ընչու. — բացատրէ զնասնեղը:

22. Եթէ մի տղայ ծնողաց խրատները արհամար-
չէ, և խրատուելու մասին անքաւականութեան նը-
շաններ ցոյց տայ, ի՞նչ պիտի մտածենք այնպիսի
տղայի մասին:

23. Բացատրէ, աւելի ո՞ր բանները ուսուցանելում
մեջ հոգ պիտի ունենան ծսողքը:

24. Ծնողները ի՞նչ կերպ պիտի բռնեն, որ իրենց
խրատը տղայոց վերայ ներգործութիւն ունենայ:

25. Աւելի ի՞նչ մասին զդուշութիւն պիտի ունե-
նան, որ տղայքը չարութիւն չսորվին:

26. Լաւ կանեն այն ծնողները, որ իրենց որդւոց
մէջ սիրոյ և խնամոց խտրութիւն կդնեն:

27. Օրմնակ տուր:

28. Բացատրէ. ծնողները իրենց պարտուց հետ
ի՞նչ իրաւունքներ ունին որդւոց վերայ գործադրե-
լու:

29. Այդ իրաւունքները մշտական են, թէ ժամա-
նակաւոր:



ՅՈՒ. Պ.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԿՈՒՆՔ

ՈՐԴԻՈՑ ԱՌ ԾՆՈՂՍ.

1. Որդիք, ըստ որում մանկութեան ժամա-
նակից ծնողաց այնչափ խնամքը վայելած են
մինչեւ կատարելութեան հասակին համանելը,
Աստուածային օրէնքով ունին նոյնպէս պարտք
և իրաւունք առ ծնողս:

Ա. Նոցա առաջին և գլխաւոր պարտքն է
հնասպանութեամբ ծնողաց, որ պիտի ցոյց տան
սիրով և յօժարութեամբ, ունկնդիր վնելով
նոցա խրատնելին, որ իրենց բարոյական և
բարեկեցութեան օգտի համար իսօսում են.
ևս և սիրով և յօժարութեամբ կատարել
այն հրամանները, որ վերաբերում են որ-
դիական ծառայութեան: Բայց պէտք է նը-
կատել, որովհետեւ կրօնական պարտառ-
ըութեամբ Աստուծոյ հրամանը և առհանջուածու-
գեր ի վերոյ բարձր են ծնողաց հրամաններից
և պահանջմունքներից, ուստի եթէ ծնող-

ները այնպիսի հրաման կամ պահանջմունք առաջարկեն, որ խղճի և աստուածային օրինաց հակառակ են երեսում, թէսէտ նոխագասելի պիտի համարեն Աստուծոյ հրաժանքն հնազանդելը և նորա պահանջմունքը կատարելը, բայց իրաւունք չեն կարող ունենալ ծնողաց հակառակելու, իսկ եթէ այնպիսի գէպքերի անշնազոնդ լինելու պատճառու հետեւանքներ յառաջ գան ծնողաց կամքով, «ի՞նչ և համբեցութեամբ պէտք է տանել»:

Բ. Պատիւ և Նշտարանաց յարդանիւ ընծայել, պարտականութիւնը Աստուած օրէնքով է աւանդում, «պատուէ քո հայրդ և քո մայրդ, որ քեզ բարիք լինին, ու երկրի վերայ լաւ ուրախ, օրեր ունենաս, որ քո Տէ՛ր Աստուածը պիտի տայ քեզ»:

Պատուել և մեծարել բառերը, առանձին պարտականութեան է ենթարկում մեզ, որ երկրիս վերայ ամէն սիրելիներից ու մեծարելի անձինքներից գերագոյն կերպով պատուենք և մեծարենք մեր ծնողները, նաև մեր անձից աւելի, բայց սաոր քան այն մե-

ծարանքը, որ Աստուծոյ ենք նուիրում: Ծնողաց պատուած կլինինք: Երբ նոցայիշատակը անջնջելի ունենանք մեր սրտում, իսկ մեծարած երբ ամէն տեղ պատուաւոր կերպով խօսենք նոցա վերայ, և զգուշանանք որ մեր վարուց անկարգութեամբ նոցա անուան յիշատակն անպատւութիւն չըերենք: Այս պարտուց հետ կցորդ է և ծնողաչընթեանը, որ որգիական սէր է կոչւում: և պահանջում է որ մենք ունենանք մեր ծնողաց վերայ նոցա ուրախութեան և երջանիկ բարօրութեան պատճառ լինելով:

Գ. Հոգագործութեան, որնոցա ծերութեան հասակում, կամ անձնական կարսզութիւնից զարկ եզած միջացին պիտի նպաստաւորնք, որքան կարող ենք, որ նոքա հանգիստ ու երջանիկ մնան, առանց մի և որ իցէ անձնական նեղութեան ունենալու:

Այս պարտուց կատարումը փոխարինական է, ինչպէս նոքա մեր տկար և անզօր հասակում միշտ և անպակաս իրենց ինամքը և հոգասարաւ թիւնը չինայեցին, և շատ ան-

գամ՝ անցնալուհու նիշնենէր անելով կատարեցին նոյնը պարտաւորուած ենք փոխարինել նոյա։ Ավերախտէ համարում Սուրբ Գիրքը այն որդիքներին, որ իրենց ծնողներին ծերութեան կամ հիւանդութեան վիճակում, անխնաւիք կիթողուն։ Պօղոս առաքեալը այս մասին գրումէ, «ոլ իրեներին (ծնողաց) մանաւանդ թէ լնտանիքներին խնամք չտանի հաւատուից ուղացած է։ և անհաւատներից աւելի չար է։ Ա. Տիմ. Ե. 4։ Թէև սոոյդ է, որ Ա.առուած կարտութիւնից աւելի բարձր ծաւայութիւն չէ պահանջում մարդուց, բոյց այս սրարաւուց մէջ չենք կարող արգարանալ Աստուծոյ մօտ։ քանի որ մեր անձնական հաճոյքները կատարելու միջոցներ կարողանում ենք գանել առանց լնտանեաց ինտմքը կարծեցնելու։

Արդ՝ թէ որ այս սրարաւոյիս մէջ մեր անձնական հաճոյքների համար արած անովքար ծափերը խնայենք, և նոյս օգախն նուիրենք, երբէք դժուարութիւն չենք ունենար։

Խոհեմ և բարեսկրաւուց ամէն ժամա-

մահակ այս մասին կխորհի, և ամէն պարագայի մէջ իր ծնողացը որդիական ու յար և գանդ ցոյց տալու պարաւոց պարուազանց մի վնիքը։

Իսկ ամբարիշտ և ասկերախտներն են միայն, որ ծանր բեռ են համարում ծնողաց ծերութեան և անկար վիճակի մէջ անելիք խնամքը։ Մարդ. Է. 9—13։

2. Այս տեղ հարկուոր ենք համարում որդւոց պարագերի մասին Սուրբ Գրոց մէջ զրուած պատուէրները գնել, որ գիտենայ ամէն տղայ թէ որդւոց հնազանդութիւնը, պատիւ և մեծարանք տալը ինչ օրհնութեան և բարեաց աղբիւր են լինում։ Իսկ անհապանդութիւնը և ասկերախտութիւնը՝ ինչ չարեաց, սնէծքի և թշուառութեան։ «Որդիք ձեր ծնողաց հնազանդ եղեք տիրո՞ջ հրամանաւ, որ այն է արժանիր, որ քեզ լուլնի ու յաջող օրեր անենաս երկրի միքալ»։ Եփու. 2. 1—3։ «Որդեակ Հօրդ բարի իսլուաներին ականջ գիր և մօրդ դրած օրէնքը մէր մերժիք, նրանք ժեղ գլխիդ ոսակը միք-

նին, և պարանոցից ոսկեղէն զարդը։ Ա. առաջ.
Ա. 8—9. «Որդիք, ամէն բանի մէջ հնա-
գանդ եղիք ձեր ծնողներին, լնչու որ Տիրոջ
առաջ հաճելին այն է»։ Կառ. Գ. 20.
«Անիծեալ լինի նա, որ իր հօրը և մօրը
հոյշումէ»։ Բ. Օք. Իէ. 16.
«Նա որ իր հօրը ծաղրում է, և իր մօրը
անարգում է, ձորերի տպւաւները պիտի հա-
նեն նորա աչքերը»։ Բ. Օք. Զ. 16.
«Հնագանդ որդին պիտի օրհնուի. անհը-
նագանդը պիտի կորչի։ Հօր օրհնութիւնը
որդւոց տունը հաստատում է, խակ մօր ա-
նէծքը կործանում է»։ Իմաստ։

Սրանք են Սուրբ Գրոց մէջ աւանդած օրհ-
նութիւնները և անէծքները. հնալունդ և ան-
հնալունդ, զար և աղերտիք որդւոց համար-
սրանից հետեւեալ գիտելիքները քաղելով ըզ-
գուշութեամբ և Աստուծոյ երկիւղիւ պիտի
կատարենք։

Ա. Թէ ծնողաց հնագանդութիւնը կը օնական
պարտի լինելով՝ անհրաժեշտ է որ կատարենք.
որին զանցառու եղողները, թէ Աստուծոյ

և թէ մարդոց մօտ անարգուած յանցաւոր հն։
Բ. Թէ ծնողաց անհնազանդութիւնը ուղ-
ղակի Աստուծոյ է վերաբերում, որոյ պատ-
ճառաւ նորա բարկութիւնը իրաւամբ հաս-
տառում է մեր վերայ։

Գ. Թէ անհնազանդութիւնը ուղ ապերախ-
տութիւնը պատուհաններով կուռած է։ որ
պիտի համնին մեր վերայ կամ չափահաս
եղած միջոցին, կամ ծերութեան օրերում։

ՀԱՐՑՄՈՒԽԻՑ.

1. Թէ որ ծնողները որդւոց նկատմամբ պարտքեր
ունին կատարելու և իրաւունքներ ունին գործա-
գրելու որդիք ևս ունին նշնպէս պարտք և իրա-
ւունք ծնողաց նկատմամբ։

2. Որո՞նք են, բացարկ կը մասնաւ մշյուն այս

3. Թէ որ ծնողքդ մի բան հրամայեն անելու և
որիշը իրատէ որ չանեն որի՞ն հնագանդելու եւում

4. Եթէ ծնողացդ արգելած բանը ուրիշը թելա-
զրէ քեզ որ անես, ո՞րի իրաքը պիտի յարգես։

5. Թէ որ ծնողքդ Աստուծոյ օրէնքի գէմ մի
բան հրամայեն պարտակա՞ն ես կատարել թէ ոչ։

6. Թէ որ համողուած ես, որ ծնողքդ դաժան
են, պէտք է նոցա յարգել և խօսքը լսիլ։

7. Եթէ նողքդ անպատիւ եղած են իրենց գործքերովը, և հասարակութիւնը արհամարհանօք է խօսում նոցա մասին, դու ի՞նչպէս պիտի վարուիս ծնողացդ չետ:

8. Թէ որ ծնողքդ մի պակասութեան մէջ տեսնես, քոյ պարտքդ ի՞նչ է, նոյն միջոցին հրատարակել թէ ծածկել:

9. Աշ նահապէտի Քամ որդին հայրը ծաղրելի ցուցանելու համար նորա մերկութիւնը եղբարցը յայտնելով լու արան թէ ոչ:

10. Ընչու, ի՞նչ պէտք է անել:

11. Այսպիսի գործքերը Ասունծոյ հաճելի կարող են լինել, կամ Աստուծոյ ո՞ր օրէնքի դէմ են:

12. Դիցուք թէ մի տղայ իր ծնողներին ոչ սիրում է և ոչ յարգանք է տափիս նոցա խիստ ընալու մասին պատճառաւ, տակաւին պարտական է նոցա խօսքին հնազանդել:

13. Բացատրէ որդիքը ի՞նչպէս պիտի վարուն ծնողաց հետ, նոցա ծերութեան և չքաւորութեան միջոցներում:

14. Ծնողաց անհնազանդ եղող աղայն՝ քանի յանցանք գործած կինիսաւ:

15. Քաւիթ թագաւորի տղաւոր ո՞րն էր որ անհնազանդ գտնուեցաւ և ի՞նչ հետեանքներ ունեցաւ:

16. Ի՞նչպէս պատճեցաւ:

17. Սուրբ Գրոց մէջ կյիշես այնպիսի մի բարի մարդ, որ իր տղայոց չարութիւնը չպատժելու համար ինքը պատժուեցաւ:

18. Ասա այն խօսքերը որ Սուրբ Գրոց մէջ յիշուած է հնազանդ և անհնազանդ որդւոց համար:

19. Բացատրէ այն հետեանքները որ պիտի ունենան նորա իրենց հնազանդութեան և անհնազանդութեան պատճառաւ:

20. Եշակերտը իր վարժապետին ևս հնազանդել պարտական է,

21. Դիցուք թէ վարժապետը անտարբեր է զէպի տղայոց կրթութիւնը՝ տակաւին յարգել պէտք է:

22. Ի՞նչ զգացմունք պիտի ունենաս երբ տեսնում են՝ որ աշակերտը վարժապետի հետ լու չէ:



ԳԼՈՒԽ Բ♦

ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻ ԱՆՉԻՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ
Ակերպ, թէ ի՞նչՊԵՍ ԳԱՐՄԱԾԵԼՈՒ են:

1. Աստու ած մարդուս ստեղծման ժամանին առաջած է ինքնի խան, անձնական ա-

զատութիւն, որպէս զի իր մարդկութեան սեպ-
հական եղած պարգևները, մարմնոյ անդամ-
ները, մտքի հանձարը, սրտի բաղձանքը,
խիզքը և գատողութիւնը ուզած կերպովը
գործածէ:

2. Ամէն մարդ այս աղատ հանգամանք-
ներով իրաւունք ունի իր ուզած ուսումնակը,
արհեստը, կրթութիւնը սօրվել. ճշմարիտ
կործածը խօսել, մտքի ծնունդը այլոց հա-
զորդել, շարժել գործել և ալին: Միայն
իր ամէն աղատ գործողութեանց մէջ պար-
տական է նկատել, որ չնէշը էրառանց հակա-
ռակը չգործէ, և նորա իրաւանց գործադը-
րութեանց արգելք չլինի: Այս է աստուա-
ծային այն սահմանը, որ մարդու իբրև պար-
տաւորիչ օրէնք տուածէ որպէս բանաւոր և
խոհուն էակի:

3. Բայց այս պարտայի մէջ բացառու-
թիւն են կաղմում ճանաւիշը, որ թէ և իբ-
րև մարդ նոյն աղատութեան սկզբունքը ու-
նին, բայց որովհետեւ դեռ նոցա միոքը այն-
քան կարգուցած չէ, որ կորող լինին չարն

ու բարին որոշել. և գործոց մէջ ընտրու-
թիւն անել իրաւանց յարգութեան մասին.
ուստի նոցա մարդկութեան ամէն իրաւունք-
ները ենթարկուած են ծնողաց իրաւանց.
վասնորոյ և առանց ծնողաց հաճութեան
ինչ էլ որ սնեն, յանդաւար են:

4. Ծնողները ինչպէս պարտական են որգ-
ւոց վերայ իննամք սնեննալ, նոյնպէս և պար-
տական են՝ նոցա բարոյական վիճաց, բնուա-
շունեան և գոյցոց վերայ հսկել, քանի որ
անչափահան են, և ընկերական կամ հա-
սարակական կենաց հանգամանքների մասին
հարկաւոր տեղեկութիւններ ուսումնափ-
րած չեն. քանի որ տկար են որ և իցէ մարդ-
կային գործոց, չարի և բարեյ, վնասակարի և
օգտակարի մէջ զանազանութիւն գնել:

5. Ծնողները իրենց որդւոց համար պա-
տախանատու են Աստուծոյ և ընդհանուր
մարդկութեան առաջ՝ նոցա բարոյական և
մտաւորական կրթութեանց մասին. վասնորոյ
և պարտաւորուած են աստուածային օրէն-
քով, որ նոցա՝ թէ կենաց ասլահովու-

թեան և թէ բարոյականութեան վերայ հսկեն։ Նոյս բնաւորութեանց համեմատ ու ուսմն կամ արհեստ սորվցնելով, և մարդկութեան պահանջած կատարելութեան մասին պէտք եղածը ուսուցանել, որք են ճշարգախօսութիւնն, խոռոչնաց կամ դաշնաց մէջ կատարութիւնն, անուն և բարի համբաւունենալու վիճակը պահանջանան լինիլ. և նոցա արժէքը գնահատել գիտենալու, (որոնց վերայ պիտի խօսենք առանձին գլուխներով։)

6. Եթէ նոքա (ծնողները) անկարող են իրենց մարմնական հանգամանքների պատճառաւ այս կարգը պահպանել որդւոց դաստիարակութեան նկատմամբ, Հարկաւորապէս պարտաւոր են այլոց յանձնել, միայն թէ նոքա լինին բարեբարոյ, խոհեմ, աստղածափախ, մատնագէտ և համեստ կենցաղավարութիւն սիրող անձինք։

1. Թէ որ ամեն մարդ ունի անձնական ազատութիւն, ի՞նչպէս գործածելու է։

2. Իրաւոնք ունի՞ մէկը այլոց ազատութեան վերայ բոնանալ։

3. Ծնողները իրաւոնք ունի՞ն իրենց որդւոց ազատութեան վերայ բոնանալ քանի որ չափահաս չեն։

4. Ծնողաց իրենց որդւոց ազատ իրաւոնքներին տիրելը մինչև ե՞րբ կտեէ։

5. Ի՞նչ պատճառաւ, ծնողները իրաւոնք ունին որդւոց ազատութիւնը իրենց հսկողութեանցը են, թարկել։



ԴԱՍԻՄ Գ♦

ԸՆՉԵԿԵՆ ՀԵՆԴԵՄԵՆՔ ԿԵՄ ՅԱՑՎՈՒԹԻՒՆՔ.

1. Առ հասարակ մարդիկ ճանաչւում են իրենց անձնական հանդամանուներով. օրինակ, երբ որ հարկ է լինում մէկ մտրիգու մասին տեղեկանալ՝ յիշում են նորա մոտաց հանճարը. խոհեմունիւնը և ուրիշարյական սովորութիւնները, և նոցա համեմատ դաստում են նոքա իրեւխոչեմ, ճշմարտախօս, արդարաւուր, կամ

իրքեւ անմիտ չարասէր, խարերայ, ստախօս և լի:

Սորանից երևում էր որ մարդուս համար տմեն բանից աւելի թանկագին է անձնական համգամանքը, վասն զի նշանցով, բացայացում են նորա բնու-նեան ստուխ-նեները, և լինում են միանգամայն նորա համար աղքիւր բարեկեցութեան կամ թշուառութեան:

2. Որովհեան մարդուս ամէն յաջողութիւնը անձնական բարոյական յատկութիւնից կախումն ունի. ուստի անհրաժեշտ հարկաւորութիւն եմ համարում առանձին յօդուածներավ խօսել թէ ինչ են և ինչպէս հարկ է ամէն մէկին իրագործել ընութիւնը կատարելագործելու համար:

Առաջի մէջ նայած մարդուս ամէն յաջողութիւնը անձնական բարոյական յատկութիւնից կախումն ունի. ուստի անհրաժեշտ հարկաւորութիւն եմ համարում առանձին յօդուածներավ խօսել թէ ինչ են և ինչպէս հարկ է ամէն մէկին իրագործել ընութիւնը կատարելագործելու համար:

3. Մարդկային կատարելութեան գլխաւոր յատկութիւնը ճշարդախուսանէն է. քրիս-

տոնէական կրօնի պահանջն էլ այն է. մեր երկնաւոր վարդապետն Յիսուս Քրիստոս այսպէս է պատուիրում. «ՅԵՐ ԱՅՆ ԱՅՆ ՊԻՄ ԱՆ ԼԱՌԱՆ»: Ինչպէս որ հաւատաբարութիւնը մարդոց բարեկեցութեան պատճառ է, նոյնպէս և ճշմարտախօսութիւնը:

2. Ճշմարտախօսութիւնը կվերաբերի երկու ժամանակի մէջ կատարելիք գործողութեանց, ներկայի որ խօսում կամ պատմում ենք մի որ և իցէ եղելութիւն, և ապագային՝ որոյ մէջ կատարումենք մեր խօսամունքները: Այս պարագաների մէջ ճշմարտախօսութիւնը շատ հարկաւոր է:

Ուստի մենք ևս ճշմարտախօսութեան ինչութիւնը բացայաց ցուցանելու համար երկու յօդուածի կրաժանեմք. խօսակցութեան, և խօսուման կամ գաշնագրութեան:



ՅՈՒՆԻ

դան ու մաս յա վարակ վազով մասնաւուս
ու ուստի ու ուստի մաքրաբան պատահու
ԽՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ

1. Ճշմարտախօսութեան օրէնքը պահան-
ջումէ. Ֆիլք և սորոյդ խօսել այն բանի վերայ
որ ունկնդիրներու մօտ խօսում ենք. թէ առ
տնին և թէ հրապարակաւ. ուստի որ և իցէ
խօսակցութիւն, որի մէջ գիտում ունինք
համազել հարկաւոր է որ մեր մոքի գաղափարը
ճշմարտապէս հարդարենք. կամ մեր գիտե-
ցած եղելութիւնը իր պարագաներով այնպէս
ծանուցանենք որ կասկածանքի կամ կարծիքի
տեղիք չունենայ:

Կմեզանչենք, երբոր ճշմարտութեան կեր-
պարանքի, տակ խաբէութիւն գործ գնենք,
միտքներիս դնելով համազել մեր ընկերին կամ
հասարակութեանը այն բանի մասին, որ ճշմա-
րիտ չէ. այլ կամ սուտ կամ կարծիքական է:

2. Ճշմարտախօսութեան օրէնքը, որ պար-
տաւորապէս պահանջումէ խօսքի մէջ ճշտո-
թիւն պահել արգելումէ խօսել.

Ա. Խախ այն բանի վերայ, որի մասին լաւ
ուշչառնեն չունիք, և ճշմարտութեան ճշ-
տութեան վերաբ կասկածանքի մէջ ենք. որ
եթէ իրեւ ճշմարտութիւն խօսենք, աւելի
սուտ խօսած լինենք քան թէ ճշմարիտ: Մեծ
ամօթէ, երբ որ մի բան պատմելից յետոյ
նորա պարագաներից սուութիւնը յայտնի լի-
նելու միջոցին, տաել թէ, ևս այդ չգիտէի:
Ուրեմն հարկաւոր է զգուշանալ, որ մեր
խօսքերը նախապէս սույգ տեղեկութիւնից
կազմած լինին. և եթէ հաւատեաւ յայտ-
նի չէ մեզ ճշմարտութիւնը, գէթ այնքան
խօսենք որքան գիտեմք, և այն՝ երկրայական
մաօք և կարծիք:

Բ. Արգելում է, որ խօսակցութեան նիւթ-
առած ճշմարիտ բանը այն կերպով և այն
պիսի պարագաներով չը խօսենք, որ լազին
ովաւ գաղափար տանք: Որ լինում է, երբ որ
պատմած իրազութեանց պարագաներից մի
քանիքը ծածկում ենք, մի քանիքն էլ վո-
փսիսամ խկութիւնից, կամ մեծացնում
կամ վոքքացնում: Կամ՝ այն ձևով ենք

պատմում, որ ունկնդիրը իր մէջ կասկածանք է յարուցմում:

Պատմութեղելութիւնը ամէն մասերով պարզ պիտի լինի, որ ճշմարտութիւնը ճանաչուի: Իսկ եթէ ճշմարիտ եղելութեան մէջ սուտ կարծիք յարուցմունելու մոօք խօսիմք, իբրև սուախօմ՝ յանցաւոր եմք:

Կան մարգիկ, որ ընկերական խօսակցութեան մէջ մի ճշմարիտ բան խօսելու ժամանակ մարմնոյ անդամոց զանազան ձեռք են տալիս. օրինակ, աչքը ծռել, ձայնը մի ուրիշ կերպ հանել, մատերը դարձնել. որպէս զի լսողը կատարելապէս հաւատք չընծայէ իր խօսքին, կամ պատմածի հակուակը իմանայ: Պէտք է գիտենալ որ ճշմարիտ բանը երկրայական դարձնելը սոսութեան չափ մեղագրելի է:

Այլ քանզի մարգկային կեանքի մէջ կանային պիտի դէպքեր: որ խոհականութիւնը ըստիպումէ լռել. կամ եթէ յայտնուի, ճշմարտապէս պատմելու վտանգը յայտնի տեսնելով հարկադրումէ կեղծել. ներելի է այնպիսի

դէպքերի մէջ խոհեմութիւնը բանեցնել՝ բարեփութեան նպատակաւ. անգիտութիւն խոստովանելով:

Վերջապէս պիտի լաւ գիտենանք, որ ճշմարտախօսութիւնը լինդհանուր պարտականութիւն է՝ օրինադրուած ամէնի համար սոտուածային և քաղաքական օրէնքով, ուստի և հաստատ օրէնք պիտի սահմանենք մեր մաքումը, ինչ բան որ չգիտենք, կամ վերահասութիւն գործած չենք, թէ որ աստիճան սոսոյգէ, հարկ չէ որ իբրև սոսոյգ պատմենք. այլ եթէ հարկադրուած լինենք, խօսելու ենք իբրև կարծիք, և ոչ իբրև ճշմարտութիւն: Քանզի բարոյական մոօք աւելի լաւ է կարծեօք խօսելը քան թէ սոսութեամք:

ՀԱՐՅՄՈՒՆՔ.

1. Մարդուս գլխաւոր յատկութիւնը ո՞րն է:
2. Ճշմարտախօսութիւնը մեզանից պահանջողը ո՞վ է:
3. Ճշմարտախօս լինելոց ի՞նչ օգուտներ կարող ենք ունենալ:

4. Ճշմարտախօսութեան օրէնքը ի՞նչ է աղաջան
ջում։
5. Ճշմարտախօսութեան օրէնքը ի՞նչ բաների
մասին արգելք է դնում։
6. Ամեն եղելութիւն իր պարագաներովը հարկա-
ւոր է պատմել ճշմարտութեան համար։
7. Էնչո՞ւ բացատրէ, ո՞ր պարագաներն են որ պի-
տի չխօսենք. կամ կարծենք պիտի խօսենք։
8. Այս եղելութիւնը՝ որ պարագաներովը չենք
դիտել, ի՞նչպէս խօսելու ենք։
9. Կարո՞ղ ենք ստախօս ասել այն մարդուն, որ
մի բանի մասին միայն ճշմարիտը չի խօսիլ։
10. Էնչո՞ւ օրինակ տուր։
11. Ի՞նչն է ստիպում նրան նոյն բանին ճշմար-
տութիւնը չխօսելու։
12. Կարո՞ղ ենք խաբել ուրիշին առանց ստախօս
լինելու։
13. Էնչո՞ւ օրինակ տուր։
14. Անանեան և Սափիրան, ո՞ր բանի մէջ սուտ էին։
15. Եթէ մէկը վարժուած է սուտ խօսելու միջ,
կարո՞ղ է արդարանալ այն մտօք՝ որ սուտ խօսելը
իրեն սովորական եղածէ։
16. Թէ որ քո աէրը հրամայէ մի բանի մասին
սուտ խօսելու, նորա հրամանը կարո՞ղ է Աստուծոյ
առաջքեզ արդարացնել։

ՅՈՒ. Պ.

ԽՈՍՏՄՈՒԵՔ անուանուած անուանուած ան-

ուանուանուած անուանուած անուանուած ան-

ուանուանուած անուանուած անուանուած ան-

1. Խօսակցութեան մէջ պատահումէ որ
մէկին խօստանում ենք այս ինչ բանը տալ
կամ պարգեել. այս խօստմունքը որ մեր բա-
րի գգացմունքից յառաջ է գալիս՝ ճշմարտա-
խօսութեան չափով պարտաւորուած ենք կա-
տարել։ Որովհետեւ այս տեսակ խօստմուն-
քը կցումէ իր հետ և «որացողի անկալը-նիւնը».
վասնորոյ ուր որ խօստմունքը ակնկալեալ է,
բարոյապէս պարտաւոր ենք անթերի կատա-
րել։

2. Խօստմունքը պէտքէ որ գիտմամբ լինի,
այսինքն յառաջապյն մտածուած, ուրեմն
հարկ է որ ճիշտ ինչպէս որ գիտաւորութիւն
ունեցեր ենք, այնպէս անենք, որպէս զի որոշ
կերպով հասկանալի լինի, և ոչ թէ երկրայելի,
որ լինի թէ խօստմոն մէջ խարէութիւն և
ստութիւն խառնենք։

3. Որքան որ խօստմանց կատարումը ան-
հրաժեշտ է, բայց կան այնպիսի պարագաներ,

որ խոստմունքը ճշտութեամբ կատարելու
պարտաւորութիւնից ազատ են կացուցանում։
Այս պարագաները հետեւալներն են։

Ա. Թէ որ խոստմունքը մեր կարողութիւ-
նից բարձր բանի մասին է. օրինակ, խոստա-
ցեր եմք մէկին՝ որ ամէն կերպ դատի մէջ
պաշտպանեմք իրեն, կամ խոստացերեմք
տալ այն բանը, որ յառաջ ունէինք և այժմ
չունինք։ Այսպիսի խոստմունքը մասամբ իրեք
խարէութեան կերպարանք ունի. և մեղա-
պարտումէ խոստացողին այն բանով, որ
խոստմունք անելու միջոցին նկատելու էր
նաև հարաբեւը հարեվառնիւնը։

Մեր կարողութիւնից բարձր խոստմունքնե-
րը՝ որ անկարելի է երեւում կատարել, զգու-
շմանալու ենք խոստանալից, որ փոքր ընկնենք
այլոց մօտ. իսկ թէ որ նորա անկարելի լինե-
լը կանխաւ գիտէինք, և խոստացանք, մեզ
ենթարկումէ խարէբայութեան և ստախօսու-
թեան յանցանքին, ուստի և պարտաւորու-
թիւն է գնում օրէնքը, ակնկալողի վասը
միայն հատուցանել։

Բ. Երբ որ խոստացեալ իրը արգելքի տակ
է գրուած, օրինակ, խոստացեր եմք մի սուր
տալ, չգիտելով, որ սուր կրելը մասնաւոր
կարգագրութեամբ արգելուած է։ Այսպիսի
պարագայով ազատ եմք լինում խոստմունքը
չկատարել։ Այսպէս պիտի իմանանք նաև այն
պարագան, որ իմանում ենք, թէ խոստացած
բանը ստացողը ի վաս ընկերին պիտի ի գործ
գնի, այս պարագայով գարձեալ խոստմունքը
կատարելու պարտականութիւնից ազատ ենք։

Յ. Նատ անգամ՝ պատահումէ, որ մեր
խոստմունքը պատրժաւով է լինում։ այս պա-
րագայիս մէջ խոստմունքը կցուած է պարա-
գայի հետ. թէ որ պատճառը սավումէ. ա-
զատ եմք խոստմունք կատարելից, օրինակ,
մուրացկանին խոստացեր եմք օգնել՝ նորա
պատմած անցքը ստոյգ համորելով, բայց երբ
ընդ հակառակն եմք իմանում, պարտական
չեմք օգնելու։

Դ. Ինչպէս որ բանականութեան կանոնիւ
խօսակցութեան մէջ ամէն խօսքը կշռելով
պիտի խօսենք. որպէս զի ընկերը վիրաւորած

Ալինենք, նոյնպէս էլ պարտաւոր ենք՝ որ Ա
րդե խոստմունք մտ ոռութեամբ և գիտակ-
ցաբար անել։ Ապա թէ ոչ իրեւ խոսում նա-
զանց պիտի դատաւենք։

ՓՈՔԻ ԵՆ ՀԱԾՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ
ԽՕՍԵՆՔ

1. Պատահումէ, որ մեր խոստմունքը կա-
յանաւմէ մի բէտկան պայմանով, օրինակ—
խոստանում ենք Կիրակոսին 50 մանէթ տալ,
թէ որ այս ինչ ծառայութիւնը ի գլուխ հա-
նի։ Այս կերպ խոստմունքին, գաշնադրու-
թիւն կամ գաշնագրեալ խոստմունք կասուի։

2. Գաշնագրութեան օրէնքը խոստման
պէս պարագաւունիւն է, որով երկու գաշնագրեալ
կողմերը պարտաւորում են գաշնագրութեան
համաձայն անթերի գործել։ Եսկ եթէ մի կող-
մը իր գաշը կատարի, և միւս կողմը զլանայ,
կամ թերանայ կատարելու մէջ, այն ժամա-
նակ պարտաւորած է լինում վնասը տուժել
նույն որ գաշնագրութեան գէմ գործեց։

3. Գաշնենք կորելի է երկու կողման հա-

շուտութեամբ միոցն քայիել, և այն ժամանակ
երկու կողմն էլ ազատ են մնում պահանջից։
Այս օրէնքը բնդհանուր է, որով պարտաւո-
րում են ամէն մարդ՝ և զանցառուները են-
թարկում են առջև և նախագահաց։

ՀԱԲՑՄՈՒԿԵՔ.

1. Խոստմունքը իր մէջ ի՞նչ հանդամանքներ է
պահանջում։

2. Խոստմունքը բարի զգացմունքից յառաջ գա-
լուն համար՝ անշոշտ պիտի կատարենք։

3. Էնչու, խոստմունքը կատարելուն ի՞նչ պատ-
ճառ ունինք։

4. Թէ որ մէկին մի բան խոստանամ, ու այն ձե-
տով խոստանամ, որ անորոշ լինի. իմ խոստմունքը
ի՞նչ կասուի։

5. Էնչու խարէական խոստմունք է ասւում։

6. Սի մարդ՝ որ մէկին խոստմունքներ անելով ձա-
ռայացնէ, ապա խոստմունքին անհաւասարին՝ կե-
նալով հակառակը գործէ, նա իր խոստմունքը ի՞նչ-
պէս կատարած եղաւ։

7. Երբ որ իմ կարողութիւնից վեր մի բան եմ
խոստանուածու չիմ գարնդանում կատարել մի լա-
պարտ կղինիմ։ ընչըն։ ավագան անընդ ի այս

8. Բացատրէ պյն պարագաները, որ խոստամունքի ժամանակ պիտի մոտաբերենք:

9. Թէ որ մի բան ես խոստանում ժամանակին կատարել, բայց հանգամանկներ խառնուելով արգելք ես ունենում կատարելու, պյն անձին՝ որին խոստացեր ես. ի՞նչ պարտական ես անել:

ԳԼՈՒԽ Գ♦

ԱՆՈՒՆ ԿԱՄ ՀԱՄԲԱԻ.

1. Բնականապէս մարդիկ իրենց բարոյականի որպիսութեան համեմատ համբաւ կամ անուն են ստանում հասարակաց կարգի մէջ եթէ չար և եթէ բարի. օրինակ եթէ նաամէն գործքի մէջ ճշմարիտ է լինում, առում է ճշարիտ ճարդ. եթէ արդարասէր կամ իւրաքանչիւրին իրաւունքը ճանաչող, ասւումէ արդար ճարդ. եթէ միշտ սուտ է խօսում; ասւում սուտարօսա, եթէ չարիք է գործում՝ ասւումէ չարժուցք. և լն:

Այսպէս իւրաքանչիւր ոք իր ստացած համբաւի շնորհիւ աշխարհիս վիրայ ունենում է

յաջողութիւն կամ ձախորդութիւն։ Բարերախտ է նա, որ իր կեանքի մէջ յաջողեր է բարձր համբաւ ստանալ. նա հասարակութեան մէջ միշտ նախապատրիտ է. և ամէն գործառնութեանց մէջ ճանակիչէլ: Խոկ ընդհակառակն շարաբախտ, ով իր համարումը կորցրած և իր անունը արտապատրաժ է, այնպիսին զուրկ է թէ քաղաքական կեանքից և թէ ընկերակցութիւնից։

Եւ այս շատ իրաւացի կերպիւ. քանզի ով կիստահանայ իր գործոց մէջ ծառայացնել նրան, որ գող, յափշտակող, խարդախ և սրտախօս ճանաշուած է: կամ ով սիրա կանի ընկերութիւն անել այնպիսի մարդոյ հետ՝ որ մոլիի, անառակ, արբեցող, դաւաճան և ամէն կիրավ վատութեամբ ապականուած է. ինչպէս որ ամէն մարդ թունաւոր օձից զգուշանում է, նոյնպէս և այն անձանց հետ հաղորդակցութիւն ունենալուց, որ ճայ ախեցով վարակուած է:

Ապա ուրեմն ամէն մարդու պարտականութիւնն է մեծ զգուշութիւն ունենալ, բա-

րի համբաւ և բարի անոնն ստանալու մասին՝
եթէ ցանկանումէ իր կենաց մէջ յաջազդու-
թիւն ունենալ:

2. Ենչպէս որ հարստութիւն ունենալու
համար մեծ աշխատութիւն և անձնագնչու-
թիւն հարկաւորէ, նոյնպէս և մեծ անոնն
կամ բարի համբաւ ստանալու համար: Այս
ջանքը պիտի ունենանք, նախ՝ մեր վենցառական-
ութեանց մէջ զգոյշ մնալով այնպիսի գործքե-
րից կամ սովորութիւնից, որ կարսղ են վա-
տահամբաւ տանել մեզ մարդոց առաջ:

Եւ երկրարդ՝ մեր գործառնութեանց մէջ, այն-
պէս զգուշաւոր և հաւատարիմ լինենք, որ
երբէք կասկածանքի անգամ տեղիք չտանք:
Օրինակ՝ եթէ մէկը մեզի գործ է յանձնել
այնպէս ճշտութեամբ և հաւատարմութեամբ
պիտի կատարենք: և այնպիսի ջանքով ճշտու-
թիւն պահենք: որ մեր արդարաւթիւնը և ճշշ-
մարտութիւնը գործի մէջ յայլանուին:

Անհաւատարմութիւնը միշտ իր հետեւ ան-
քը ունեցեր և անց գործենակալ կամ հաւատար-
մութիւնը՝ պատի և դաստի:

3. Կան այնպիսի մարդիկ, որոնք անգան-
ունեցող և բարի համբաւ ստացող անձանց
վերայ նախանձելով, ամէն ժամանակ ամէն
գէտքում հետամուտ են լինում նոցա համ-
բաւը կոտրել, կամ անունը արատաւորել,
զանազան բարուրանքներ բարդելով: կամ
նոյց մի սխալանքը օրինակ բերելով:

Եթէ աշխարհիս վերայ դատապարտելի մի
յանցանք, և Աստուծոյ արդարութեան մօտ
պատուհանելի մի գործ կայ, գլխաւորն է լի-
կերին կառահած և առնելը:

Համբաւը և բարի անունը մի թանկագին
գանչ է, որ մեծ աշխատութեամբ միայն ձեռք
կբերուի, ինչպէս և հարստութիւնը, արդ՝
ինչպէս որ մէկի հարստութիւն յափշտակելը
կամ գործանալը մեծ անհանութեան և Աստու-
ծոյ մօտ արդարապէս դատապարտելի է. նոյն-
պէս և նմանօրինակ դատապարտելի և պատ-
ժոյ արժանի է մէկի համբաւը կատարելն և ա-
նունը արատաւորելը:

4. Թէ հարստութիւնը և թէ համբաւը որ
ջանք է գործ դնելով է նտացնում: մարդոյ

սեպհական իրաւունքներն են, որին Աստուծոյ օրէնքը, արգելում է վնասել, նաև այն ամենայն չարիքը, որ թէ բամբասելով, կամ սուս խօսելով մոռագրում ենք հասցնել:

Յ. Ասացինք, որ Աստուծոյ օրէնքը արգելք է դնում մեզ՝ որ և իցէ կերպով վնասել ընկերին, նորա վերայ վաս կերպով խօսելով. բայց որովհետեւ այնպիսի պարագաներ կան, որ խօսելու հարկադրած ենք լինում օրէնքով. որ թեմն հարկաւոր ենք համարում ցոյց տալ այժմ թէ, որ պարագաներու մէջ արգելեալ ենք խօսել, և որ պարագաներու մէջ ոչ:

Ո. Պիտի շխօսենք մարդոց որ և իցէ չարագործութեանց մասին հրապարական կամ առանձին ընկերական ժողովների մէջ, նպատակ ունենալով միմիայն լուղների հետաքրքրութիւն շարժելը, կամ վրէժիմնգրութիւնից շարժուած՝ առելութիւն յագեցնելը: Ամէն տեսակ չարագործութեանց մասին Սուրբ Գիրքը պատուիրումէ, որ հրապարակ չհանենք չարամըսութեամբ, այլ եթէ կարող ենք՝ ծածկաբար յանդիմանական կերպով խօսելով գործո-

դին ուղղութեան բերենք, որ այն իսկ է ձըշմարիտ եղբայրակրութեան ապացոյցը: Մասն. մք. 15: Գ.ա.է. Ժէ. Յ. 4:

Իսկ եթէ գառաւոր կենանք այլոց չորութեանց, առանց միտք առնելոյ, որ մենք ևս սխալական լինելով նայն վիճակումն ենք, Աստուծոյ բարկութեանը ևնթարկուած ենք, առումէ առաքեալը ՀՀ բանական Յակ. Գ. 11: Բայց եթէ մէկի չորիքը վաստակար հետապնդանելը պիտի ունենայ ամքող հասարակութեան, ծածկելը անիրաւութիւն է. պիտի յայտնենք միայն ում ո՞ր հաջին է, միայն թէ գործի եղելութիւնը պատմելով առանց շտիփանց մեծացնելու, կամ վագրացնելու:

Յ. Զգուշանալու ենք այնպիսի շարժումներից, որ վերաբերումն ուղղակի ընկերին վատահամբու առնելուն. օրինակ ծաղրելով խօսիլ, ինեղկատուկրութեամբ՝ գործած մէկ յանցանքը յացտնի անել. նախատական ածուկաներով նորա անունը տալ, որպէս զի հասպակութեան մէջ անպատճիւ լինի Ալն:

Քրիստոնէական կրօնը ուսուցանելով պարագաւորումէ, որ մէկ մէկի հետ պարունակած վարուխնք, թէ և պատոյ անարժան էլ լինին, օրինակ առնելով մեր փրկչից, որ ինքն Առաջածածկ լինելով, թէ և մեր փրկութեան համար մարմին էր առած, բայց մեզաւորաց հետքաղցութեամբ էր խօսում և նուաստ անձանց՝ իւր եղայներն էր կոչում։

Գ. Կան այնպիսի ճշմարտութիւններ, որոց յայտնուիլը թէ և լինասակար են լինում՝ մեր ընկերին, բայց թէ որ վնասը հառարակութեան կամ մի անձի մասին է, (օրինակ հաստատ գիտեմք որ այս ինչ մարդը մոռավրուած է ծածկաբար զնասել այս ինչ մարդուն)՝ պարտական չենք ոյսպիսի պարագաներ ունեցող գործք չխօսել, այլ օրէնքով հարկադրուած ենք յայտնելու գոնէն նրանից հետեւած չորիքը իւրաքանչյան դիսաւորութեամբ, մենք թէ և չարամիտ մի մարդէ ենք յայտնի անում, բայց բատ որում՝ նրանավ մի անմեղ մարդու ազատթիւն է լինում, Աստածոյ օրէնքը որ

կլինենք իբրև գործին Շոնժակից համարուելով։

Դ. Նատ չարագործութիւնների տեղեակ լինելու միջոցին, եթէ նկատենք, որ չարագործ տղայի չարիքը իր ծնողաց յայտնի չէ, ոչ թէ չարամառութեամբ կամ թշնամաբար, ոյլ բարիք անելու մոօք պարտական ենք չարագործ տղայի ծնողացը յայտնել։ Այս գործը բարեմտութեաննպատակ ունենալով, ինքնին բայց չուշունին է, և գոյնունեան արժանի։

Թէպէտ բարոյական օրէնքը մեզ թոյլ մի տալիս որ ընկերի չար գործքերը հրատարակենք, բայց պարտականութիւն էլ չի դնում, որ նոդա հետ կենցազաւոցին+ ինչպէս բարի և անմզնելի հետ, ուստի Աստուծոյ օրէնքը որ ամէն չարագործութիւնից և մոլեկան կրքերից զգուշանումէ, հարկաւոր է մեզ այնպիսի չար ընկերներից հեռու կենալ, որոց կենակցութիւնը մեր վարքն ու բարքը կարող են ապականել։

ՀԱՐՑՄՈՒՆՔ.

1. Ի՞նչ է այն որ մարդոց յաջողութեանը կամ ձախորդութեանը պատճառ է լինում:
2. Բարի կամ վաս համբաւի մէջ, ի՞նչ տարբերութիւն կայ:
3. Ցոյց տուր օրինակով, բարի համբաւի օգուտը և վաս համբաւի վետաց:
4. Ի՞նչ պատճառով բարոյական օրէնքը արգելվ է գնում այլոց պահասութեանց վերայ շխօսել:
5. Թէ որ միանքամ մեկին բարկացած տեսնեմ. իրաւունք է նրանով մակարերել թէ այն մարդը միշտ բարկացող է:
6. Թէ որ մեկին մի պահասութիւնը տեսնեմ, իրաւունք ունիմ նորա միւս բարի յատկութիւնները ժամանել:
7. Դիցուք թէ մեկին դիմեցիր օգնութիւն խնդրելու, ու մերժուեցար իրաւունք է նրան խառապիրա առելու:
8. Ընդու. բացատրի պատճառը:
9. Դիցուք թէ անիրա մարդուն մէկը բարեկամին կուղե խարել. պարտականն եմ իմացնելու:
10. Ընդու.—զբարտութիւնից ի՞նչ տարբերութիւնն ունի այս անելը:
11. Եթէ տեսնեմ որ մի առաջ չարութիւնն է գոր-

12. Թէ որ ծնողացը նորա չարութիւնը իմացնելը բարեսիրութիւն է, կարո՞ղ եմ նոյն մտօք ուրիշներին էլ յայտնել:
13. Թէ որ պատահի մեկի չարութիւնը այլոց իմացնել. ի՞նչ շարժառիթով անելու ենք, որ մեր գործը անմեղ լինի:
14. Թէ որ մէկը բացակայ է, ու մենք զաւարձանալու մոօք նորա անունը յիշենք, նորա պակասութիւնները մէջ բերելով, ի՞նչ վնաս արած կլինիք բացակայ անձին:
15. Այս գեպքում, բարոյական օրինաց առաջ մենք մեղապարա ենք համարւում:
16. Դիցուք թէ չար մարդոց մասին խօսելը աստուածացին և բարոյական օրէնքով արգելում է. ուրիշ բան ունինք անելու:
17. 2արագորների կամ վատահամբաւ մարդոց չետ տեսութիւն անելու բարոյական օգուտը և վրանար բացատրէ:

Դ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ.

ԳԼՈՒԽ Ա.

1. Մարդկային ընդհանուր պարտուց վերսց
խօսելից յետոյ ժամանակն է, որ Հիմայ էլ
խօսենք քրիստոնէական այն պարտուց վերսց,
որ բարչեպաշտութեան է կոչում։

Մարդիկ սովորաբար օգնումեն միմեանց
փոխագարձութեան օրէնքով, օրինակ՝ հայրը
օգնումէ որդւոյն, որդին՝ հօրը դրացին՝ դրա-
ցւոյն, ազգականը՝ ազգականին, բարեկամը՝
բարեկամին և լն։

Եթէ ամենաբորին Աստուած մարդկային աղ-
քը երջանիկ լինելու համար ստեղծած է, և
իւր նախախնամութեամբը ամէն մէկին ա-
ռանձին իրաւունքներ տուած է, որ իր շնոր-
հած պարգևներովը իւրաքանչիւրը իր երջան-
կութիւնը ստեղծէ, որքան որ կարող է, բաւա-
կան չի կարող լինիլ այս մասին միմիայն բա-

րոյական բնութեան գործքերը, որ է իւրա-
+անչիւնին իրաւունքը յարգել . բնաւ մէկին ըստ
շատաւ տաճնուի բարին կամենաւ ինչպէս ամէն մարդ
իրեն կամենումէ։ Քանի որ տեսնում ենք, մար-
դուու-ֆիզիքական կեանքը և զիժակը միշտ
գոփոխութեան ենթակայ է։ օրինակ՝ աւող-
ջութեանը յաջորդում են հիւանդառնեն իւրա-
նիւն, անդամալու ծառնիւն, նոյնպէս և յաջ-
ութեանը յախորդունիւն, ազգաւորունիւն, անուն-
իւնիւն և այլ զանազան գիտուածական փոր-
ձութիւններ, որոնք մարդուս բարեկեցու-
թիւնը թշուառացնում և ունեցած երջակու-
թիւնը խանգարում են, այս գիտուածները
տեսնելով՝ հարկաւ պիտի իմանանք, որ բայի
բարոյական պարոքից՝ Արարիչը ասհմանած է
մեզ և մի ուրիշ պարոք. այս պարոքն է բա-
րչեպաշտութեանը, որ կայանումէ բարչեպաշտութեան
մէջ, որով հարկադրած ենք լինում բարեսիրա-
լինել, թէ առ ծանօթն և թէ առ անծանօթն,
թէ առ ազգակայն և թէ առ օպարական։

Այս որաբարը առաջնից աւելի գերազանց
է թէ նպատակաւ և թէ վախճանով եր

գործադրութեանց նկատմամբ, յատուկ առնուամբ՝ կոչումէ առաջինունին, որոյ վերայ հիմնած է մարդասէրն Առտաւած մարդուս յախտենական կենաց երջանկութիւնը և թըշշուառութիւնը՝ երկնացին փառաւոր վարձատրութիւնը և գատաղարտութիւնը։ Մասք ին. 35—45։

Հ. Բնութեան արտրչը այս պարտուց գիտութիւնը մեզ անձանօթ չէ թողուցած։ այլ նոյն իսկ մեր քնութեան մէջ մասնաւոր զգացումնի յայտնած է, որին մենք կարեիցան-նեն, ենք ասում։

Օրինակով բացառքենք— երբ որ տեսնում ենք մի անզօր մանուկ, որ խողալու միջոցին մի մերձաւոր փոանդի սիխոի հաճութափ, խսկոյն բնութիւնը գրգռումէ մեզ որ փրկենք։ Նոյնպէս և մի ուրիշն՝ երբ փոանդուած ենք տեսնում, կարեկցում ենք սրտով։ թէև մեզ անձանօթ եղած լինին նորա։

Մէկ ստոհակ աղայ տեսնելիս, ստիպւում ենք խրտուել։ զգալով որ նա ոչ միայն նրանով իր կեանքն է փոանդի մէջ գնում, այլ և այ-

լոց եւս ածանցելով՝ չարագործութեան օքինակ պիտի դառնայ։ Եւ այս ամէնը անումենք կարեկցութեան զգացումով։

Որբան ենք ուրախանում երբ որ մի հիւանդ մարդու օգնելով մաշտամփից փրկում ենք, կամ մի որբ տղայ մեր հովանաւորութեան տակ առնելով՝ վերահաս վոանգներից կորդելու չափ, նրան բարեկեցութեան վիճակի մէջ ենք գնում։

Բնութիւնը՝ մարդոց այս պարտաւորութեան տակ գրած է, և իր զգացումով մեր վերայ այնպէս ազգու ներգործութիւն է անում։ որին հակառակել անհնար է։ Եւ եթէ պատոհաւմէ տեսնել, որ մէկը այսպիսի գէպքերի մէջ անտարբեր է գտնուում։ կամ օգնելու պարտականութիւնից իրեն ազատէ կարծում։ մենք սովորաբար այնպիսի մարդոց անժուն են+ համարում, և նոցա հետ արհամարհանօր ենք վարփում։

Սրանից հետեւումէ իմանալ, որ մենք ընդհանուր պարտը ունիմք առ ամենայն որ բարեսիրա լինելու, որին զանցառութիւնը իրա-

ւամբ մեզ պատուհասելու առիթն է համարում մեր Փրկիչը իր ընդհանրական դատաստանի օրը։ Մատթէ. ԽԵ. 35—45։

Յ. Պատահումէ, որ մեր բարեպաշտական գործոց մէջ նախառութենք այն մարդիկներից, որոց վերայ բարեսիրու ենք լինում, կամ մէկին բարիք անելու միջնորդին վասիանակ շնորհակալութեան՝ չարիքներ ենք ընդունում։

Մեր առաքինութեան վեճունիւնը այսպիսի պարագայից մէջ այն ժամանակ կպայծառանայ, երբ որ համբերենք նոցուամէն նախադինունեցին և աշխատարհանենեցին, և հասուցած չարիքները սիրով առանելով հաստատուն մաքով միմիտին նոցառողութեանը և երջանիկ անելուն ուշ դարձնենք. Եթէ մեր բարեսիրու բարեպաշտութիւնը այսպէս անընդհատ շրունակենք. Մենք այն ժամանակ Քրիստոսի Փրկչին մերոյ նմոնած կլինենք. և մեր երկնաւոր Հօրը սիրելի որդիքներ կկոչուինք։

Գ. Ճշմարիտ բարոյուկտնութեան հեղինակը Յիսուս Քրիստոս մեր բարոյականութեան Գիւքը հաստատումէ Հօրը Աստուծոյ մարդասի-

րութեան վերայ, որ իր արեգակը ծագումէ չարաց և բարեաց վերայ. և ինամոց անձրելք թափումէ հաւասարապէս ամենի վերայ. այս վեց օրնական աւանդումէ, որ մենք ևս մեր Հօրը նմանինք առ ամենեսին բարեսիրու լինելով. որոյ խօսքերը արժան ենք համարում այս աեղ դնել։ Վեց օր առաջ ամեն ամեն անձրելք անձնական ամեն ամսացաւ, քո ընկերդ սիրես, ու թշնամիդ ատես. բայց ես ասում եմ ձեզ, ձեր ժշնամիները ուրեցէն, ձեզ անիծողներին օշնեցէն. բարի արէք նոցան որ ձեզ ասում են, և աղօթք արէք նոցան համար, որ ձեզ չարչարում և հալածում են, որ ձեր երինաւոր Հօր սրգիքը լինիք, որ իր արեգակը ծագումէ լույսը և բարենեցի վերայ. և իր անձրելք թափումէ աշխատանեցի և մեղասարնեցի վերայ: Թէ որ դուք ձեր սիրողներին սիրէք, ինչ վարձք կրոնենաք. չէ որ մաքսաւորներն են նոյնն են անում. և թէ որ միայն ձեր բարեկամներին բարեկ տաք. ուրիշներից ինչ աւելի եք անում, չէ՞ որ մաքսաւորներն ել նոյնը կանեն, արդէ կապուրեալ էլքէ, կնշակէս որ ձեր

երկնաւոր Հայրը կատարեալ է» Ասաւ 6.
 43—48: Առկաս աւետարանիցը Քրիստոսի այս խօսքերը այսպէսէ գրում «թէ որ դոք ձեր սիրովներին սիրէք ինչ շնորհ (փարձը) կունենաք, լնջու որ մեղաւորներն էլ իրենց սիրակներին սիրում են, և թէ որ ձեզ բարի անադին բին բարի անէք, ինչ շնորհք կունենաք. լնջու որ մեղաւորներն էլ նոյն բանն են անում: թէ որ այնպիսի մարդոց փոխ տաք, որոնցից առնելու յօս ունէք, ինչ շնորհ կունենաք. լնջու որ մեղաւորներն եւս մեղաւորներին փոխ են տալիս, որ նոյն չափով յետ առնեն: Ուրեմն սիրեցէք ձեր թշնամիները, ու բարի արէք, և փոխ տուէք նոյա, որոնցից փախարէն սպասելու յօս լունի+, որիձերք կազմու լուս լինի, ու բարձրելոյն Աստուծոյ որդի+ լունի+. լնջու որ նա բարերար է ապերախտներին և չափերին. ուրեմն գթած եղէք, ինչպէս որ ձեր Հայրը գթած է» Ա. ա. 32—36:
 5. Աստուծածային այս ճշմարիտ բարոյս կանութեան հեղինակի խօսքերից պարզ երե-

ւումէ, թէ որնց վերայ պիտի բարեսիրու և բարեպաշտ լինենք. այն է, այնպիսի մարդոց որ մեղանից նոյնը պահանջելու նրանունիւնն են, և ոչ մենք ակնկալութեամբ սպասելու ենք նոյանից կոխարարնը ընդունել: Այս պարագայիս մէջ գլխաւորաբար պիտի նմանինք մեր Եղիսաբէդ Հօրը, որ ինչպէս նա իր նախախնամութեան պարգևները մի օրինակ գթութեամբ սփռումէ ամենի վերայ՝ առանց ընդունողի չար կամ բարի բնութիւնը որոշելու. նոյնպէս և Հարկագրուած ենք ամեն կարօտելոց ովորմել. հոգ չանելով երբէք թէ նոքա մեր բարեսրութիւնը յարգում են կամ ոչ: Օրինակ պիտի առնենք Աստուծոյ մարդասիրութիւնը, որ մինչդեռ մենք թշնամիք ենք Աստուծոյ, նա իր որդին մեզ փրկելու ուղարկեց: Օրինակ պիտի առնենք և մեր Փրկչի գթութիւնը, որ իր երկրուոր կեանքը իր թշնամեաց բարի+ անելով անցուց. առանց նոցա որոի չալութիւնը և անիրութիւնը մատարերելու:

6. Բայց աստուծային այս օրինակից,

կան և ուրիշ պատճառներ ևս, որոց մասին
պարտաւոր ենք գթած և բարեխրտ լինել:

Ա. Սեր մեղաց Աստուածանից Եսով մենք ներ-
ընդունելու պայմանը, որ հիմնում է Ներդու-
նեան առաքինութեան վերայ, «թէ որ դուք ձե-
զի դէմ մեղանչափներին ներէք, ձեր երկնա-
ւոր Հայրն ևս ձեր յանցանքներին կներէ:

Մատթէ. Զ. 14—15:

Այս պայմանը վսեմ օրինակով աւանդումէ
Քրիստոս երկու պարտապահ ծառայի առա-
կով, ուժ ցոյց է տալիս գթութեան և խըս-
տապահանջ լինելու արդիւնքը այսպէս խօ-
սելով:

Վասն այսորիկ երկնից թագաւորութիւնը
նմանումէ մի թագաւորի, որ իր ծառաներից
հաշիւ էր կամենում առնել, ու եթե որ մկնեց
առնել, ներկայացրին նրան տասն հազար տա-
զանդի մի պարտական. բայց նա վճարելու կա-
րգութիւն չունենալով ու իր աէրը հրամայեց
որ թէ իրեն, թէ կնոջը, որդիքներին ու բա-
լոր ունեցածը ծախուին ու պարտքը վճարուին,
իսկ ծառայն նորա առաջը ընկնելով երկրապա-

գութիւն էր անում ու ասում. Տէր, համբե-
րիք ինձ, և ամէնը քեզ կը վճարեմ: Ու տէ-
րը այն ծառայի վերայ գթալով, արձակեց նը-
րան, պարտքը շնորհեց իրեն. ու նոյն ծառայի
ելաւ գտաւ իր ծառայակիցներից մէկին, որ
իրեն հարիւր դահշեկան պարտք ունէր. նրան
բռնելով խեղաելով ստիպում էր ու ասում:
վճարիր ինձ ունեցած պարտքդ: Արդ՝ նորա
ծառայակիցը նորա ոտքը ընկաւ աղաջում և
ասում էր, համբերիք ինձ (Ժամանակ տուր)
ու կվճարեմ քեզ. Ու նա չէր կամենում) այլ
գնաց բանար գնել առւաւ նրան, մինչեւ որ
պարտքը վճարէ: Երբ ուր իր ծառայակիցները
տեսան նրա արածը. շատ արտմեցան ու ե-
կան իրենց արմոջը բոլոր եղածը հառկացրին:

Այն ժամանակը Տէրը կանչեց նրան, ու ա-
սաց, լազ ժառաց բոլոր պարտքերդ շնորհեցի
քեզ, նրա համար որ ինձ աղաջեցիր, ուրեմն
պէտք չէր քեզ ևս պղոմել քս ծառայակ-
ցին, ինչպէս ես քեզ ողորմեցի. ու նրան տէրը
բարկանալով գահիններին տուաւ մինչեւ որ
բոլոր պարտքը վճարէ: Այսպէս էլ իմ երկ-

Նաւոր Հոյքը պիտի անէ ձեզի, թէ որ ոմէն
մէկու սրտով վեշէ + ձեր ելքոր յանցանդնելին :
Մաս . Ժ. 23-35 :

Աստուածային այն ստհմանական վճիռը
ցոյց է առղի, որ մեր բարձրացաւիան գործերի
համար միայն վճռած է յաւիտենական վար-
չականութեալը :

Եթէ բարեսրտութեամբ մեր ընկերի մեզի
հասցրած չարիքներին համբերենք. և հե-
զութեամբ ներողամիտ լինենք, մենք գոր-
ծած կլինենք այն գերազանց առաջինութիւ-
նը, որի համար երկնից թագաւորութեան
մէջ փառաւոր վարձատրաւթիւն պիտի լի-
դունեմք Քրիստոնից :

Վասն զի բարեսրտութեամբ գործած բա-
րեսրտութիւններն են, որ Քրիստոս վրկի-
շըն մեր դատաստանի օրը հաշուելով կվար-
ձատրէ, ինչու և անգթութեան գործքերը՝
որոց մասն կպատուհասէ : Որոնք մի առ մի
թուելով եզրափակում մէ այս խօսքերով՝ որով-
հետեւ այս վաքրիկ եղբայրներիս արիք «ինձ
արիք» : Մաս . Ժ. 40 :

7. Բարեսրտութիւնը իբրև բարեպաշտութեան
արտաքին ցոյց, հարկաւոր է, որ մենք ունե-
նանք ամէն նարդոց վերայ առանց նկատելու
ազգակից են նրանք թէ օտար, սիրելի՞ թէ
ատելի, քրիստոնեայ թէ ոչ քրիստոնեայ.
բաւական համարելով գիտենալը որ նրանք
նարդ են մեզի պէս՝ Աստուծոյ պարգևնելին
արժանի եղած :

8. Որովհետեւ Աստուածանից լնդունած
ենք ոչ միայն մարմնաւոր բարիք, այլ և հաս-
տակ ընդունակութեաննելք, համեաց, պաղանդիսա-
ռութեան, գիտութեան, ոյժ, կարողութեան մը-
գաց ելն . որոնք ամէնն էլ սոյն օրէնքով պար-
աւառոր ենք գործ գնել այն մարդոց մասին, որ
իմանում ենք թէ նոքա կարօտ են մեր օգ-
նութեանը : Եթէ ադէս են, պիտի ուսուցա-
նենք, եթէ յեւնութեան կարօտ՝ պիտի օգ-
նենք. եթէ վատացէալ պիտի միսիթարենք :

9. Այժմ կմնայ մեզ իմանալ թէ, որոց վե-
րայ աւելի բարեսրտութեամբ բարեպաշտ վի-
նելու ենք, և ինչ միջոցով՝ որպէս զի լնդու-

նոզները երջանկութիւն կամ միսիթարութիւն վայելեն:

Թէպէտ և քրիստոնէական կրօնքը պարագաւումէ որ առ ամենեսին բարեսիրա լինենք, և ամենին վերայ գթութեամբ նայենք, սակայն կան այնպիսիներ, որոնք յատուկ մեր բարեսրութեան առարկայ համարելու ենք, և մեր բարեպաշտական գործքերը նոցա վերայ տարածելու ենք: Առ սոքա են, կարօրետաները, լորերը, մաստակար լշշանեները, և վերջապէս ակասորնեները, որ ծառայումեն մեղ, որոնց վերայ պիտի խօսենք:

ԿԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՈՒՆԻՑ. Զար զան զաւան - թո զան ու տօսակ ազամ չո զան Կառանոյ

1. Բաց ի բնական պարտքից առանձին պարտք ևս ունի նը միմեանց՝ և ի՞նչ է կոչւում:

2. Բարեպաշտութիւնը ի՞նչ բան է:

3. Բարեպաշտ լինելու համար բաւական է ուրիշներին չփասել որ և իցէ կերպիւ:

4. Ի՞նչ համարում կունենաս այն մարդոց վերայ, որոնք ոչ վնաս են տալիս և ոչ օգնում են:

5. Ի՞նչ համարում կունենաս և նրանց վերայ:

որոնք ամենին բարերարութիւն են անում թէ թշնամներին և թէ սիրելիներին ու բարեկամներին:

6. Քրիստոս Տէրն մեր այս մասին ի՞նչ կանոն տուած է:

7. Ի՞նչ օրինակներ ցայց տուած է իր արածներով:

8. Այդ օրինակները մեզ ի՞նչ են սորվեցնում:

9. Մեզ բարիք պարգևողը ո՞վ է:

10. Թէ որ այդ բարիքները մեզ չտար Աստուած, և միայն բնական բարիքներով թողուր, որ բաւականանք. մեր վիճակը ի՞նչպէս կլինէր:

11. Մենք ի՞նչ միջոցով Աստուածոյ պարգևներին կարող ենք արժանի լինել:

12. Մեր յանցանքներին թողութիւն տալը Աստուած ի՞նչ պայմանի տակ դրած է:

13. Ո՞ր տեսակ տապինութիւնը Աստուածոյ հաճելի է: այն՝ որ փոխարձութեամբ կանենք, թէ այն՝ որ բարեսրութեամբ առանց ակնկալութեան կդորձենք:

14. Ի՞նչ պատճառներով կարող ես բացատրել՝ որ այդ տեսակ բարեպաշտութիւններն են մրայն աստուածաշաճոց:

15. Բարեպաշտութեան պարտականութիւնը որո՞նց վերայ պիտի գործադրուի:

16. Այդ կերպ բարեպաշտութեան օգուտը ի՞նչ է, և ի՞նչ բարիքներ կլինեն աշխարհիս վերայ՝ մարդոց մէջ թէ որ գործադրուէին:

թոլորովիմբ իր կարողութիւնը թուլացնելով
կծանրանայ հանարակութեան վերայ:

Ուստի այնպիսեաց մեծ բարեպաշտութիւն
արած կիմնենք, թէ որ աշխատելու միջոց ցոյց
տանք, որով և ինքը զինքը ապրեցնել սոի-
պինք:

Ասուսած, որ իր բարութեամբը ամենին
նախախնամողն է, և հաստատապէս խոստա-
ցեր է թէ մեր կերակուրը և թէ այլ պէտքե-
րը հոգալ այս ամենը պարգևում է մեզ իբ-
րև մեր աշխատունեան փոխարէնը, ուստի ե-
թէ մեր աշխատունեանը Աստուծոյ հսկացողու-
թեան հետ և ժամանի և գործ դնենի նա իր օրհ-
նութեամբը առանձ ապահանձն կվարձատրէ:

Այս մոօք է ասում Պօղոս առաքեալը թէ,

ով չէ աշխատում կարող չէ ուտելք ին թէ:

Դ. 10:

2. Բայց կան այնպիսի աղքատներ, որ
յատկապէս ողորմելու արժանի են, այսպի-
սիքն են: Ա. կազմը, կայլը, անդամալյաները
և մակողմանները, որոնք Աստուծոյ անդնելք
անօրէնութեամբը այսպիսի զինակի հանդի-

ՅՈՒ. Ա. անոն այնուահան զնուա
ու անոն անոն ու անոն անոն անոն անոն
ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ Ա. ԿԱՐՈՑԵԱԼ. Յ.

Բատ մեծի մասին մարդս կարօտութեան
վիճակի է ենթարկւում: կամ աղքատու-
թեամբ, կամ հիւանդութեամբ, կամ ծերու-
թեան պատճառով, և կամ տպատութեամբ,
որոնք միշտ մեր օժանդակութեանը կարօտեն:

1. Աղքատունեան—աղքատութիւնը ծուլու-
թեան կամ անգործութեան հետեւ անքն է:
որին ուստի անմտաբար հետեւելով, ապրելու
միջոցից զուրկ են մնաւմ:

Այսպիսի հանդամանքների մէջ գտնուող-
ներին եթէ կամենում ենք գթութիւն անել,
աւելի լաւ է աշխատելու գործ գործ և աշ-
խատելու վարժեցնել քան ողորմել: Որովհե-
տեւ աղքատին ողորմելով մենք աւելի նրան
վնասում ենք, քան թէ օգնում:

Քանզի նրանով նա իր ապրելու միջոցը հը-
նորած կարծերով աւելի ևս կծուլանայ, և
այսուհետեւ մինչեւ իր աշխատանքով թէ
ինքը կարող էր ապրել և թէ ուրիշն օգնել,

պեղով, ոչ աշխատելու կարսկութիւն ունին և
ոչ ապրելու միջոց՝ բացի բարեպաշտ անձանց
նույներից; Այս օնն բանական պատ-
ճառով՝ աշխատանքի և ապրելու միջոցներից
զրկում են նա-աբեկա-նեամբ, հըկու-նեամբ, և
ուրիշ դիպուած ական փորձութիւններով; Այս-
պիսեաց՝ մարդոյ խողճը անգամ չի ներիլ, որ
անիւալ վիճակի մէջ նորու, այլ հարկէ ձեռք
բռնել և այնքան օգնել, որ իր աշխատու-
թեամբը կարող լինի իւր ընտանիքը պահպա-
նել:

3. Ասուածածային անքննելի կամքը, որ ամէն
ինչ իր արդար նկատողաւնեամբ, անօրինումէ,
երբ որ այսպիսի դէպքեր մեզ հանդիպի
տեսնել, պիտի համորենք, որ Ասուածած մեր
բարեսրութիւն և բարեպաշտութիւն (իբրև
առո-գելան նշան ցոյց տրամա մեզ նոցա՞ որոնց
վերաբեթէ անկամքեկցորդար նկատող միայն
լինիմք և ոչ օգնող, իբրև ամբարիչ և առա-
շինութիւնից գորի պիտի դատինիք:

4. Այս անձինք, որոնք ծանր և երկարացու-

հիւանդութեանց պատոհելու պատճառաւ
աշխատանքից զրկուած՝ աղքատութեան մէջ
ընկած են. կամ այն տղայքը, որ հօրից կամ
մօրից որբ մնալով անկարող են եղել իրենց
պահպանել:

Այնպիսին երը աշխատի են ողարժունեան կամ
օժանդակութեան: Ոչբար խնամք տանելը քը-
րիստոնէական պարտաւորութեանց մէկն է.
որ յատուկ մեր խնամքն է յանձնում: իբրև
հայր պաշտպանել նրանց և գոտիաբարակել:

3. Նէր-նի-ն-թէպէտ ծերաւթիւնը ա-
ռազջութեան շատ անգամ չի վնասի. բայց
ծերերը ընդհանրապէս անկարող են լինում աշ-
խատել վամնարոյ և մեր միաթարսւթեանը
կարօտ, ուստի պարտաւոր ենք նայա ծերու-
թեան ցաւերը մեզմել մեր բարեսրութեամբ
և առաւելապէս երկու-ու-նեամբ վերաբե-
րուիլ նոյն հետ կինակցելու միջոցին:

4. Տգիրո-նի-ն-որոշ որովշեակ աղքատու-
թեան մի պատճառն է տղիսութիւնն է, ուս-
տի և մեր բարեպատութեան առարկայ պիտի
լինին նոքա, որոնք իրենց գործառնութեանց

մէջ արձեա էն, և նրա պատճառաւ վնասների
են հանդիպում:

Տգէտները մի տեսակ բարոյական իոցքը են,
որոնց մոտք լուսաւոցելու, և ինչ որ նոցաբար-
րոյական կեանքը կարող է երջանիկ անել, այն
ամէնը առաջանելու պարտական է այն անձը,
որ կարող է: Նատ անգամ լինումէ, որ աշխա-
տաւոր անձինք գրել կարդալ և հաշոել չգի-
տենալու պատճառաւ դժբախոսութեան են հան-
գիպում: Տգէտները նաև անտեղեակ են զրէ-
թէ հաւատոյ, բարձրացնեան, ճշմարիս
Առաջածութիւննեան, ընկերութիւննեան և լի. քը-
րիսունէական պարտաւորութեանց մէջ: Եւ
որովհետեւ կարդալ եւ գրել ես չգիտեն, ուստի
անտեղեակ են նաև Սուրբ Գրոց մէջ բովան-
դակուած աստուածային օցնութեցն և պա-
տուիրանեցն: Նատ քիչ կպատահի, որ տգէ-
տը բարի մարդ լինի, ըստ մէծի մասին նոքա
նուութեանց ենթարկուած անձինք են լինում.
որով և շատ անմեղների լարադործ լինելու
պատճառը: Ուստի ամէն բարեգործութիւնից
աւելի Աստուծոյ հաճելին է տգէտներին կըր-

թելը և ուսուցանելը, մանաւանդ տգէտ պա-
տճիներին և մանուկներին որով թէ չարա-
գործութիւնը կիերանայ աշխարհքից, և թէ
բարոյականութիւնը կծաղկի ամէն աեզ:

Այս պարտքը գիխաւորսբար կարող են կա-
տարել, որոնք որ ուսած կամ ուսանելու մէ-
ջն են, նոցա առաջ կարգալով Սուրբ Գիպքը
յիշեցնելով Աստուծոյ օրէնքներ և քրիստո-
նէական հաւատոյ և բարոյականի պարտքե-
րը, և ցոյց տալով թէ կարգալու, թէ գրե-
լու, և թէ հաշուելու ձեերը:

Այն անձը, որ այսպիսի բարեսրութեամբ
աշխատելով ագէտ աղայքը կամ երիտասարդ-
ները տգիտութեան խուարից գէտի ի գիտու-
թեան լոյսը կառաջնորդէ, մարդկութեան
հեծ լարեւար կկոչուի և հետեւալէս Աստու-
ծոյ սէլէլի:

Բոլոր այս ասածներից երեւեցաւ թէ կա-
րութելոց ինչպէս և ինչ միջուներով պիտի
օգնենք: Եւ որպէս զի ամենի մտքումը լաւ
տպաւորսին այս բարեմատաշտական պարտքե-
րը, պատշաճ կհամարիմ կանոնական ձեռով
չժմանածել:

Ա. Որոնք երկարատև հիւանդութեան պատճառաւ չեն կարսղայեր աշխատել ու ընտանեաց տէր են, նոցա օգնելու ենք բարեալաշտական տրօք:

Բ. Նոքա, որ աշխատելու կարող են, բայց գործ չգունուելու պատճառաւ աղքատացեր, նոցա մեծ օգնութիւնն է աշխատելու գործ գոնել:

Գ. Իսկ ծուլութեան պատճառաւ աղքատացած եղողին աշխատութեան վարժեցնելը մեծ բարձրէ է քան ողորմելը:

Դ. Որբոց և այրեաց օգնել հարկաւորէ թէ նոցա տղղուածի մշջը հեշտացնելով և թէ որբ երեխայոց դաստիարակութեան տալով:

Ե. Տգէտներին հարկաւոր է ուսմունք սովորելու խրախուսել, և ուսանելուն յեւնութիւնել:

Այս ամեն բարեգուշտակուն գործքերը կատարելու մասին պարտաւորումէ ամենին և սաստուածային տիրայ օրէնքը: Որոնք իբրև աստուածահաճոյ առաքինութիւններ, խոստացեր է վարձատրութիւնն յաւիտենական կեան-

քումն միայն թէ կատարուած լինին ոչ թէ իւսուսութիւնն և բարձրադ ճանաչուելը մը տօք, այլ միմիայն չ իւսուս Աստութոյ:

ՀԱՐՑՄՈՒԽԱՅԻ

1. Թէ որ զօրաւոր առողջ և ուժեղ մարդուն մէկը ողորմութիւն խնդրէ հարկաւո՞ր է տալ թէ ոչ:

2. Ընչո՞ւ.—Հապա ի՞նչ անել պէտք է այնպիսի մարդոց:

3. Կարօտելոց աշխատութիւն գտնելը լաւ է, թէ մասնաւոր օգնութիւն անել:

4. Ընչո՞ւ.—Ի՞նչ օրինակով կարող ես արդարացնել ասածդ:

5. Թէ որ մէկ ընտանիքի վնասուած տեսնենք Տրկիզաթեամին նաւարեկութեամբ կամ ուրիշ փորձանքով ի՞նչ անել պարտականենք:



6. Նեղելոց և հիւանդաց ի՞նչպէս պիտի օգնենք:

7. Մեր գրկիչը այսպիսեաց օգնութիւն անելու պատուէր տուածն է և ո՞վ գրուած է:

8. Նեղելոց անձամբ օգնելը լաւ է, թէ որիշն ձեռքով:

9. Աղորմութիւնը ընչո՞ւ ծածուկալ հրամայած է:

10. Բացի նիւթականապէս օգնելուց, ուրիշ էլ
ի՞նչ կերպ կայ օգնելու:
11. Տդիտաց օգնելու համար ի՞նչ պիտի անենք:



ՅՈՒ. Բ.

Ան մարդուն յիշան և ցըռուն ուստիոր դո չո՛:
ԲԱՐԵՊԱՇՏԱԽԹԻՆ Ս. Ռ. ԶԱՐՍ: Հայոց ա
խճանցաւ և զաքր յանա ցու ուստիոր ան չո՛:

1. Կարօտելոց իբրև բարի մարդոց օգնե-
լու պարտականութեան մասին խօսեցանք:
այժմ հարկաւոր է իմանալ թէ նոյն պարտա-
կանութեամբ չար մարդոց ևս օգնութիւն
մտառուցանելու հարկադրուած ենք թէ ոչ,
թէ որ բարոյական բարեպաշտութեամբ օ-
րինագուած է մեղ բարեսիրու գտնուիլ դէպի
ապերջանիները և թշուառները, ապա ուրե-
մըն և առ չարերը, որոնք ամենից աւելի ա-
պերջանիլ և թշուառ են: Իբրև անբուժելի
ախտերով վարակուածներ:

2. Զար մարդոց վերայ երկու գաղտփարով
ալիտի նայենք: Ե՞րև ձարդ և իբրև չարադրին:

Տարդ: իբրև մարդ նկատելով՝ բարոյական օ-
րէնքով պարտաւոր ենք դէպի նոցա մարդասէր
լինել: իսկ իբրև չարագործ մարդ ատել և
հւառանաւնոցա ընկերութիւնից ինչպէս թունա-
ւոր օձից: կամ տարափոխիկ հիւանդութեամբ
վարժակուածներից: զգուշանալով, որ նոցա
չար սովորութիւններ մեղ չածանցուին:

Եայց քրիստոնէական հոգին հարկաւորա-
պէս պարտաւորումէ որ նոցա մեր չառուց ինչնեն: .
ոչ թէ բարեկամութիւն անելու: այլ լաւու-
նիւն անելու գիտաւորութեամբ: որպէս զի
որքան կարող ենք, մեր բարի օրինակներովը
և բարեսրուութիւնով նրանց հալցունիւնները
ուղղէն: անառակը իր անառակութիւնից,
արքեցողը՝ իր արքեցողութիւնից և չարագոր-
ծը իր չարագործութիւնից դէպի առաքինա-
կան կերանքը գարձնելով: Այս մոօք առած է
Քրիստոս փրկիչն մեր այս խօսքը «ձեզ ատե-
լի եղողներին բարի արէք»: Մատին, Ե, Վկ:

3. Կան և ուրիշ զօրաւոր պատճառներ,
որ չար մարդոց բարիք անելու հարկադրուած
ենք լինում: Այս պատճառներն են ընդհա-

նուր մարդկութեան՝ կամ մեր օգուազը։ Մենք
գիտենք որ չարութեան սերմը երբ մէկի մտաց
մէջ արձատ է ձգում, հետզհետէ ուրիշ մար-
դոց և ածանցելով՝ ողջոյն մարդոց չար սո-
վորութեանց է ենթարկում։ ինչպէս փոքր
ինչ խմորը երբոր մեծ զանգուածի մէջ է
գտնուում։ ամբողջ զանգուածը խմորումէ։ Ա.
Կորն. Ժ. 6:

Բ. Զարագործները թէ և իբրև մարդիկ
մեռնում ոչնչանում են, քայլ նոցա վատ սո-
վորութիւնները մարդոց մէջ ճարակուելով,
անհանում են, և լինում են այնուհեան-
երկրիս վերայ անբուժելի մէ բարոյական հիւան-
դունիւն՝ ամեն մարդոց համար։

Արդ՝ քանի որ չար մարդիկը այս հանգա-
մանքները ունին, և իբրենց թշուառութիւնը
փախանցումէ ամեն մարդոց, գրեթէ անդաշա-
պէս, աւսոփ նոցա մեր կարեկցութեանը ար-
ժանի պիստի համարենք, ու նրանց չարութիւ-
նից դէպի առաքինի կենցաղավարութիւնը
գարձնելու ջանք պիստի անենք։

Ա. Եւ այս կլինի նախ՝ մեր բարեպարհու-

նը նոցա ցուցանելով, ու երբ նրանք նեղու-
թեան մէջ լինին, օգնելով նոցա, զուարթ
արտիւ, ինչպէս որ բարի մարդոց օգնումենք։

Բ. Մեր առաջնութիւննելը նրանց լինկե-
րութեան մէջ ցուցանելով։ Զարերին գէպի
բարին գարձնելու ամենազդու միջոյը անձ-
նական օբյեկտն է։ Երբոր առաքինեաց կեանքը-
ու նրանց համեստ և երկիւղած քաղաքավա-
րութիւնը մոլի և չարագործ մարդոց լինկե-
րութեան մէջ յայտնուին։ շատ ազդու յան-
դիմանութեան և ուղղութեան խթան կլինի
նոցա։ մեր Փրկիչը այս մասին պատուիրումէ
այնպէս լուսանոր լինի ձեր լոյսը (բարի վար-
քը) մարդոց առաջ, որպէս զի ամենքը տես-
նելով։ Ճեր երկնուոր Հայրը փառաւորին։
Մատթ. 16:

Թէպէտ առաջին անգամ կարելի է որ նո-
քա մեր առաքինական կեանք և բարեսրու-
թիւնը ծաղրեն ու անարգեն։ բայց վերջ ի
վերջոյ երբ որ հասկանան թէ մենք այն անե-
լով մեր բարեսրութեան պարտքն ենք կա-
տարում։ և դէպի իբրենց բարութիւնը ամեն-

ցած սէրը ստիպումէ այն անել, նոցա լաւու-
թեան համար, տարակոյս չկայ, որ պիտի խա-
նարհին և յարգեն։ Միոյն թէ հարկաւոր է
մեզ որ այսպիսի պարագաների մէջ Երկայնա-
նառ-Ենի և հաստատ կամ ունենանք, որին
Աստուած, որ բարեաց կամեցազ է, իր շնորհ-
քովը կօգնէ, մեր տկարսւթիւնը զօրացնելով
և կարագութիւն ու մտաց հանճար տալուի և

Գ. Խըստելով և համեստ ու վայելով խօսակ-
յու-Եւած ցոյց տալով նոցա չարութեան և
մոլի կենաց հետևանքները։ Այս տեսակ իր-
բատները շատ աղդաւ ներգործութիւն կու-
նենան, երբոր առանձին լինին, մանաւանդ
երբ որ իմանան թէ քարեսրաւութեան և սի-
րոյ ազբերից են յառաջ գալիս։ Հոգ. մէ.
14. Կող. Գ. 16. Ա. Թէ. Ե. 14. Բ. Թէ. Գ.
15. Բ. Տէ. Բ. 25:

Խրատական խօսքերը աւելի կարող են ազ-
գել նոցա, երբ որ չար և քարի մարդոց օրի-
նակները մէջ բերուեն, և նոցա ընդհանուր
մարդկութեան կամ մարդկայն ընկերութեան
մէջ վայելոծ յարգանքը կամ անպատու-
թիւնը պարզ կերպով նկարագրուին։

ան Որովհետեւ մարդուտ բարութեան և ա-
ռաքինութեան մէջ հաստատուն պահողը Աս-
տուծոյ Եվլուզ է, վասնորոյ մեր խրատական
խօսակցաթեան մէջ պիտի յիշենք Աստուծոյ
երկիւղը, ահ արկանելով նոցա սրտումը այն
սպառնալիքներով, որ Աստուած կիսօսէ Սուրբ
Գրոյ մէջ չարագործաց համար։ Բայց միան-
գամայն վհատութիւնից պիրկելու գիտաւո-
րութեամբ պիտի կցենք նոյն խօսքերին հետ
նաև Աստուծոյ հարդարի բունիւնը և անհան-
ուչը դէպի մեզաւորները, իբրև սքանչելի օրի-
նակ ներկայացնելով նոցա միածին որդի Յիս-
ոսուս Քրիստոսի աշխարհը գալը և մեր փըր-
կութեան գործը կատարելու համար կրած
չարչարանքը և խաչի մահը, այս օրինակի հետ
քաջալերելով նրանց որ վարքերնին ուղղեն,
և առաքինի կեանք վարելու ձեռնարկեն։

4. Երաւ է, որ մարդոց մանաւանդ չար
մարդոց միոքը այնպէս յամառութեամբ հա-
կուած կլինի դէպի չարութեան կողմը, որ
դժուարութիւն կզգամք նացա համազելու և
ուզզելու, բայց Աստուած խստացերէ մեզ

իր շնորհաց օժանդակութիւնը, երբ որ նոցա
վրկութեան համար ցանկութիւն և բաղձանք
ունենանք:

Միայն թէ հարկաւոր է մեզ այն պարագա-
յի մէջ վստահ կերպով հաւատով և լի յու-
սով Աստուծոյ գիմել աղօթքով:

ՀԱՐՑՄՈՒՆՔ.

1. Բարի մարդոց պէս պարտակա՞ն ենք չարերին էլ
օգնել:

2. Զար մարդոց օդնելու միջոցին ի՞նչ նկատմունք
պիտի ունենանք:

3. Քրիստոնէական հոգին ի՞նչ է ստիպում անել
չարերին:

4. Կա՞ն և ուրիշ պատճառներ ևս չարերին բարիք
անելու մասին, և որո՞նք են:

5. Քանի՞ կերպով կարող ենք օգնել չարերին ի-
րարին դարձնելու համար:

6. Խրատական խօսքերը ի՞նչպէս ասելու է չարե-
րին, որ նոցա վերսց աղդու ներդորժութիւն ունե-
նան:

7. Ի՞նչ է այն՝ որ մարդուս բարութեան կամ ա-
ռաքինութեան մէջ է պահում:

8. Զարութիւնից ի բարին դարձնելու ի՞նչ աղ-
դու օրինակ ունինք:

9. Դիցուք թէ չար մարդու մէկը հիւանդ կամ
խեղճ է. նորա չարութիւնը կարո՞ղ է պատճառ լի-
նել որ բարերարութիւն չանենք:

10. Երբ որ չար մարդուն ի բարին դարձնելու
աշխատենք, կարո՞ղ ենք յուսալ, որ Աստուծած մեզ
կօգնէ:

11. Որո՞նք են այն միջոցները, որով կարող ենք
մարդոց լաւագոյն անել:

12. Բոլոր մարդիկները կարօտ են այս աեսակ
բարերարութեան:



ՅՈՒ. Պ.

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԱՌ ԹՇՆԱՄԻՍ:

1. Մեր քաղաքական կեանքում պատճ-
հում են այնպիսի մարդիկ, որ մեզ վնասներ
են տալիս՝ յատուկ նշանաւում վերաբերե-
լով գէպի մեղ, և մեր անձնականին վերաբե-

բաւթեամբ զանագան լույէինէր հն հնարում
կամ գործում: Օրինակ — մեր լինքը գողանում
կամ յափշտակում են: մեր կենաց դէմ դա-
ւաճանութիւն են անում: մեր համբաւը ա-
րարաւորում են չարութեամբ և զանազան
բարուրանքներով, և նո որսոց մենք նշանէ ենք
անուանում:

Սրգ՝ այսպիսեաց մասին բարոյապէս պար-
տակա՞ն ենք արգեօք բարեմիտ լինել: բարիք
յանկալ կամ բարեպաշտական հոգւով նոցա
մասին բարեգործ լինել:

2. Թէպէտ բնութեան օրէնքը և մեր պա-
տուանանաշութիւնը ստիպում է այսպիսի
դէպքերում լույսաց դէմ լույէի: և վաստաց
դէմ լույէին դրսունքն ունենալ: թէպէտ բարո-
յական օրէնքը պարտաւորումէ, ամեն գործ-
քերից որ չարէ, և ամեն մոլութիւնից որ
բառ հոգւոյ և ըստ մարմնոյ վնասէ, հետի
կենալ, և ատել ոչ միայն գործը այլ և գործու-
թը: բայց քրիստոնէական կրօնքը այս մասին
այլ օրէնք է տալիս ամեն և ուրու օրէնքը և
չարեաց վրէժինդիր լինելու փոխանակ պատ-

փրումէ բարիք անել, և բարիքաբառ նեամի ցան-
կալց որ նոքա լինին բարիք այլ և պարտաւո-
րումէ որ բարեպաշտական հոգւով աշխա-
տենք նրանց բարոյական և պարագան մասին:
Այս էայն բարոյական պարտաւորութիւնը,
որի հետ կապում է թէմ մեր կրօնը, և թէ-
նոյն իսկ կրօնի վարդապետ Յիսուս Քրիստո-
փրիկին մեր, այս խօսքերով «ոչը ցես յէջ նըլ-
նամիները, բայի արէն յէջ առաղիներին և աղօնի+
արէն նոցա վերայ, որտնք ձեզ հալածում և յէ-
զունին են տալիս»: Սադուն Ե. 44:

3. Քրիստոնի տուած այս պատուէրը շատ

օգտագործիար հետեւութիւններունիք, որոնց մի

քանիմար այստեղ յիշենք: Այսպէս կարուի առաջ

ցանցանարդունքն կնուածելով: Բ. Նոցա աշր
ցաւցանելով՝ խոսվութիւնը կգտդրեցնենք: Գ.
Նոցա չարեացը բարիք և փոխորինելով՝ նոցա
օրտի կրտացնենք և կհանդարտեցնենք, և այդ
նոցա վերայ աղօնի անելով՝ վրէժինդրութիւ-
նից աւելի նոցա վերայ յաջմանակ կկանգնենք:

4. Ամենիս յայտնի է որ ամեն տեսակ խը

ռովութիւն և յարիք աւելի է սաստկանում չէ ժենուարի լնելը, և հանդարտումէ հեղունչն և խոնարհունիւն ցոյց տալով, որոնց վերայ մտածելով լաւ կարող ենք իմանալ մէ, որքան ազնիւ և գերազանց է մեր փրկչի արւած պատուէրները և աւանդած վարդապետութիւնը:

Այս մասին և Առաքեալը իբրև իր անձին վերայ փորձ առած պատուիրումէ «ԵՇԻ+» ՌՀՀ-նամին +ազգաց է՝ հաց առողջ նրան։ Այս ոց ժամանել՝ ջարդ առողջ նորան։ Համար ԺԲ. 20։

Թէ Առաքեալի և թէ մեր փրկչի պատուէրի նպատակն է որ առ թշնամիս բարեսրտ լնեն+, և վրէժինդիր լինելու փոխարէն՝ բարեպաշտութեամբ նոցա բարին ցանկան+։

5. Սակայն այս պատուէրիցը պիտի չլամանք, որ ընկերին վնաս առողջներին և մեր անձին դաւադրունիւն անողին պատժելու յարմարաւոր մշշցներ գործածելու չենք. այս ինչպէս հրդեհի աւաշն առնելու համար միջոցներ են հնարած, որ պատահելու ժամանակ հասարակաց ինչքը ապահովելու կամ

փրկելու մասին ձեռք են առնում գործադրել. այսպէս եթէ չարիքը կամ թշնամու վնասը հասարակաց է վերաբերում, կամ յատուկ մեզ՝ նիւթականապէս, անմիջապէս առաջն առնելուն հարկաւոր է հոգ տանել, այն մոօք միայն, որ չար թշնամին իր չարութեան ընթացքը չշարունակէ։ Ա. Կայն. Ե. 13։

6. Չարագործաց ուղղութեան համար սահմանած են բանապէջ, որ չարագործների բարոյական ուղղութեան դպրոցներն են։ Բայց այս դէպքում հարկաւոր չէ, որ վրէժինդրութեամբ վարդենք նոցա հետ. այլ ճարդանիւններ և կարգեցներ, և մարդկութեան պահանջմունքին համեմատ ինամբ պիտի տանենք, թէ նոցա հարկաւոր պէտքերը, այս է ուղելիցը և հագուստը հոգալով, և եթէ նոցա ընտանեաց, թէ որ կարօտ վիճակի մէջ են, նոցա օրական կեանքը ապահովելով։ Այսպիսի բարեսրտութեամբ մեր բարեպաշտութիւնը գործադրելով, թէ Քրիստոսի փրկչին մերոյ պատուէրը գործադրած կլինենք. և եթէ նոցա ապագոյի մասին ճարդանիւնը չա-ցունինը կը տիտանեն։

7. Համտերը բարոյական մոօք առնելով
մեզ համար շատ յարգելի տեղեր համարելու
ենք, նախ այս մոօք՝ որ հազարաւոր չարա-
գործ անձանց գգառառութիւն կուտան և չա-
րագործութիւնը իր ժամանակաւոր պատիժը
ընդունելով, ու թշներուն խրատ և զգանա
կւանել լուրջ-կապարաւորեն:

Երկրորդ՝ որ բարեսրտութեամբ թիւքաւոր
անձինք հոգեկան և մարմնական կարուսափց
կփրկենք: Այսուհետեւ մասնաւոր և մասնական
եւ երրորդ՝ հասարակութեան խաղաղութիւ-
նը վրգուող վտանգաւոր և չարագործ անձանց
կը նաշան են լինում: Վասնորոյ և աւելի ուշա-
գրաւթիւն դարձնել հարկաւոր է թէ այն շի-
նութիւնները կանգուն պահելու և թէ մարդ-
կութեան բարոյական և քնական դժհոնցներն
յարմարեցնելու պատ ու ան ըստանու ար-
և արդիւնակ զան նաև արդիւնակ դաշտաւ և
նույնական է նույնական դաշտաւ ու ան-
գույն ծագրածզոր զան նաև արդիւնակ ան-
- 1. Մեկն երբ որ ասումնք վնասակար մօրդ է
նրանով ի՞նչ ենք կամենում համկացնել:

2. Վնասակար մարդոց գործքերի վերայ ի՞նչ բա-
րոյական զգացմունք պիտի ունենանք ու առա-
3. Ի՞նչ զգացմունք պիտի աւնենանք պյն մարդոց վե-
րայ որ թշնամարար մեզ վնասներ են տալիս:
4. Ի՞նչ կերպ վարուելու է նոցա հեա:
5. Բնութեան և պատուաճանաւոթեան օրէնքը
ի՞նչ է պահանջում: և քրիստոնէութեան օրէնքը
ի՞նչ:
6. Ասա այն հետեւութիւնները որ Քրիստոսի
փրկչն մերոյ պատուերը հետեցնում է:
7. Էնչո՞ւ վրէժինգրութիւն պիտի չանենք վնա-
սակար թշնամնուն:

ՅՈՒ. Պ.

1. Մենք տեսանք որ Աստուած իր վեց-
օրեայ արարչութեան գործք աւարտելու ցյե-
տոյ, եօթներորդ օրը հանգիստ առաւ: և այն
օրը օրհնութեամբ սրբելով նորդոյ և անառնոց
հանգույնեան օր որոշեց: ուժամտոյ ուրի բնի ազգը

Այլ և իր օրէնքները տուած միջացին՝ նոյն
աւուր համար յիշեց այս խօսքերով. «Ցիշէ
շաբաթ օրը, որ սուրբ պահես, վեց օր պիտի
աշխատես, ու քո ամեն գործքերդ պիտի կտ-
տարես, բայց եօթներորդ օրը քո տէր Աս-
տուծոյ շաբանն է, այն օրը պիտի շաշտառէս»;
ոչ դու, ոչ «ըրէիտ», ոչ աղջիկ, ոչ արու ծա-
ռայր և ոչ աղախինդ, ոչ եղիտ, ոչ եշտ, և ոչ
բոլը անառառներդ, Ելզ. ի. 8—11:

Այս խօսքերից պարզ երևումէ, որ ինչ-
պէս պարտականութիւնն է համարում մարդու
իր հանգստեան՝ իր կենսական պիտոյից հա-
մար հոգ ունենալ, նոյն պարտականութիւնը
ունենալու է և իր անառառների համար։

2. Ամենաբարին Աստուած անասուններ
ստեղծեց, որ մեր աշխատութեանց աշխատա-
նց և գործառնութեանց գործակից լինին։
Նաև ինչպէս մեզ, նոյնպէս և նոյցա տուա-
զիացաւնն, և ճամաչլոյ զօրութիւն։ որպէս զի
երկրիս վերայ իրենց հաճոյքները վինաւեն,
վայելեն, և զուարձանան։ Զեմ տում։ որ
նոքա մեզ պէս բանական կատարելութիւններ

ունին՝ չարը ու բարին որոշելուչափ, որն որնոցտ
այնքան հարկաւոր չէ. այլ կարողութիւն ունին
տեսածներից իրենց պատրիարքութիւնը հանել, և
անհաճոյ բաներից, իրենց պահաճութիւնը ցոյց
տալ, այլ և զգայուն մարմին լինելով՝ շա-
գալ. աշխատանքի մէջ յօգնելով՝ հանդապա-
նալու պէտք ունենալ, և մարմնոյ ուժը զօ-
րացնելու համար, հարկաւոր սնունդի կարօ-
տել։ Այս ամենը՝ նախախնամութիւնը ստեղ-
ծելու միջացին իրեւ իր ամենաբարի բնու-
թեան պարզեցնոցա տուաւ. միայն նոցա զուրկ
ստեղծեց այն կարողութիւնից, որ բանականը
ունին, այսինքն է իր իրաւաւնելը ճանաչլուց,
որպէս զի առանց գախտինի ծառայեն մեզ։

3. Նա՝ անասունները ստեղծելով մեր իրա-
ւանցը ենթարկեց՝ իրաւունք տալով, որ մեր
կեանքը պահպանելու համոր նոցա ճառչը կե-
րակւունու, և մորթիցը հագուստնելը պատրաս-
տենու. բայց սրա հետ միանգամայն մեր վերայ
պարսք գրաւա որ նոցա վերայ գումն և ինո՞ն
ունենանք։

Նա՝ ձին, էջր, եղը և այլ կենդանիներ մեր

ծառայութեանը նուիրեց, տէրև իշխան կարգելով նոցա վերայ, բայց միանգամայն արդարի բաւանմբ, արգելը դրաւ, որ անիմուայ չգործածենք և լորալու գուաղաւածենք, և հետեւ աքար պարտաւորս թիւն դրաւ, որ ինքէս նրանց մեր պիսայից համար աշխատացնում ենք, նոյն պէս և նրանց չպրկենք իրենց կենաւան պիտուից, Մինչեւ անգամ պրագուիրում է, որ կալի մէջ զծուած կամ աշխատանոլ եղան ցոռակը չկանքնք, ուրեմն որքան անգութ եղած կինքնք, երգոր մեր համոյքը յագեցնելու համար անգմաբար գործ ենք ածում նոյա:

Օրինակ ձին տր խիստ հարկաւոր դէպքերի մէջ կամ մեր կեամքը լուսանգից վրկելու համար միայն իրաւունք ունինք առաջի դաղեցնել, դրօսանքի մէջ ևս մեր հանոյքը գոհ անելու նպատակաւ չարաջար վաղեցնում ենք: Կամ ուրիշ չորքուանիք՝ մէկ մէկի դնունելու չափ մարտնչելու, ենք գրգռում: Կամ հրացանածքութեան մէջ նշան առնելու մաս ոին վարժելու գիտաւորութեամբ: Հրացանի ենք բանում նոյա: Այլ և խոչուներին, որ

Աստուած ազտու օդի մէջ ասլիելու սոհման գրաւ, լոկ մեր գուարճութեան համար որսաւ լոյ վանդակների մէջ ենք բանտարկում: Այս Այս ամենը ընդգէմ աստուածագիր սահմանին գործելով՝ մեր սրտի արդենինը և անգնաւունքը ապացուցանում ենք: Այս Այս Արտկչետև անտառները աստեղծուած են ամսիք, մեզ աշխատավից լինելու և ոմանք էր մեր մարմնոյակէտքերը լինելու ու պատինշահատութեան միջոցին հարկաւոր է, որ նոյա հետ քարտութեամբ և գիտութեամբ վար վինքը պէտք չէ որ ի զուր աշխատեցնելով նոյանց աւելի իրաւունքների մէջ չգենք, կարող ենք և իրաւունքներ էլ ունինք նոյա վերայ բեռն բարձել, կամ մեր ինչքը տեղափոխել նրանցով ուր որ կամենում ենք, բայց ոչ չափից աւելի բեռնաւորելով:

5. Աստուած ամեն բանին յտփ և սահման որոշած է, կւրաքանչիւր կենցանեաց ուժի և կարողութեան մերայ հիմնելու որպէս զի մեր ամեն գործ կատարելու մէջ այս սահմանը պահպանենք: աւելին եթէ անցնենք,

թէ օրինադանց ենտ և լիէ բուհուառը։ Վասնորոյ
և իրաւամբ Աստուծոյ արդարադատութեան
առաջ մեղադաբար։

6. Վերջացնենք մեր խօսքը, որուրդունեան
մասին վորք ինչ խօսելով։

Որսորդութիւնը յիրաւի Աստուծոյ գրած
սահմանը համարելու ենք, որ սուրբ և ան-
սուրբ կենդանիները որոշելով՝ սուրբ համա-
րածներին որսալ և ուտել հրամայածէ։ բայց
իբրև բանական էակներ՝ մեզի թողած է այսո-
ւա ժամանակը արուշը, ուստի հարկաւոր է ուշ
դարձնելու որպէս զի որսորդութիւնը լինի այն
ժամանակ, երբ նոքա ծնունդ չտնին, կամ
ծնածները չափահաս եղած լինին և իրենց
հոգտալու կարող։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. Հայոց առաջարկ
անհամար և պահանջ ու պահանձ նախառնութ

1. Մարդոց պէս անասնոց վերայ ևս բարեսրտու-
թիւն ունենալու ենք, և ի՞նչ են։

2. Ի՞նչ զանազանութիւն գիտե՞ս մարդոց և ա-
նասնոց մէջ։ Անձ միջնորդ գովազարքու պահա

3. Անասնոց վերայ ի՞նչ իրաւունքներ ունենք,
և ի՞նչ պարտքեր։

4. Անասնունները, օրինակ, ձին—կարո՞ղ ենք լոկ
զուարձութեան համար գործ ածել, և ո՞րչափ։

5. Թուչունները մեր կենսական պիտոյից համար
որսալու միջոցին՝ ի՞նչ հանդամանքների մասին պիտի
նկատենք։

6. Թուչունները կամ ուրիշ կենդանիներ որսալը
երբ անմեղ է՝ և երբ դատապարտելի։



իշման դժուգը ուրարտ չմ՞ի սաղի բանամ. Ե
դժուգը ուրարտ կամ պատահ չմ՞ի ա
թա զնի քօպտ—մէճ քամէջո ցղմանուամ. Ք
իսազ և յժեա ծգաք զանշ մամին նցաւոր
զանշ սիլուց մայստունի զնի ցղմանուամ. Ը
խայի միսան դժուգը անտրան չմ՞ի սիլուց և ուրարտ
պանց դմիմարտնի միջու նայ ցղմանուամ. Ը
ուրարտարտար դղմ և Շ քանաք պանց



ՑԱՆԿ

88	Հ Յ Ա Ն Կ
	Տ Յ Ա Ն Կ Ս Ա Խ Ա Գ Ի Մ Ե Լ Բ Ր
	1
	Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
	Գ Լ. Ա Զ Ա Խ Ա Պ Ծ Ձ . Ա . Ք Թ
	3
Յ օ դ . Ա . Բ ա ր ո յ ա գ ի տ ո ւ թ ե ա մ վ ա բ ն չ ո վ մ ի ւ ն ը	10
Յ օ դ . Բ . Բ է ի ն չ պ է ս և խ ա ն գ ա ր վ ո ւ մ բ ա ր ո յ յ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը Պ Ո Ս Յ Ե Ա Զ	20
Յ օ դ . Գ . Ա ր բ ը բ ա ր ո յ ա կ ա ն ո ւ զ զ ո ւ թ ե ա մ բ պ ա հ ե լ ո ւ և խ ա ն գ ա ր վ ո ւ մ բ ա ր ո յ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը ո ւ զ զ ե լ ո ւ կ ե ր պ ը	29
58	Դ պ ա կ բ ա ր ո յ ա մ ո ւ թ ի ւ ն ը Ա . Ա . Ք Թ
Յ օ դ . Ա . Բ ա ր ո յ ա կ ա ն գ ո ր ծ ք ե լ ը և ն ո ց ա մ	32
Յ օ դ . Հ ե տ ե ս ո ւ թ ի ւ ն ն ե ր ը	33
Յ օ դ . Բ . Բ է մ ա ր դ կ ա յ ի ն գ ո ր ծ ք ե լ ի ց ո ր ո ն ք ե ն ն	43
Յ օ դ . Գ . Բ ա ր ո յ ա կ ա ն հ ա մ ա ր վ ո ւ մ ո յ ա ր ա ն ի մ ք	47
Բ ի ւ ն	Պ Ո Ս Յ Ե Ա Զ Ա Զ
Գ Լ . Գ .	
Յ օ դ . Ա . Խ ի ղ ձ և ն ո ր ա ն ե ր գ ո ր ծ ո ւ թ ի ւ ն ը	
Յ օ դ . Բ . Բ է խ ի ղ ձ ը ի ն չ պ է ս կ ը զ ո ր ա ն ա յ կ ա մ բ ն չ պ է ս կ տ կ ա ր ա ն ա յ	

ԲԳԼ. Ա Յ

Երջանկութիւնը թէ ինչ է	58
 ԳԼ. Ա.	
Սուրբ գիրք Ք մատուցածաւ	68
Յօդ. Ա. Հին Կտակարան	69
Յ « Բանակարան առաջարկած Ա	73
-ուայ Արքայացած է սեպական քահ Ա	
01 Բ. ԲԱԺԱՆՄՈՒԻՆՔ առաջարկած պահելողը ու մաժարդայ զըրա Ա	73
-ուայ Արքայացած է աղքածար	
02 Յաղթ աշխար զըրի Ա	
Յօդ. Ա. Առ Աստուած պարտուց վերայ	80
Յօդ. Բ. Աստուածսիրութիւն կամ Աստուած պաշտութիւն	80
03 Բ. Աղօթք զըմմարդաւան Ա	88
Յօդ. Գ. Կիւրակէ օր Աստուածպաշտութեան	107
-ուայաւայ և զըրա մաժարդայ Ա	
04 Գ. ԲԱԺԱՆՄՈՒԻՆՔ մայն Ա	
 ԳԼ. Ա.	
Ընթելուծողը աղք և նյութ	80
Պարտիք մարդոյ առ մարդն կամ ընկերա- սիրութիւն	114

Յօդ. Ա. Թէ ինչ է իրաւանց պարտիքը	114
Բ. Պարտիք և իրաւունք ծնողաց առ որ?	
102 դիս սվասցի ու մայնուրացարձագ	123
702 Գ. Իրաւունք ծնողաց	131
« Դ. Պարտականութիւն և իրաւունք որդ- ւոց առ ծնողս	137

ԳԼ. Բ.

Յօդ. Ա. Մանուկների անձնական ազատու- թեան վերայ թէ ինչպէս գործածե- լու են	145
--	-----

ԳԼ. Գ.

Անձնական հանգամանք կամ ազատու- թիւն	149
Յօդ. Ա. Ճշմարտախօսութիւն	150
» Բ. Խօսակցութիւն	152
» Գ. Խոստմունք	157

ԳԼ. Դ.

Անուն կամ համբաւ	162
----------------------------	-----

Դ. ԲԱԺԱՆՄՈՒԻՆՔ

ԳԼ. Ա.	
Յօդ. Ա. Բարեպաշտութիւն	172

Դ

- Յօդ. Բ. Բարեպաշտութիւն առ կարօտեալս 186
“ Գ. Բարեպաշտութիւն առ չարս 194
ՀՀ Դ. Բարեպաշտութիւն առ թշնամիս 201
ԼՇ Ե. Բարեսրտութիւն առ անապունս 207
- բար-զմառայի և Ընդհանուրաժամանակ Պ.
ՆՅ սրուճ առ ըստ

Պ. Ա. Ի. Բ.

- առաջա մախամեմա կյամիւրուն Ա. Ա. քօթ
- մծածգոր սմբազմի մԵ լողովի մամի
ԾԱ մմ առ

Պ. Ա. Ի. Բ.

- առաջա մախամեմա կյամիւրուն Ա. Ա. քօթ
ՕՇ մայթի
ՕՇ առաջա մախամեմա կյամիւրուն Ա. Ա. քօթ
ԵՇ մայթի
ԵՇ առաջա մախամեմա կյամիւրուն Ա. Ա. քօթ
ԼՇ մայթի
ԼՇ առաջա մախամեմա կյամիւրուն Ա. Ա. քօթ

Պ. Ա. Ի. Բ.

ԵՇ առաջա նախ մասն Ա

Ք Յ Ո Ս Յ Ա Ր Ա Ր Ա Ր

Ա. Ա. Ի. Բ.

ԵՇ մայթի ոռոցարախար Ա. Ա. քօթ



Glück & 40 long